

ՀԱՅԱՍՏԱՆ

Հրատեղեկատու

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵԱԻ ԱՆՎԱՆ ԳԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ



Տես էջ 12



Համալսարանի անդամագրության փոքրատպեղ խմբակների 5-րդ կուրսի շրջանի կառավարչական ֆունկցիոնալ կրթության շրջանակում կատարվող «Հ. Չիքոսիանի ստեղծագործությունների օրացույց»-ը



Տես էջ 11



Տես էջ 11



Միջազգայն Կոնգրեսի և Կրթիկների Ազգային Քննիչ Ընկերության Փոխոչ Կ. Մարտիկյանի կողմից Միջազգային Կոնգրեսի Կրթիկներին նվիրված հոդված

Տես էջ 3



Տես էջ 3



Տես էջ 3



Տես էջ 19



Տես էջ 21



Տես էջ 53



Տես էջ 53



Տես էջ 53

ՍԺՅՈՒՆՈՐԱԿԱՅ
ԱՐԿԵՏԱՍԳԵՏՆԵՐԻՆ
ՀԱՅՈՅ
ՅԵՂԱՄՍԽԱՆՈՒԹՅԱՆ
95-ՐԴ ՏԱՐՆԵԼՅՈՒՆ



ՆԿԻՐՎՈՒՄ Ե ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃԵԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75 ԱՄՅԱԿԻՆ



ISSN 1829-0019



Մեծ երեւոնի 80-րդ տարեկիցի առթիւ
հասկերգ Lincoln Center-ի Ever Fisher
Hall-ի մէջ



Տնւ էջ 9



Երեւոյնի անփրոսած Բարսեղ Կանաչեանի
Նէա Երրոցիի «Համազգային»-ի
վարչութեան արեւապետը եւ
հանդիսասիրտ Ալբրեկ Եղևարեանը
Գրիգոր Փիլեթեանը կը դասախօսուի

Տնւ էջ 9



Տնւ էջ 53



Տնւ էջ 3,7



Տնւ էջ 51

Հիմնադիր՝
լրատվական գործունեություն իրականացնող
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Վկայական N 03 Ա 059505,
գրանցման փարեքիլը 07.04.2003

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 2(37)2010

Հիմնադրվել է 1998 թվականին

**Գիտապետական, քննադատական - հրատարակատեսակական,
երաժշտական ամսագիր**

**Ամսագիրը ընդգրկված է
ՀՀ ԲՈՒՀ-ի «Արեւմտադարձական արդյունքների փոխադրման
համար ընդունելի ամսագրերի ցուցակում»**

Պատվավոր հիմնադիր փնտրելն՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
պրոֆեսոր
ԱՐՄԵՆ ԲԱԳՐԱՏԻ ՍՄԵԼՅԱՆ

Տնօրեն՝

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
ռեկտոր, պրոֆեսոր՝ **ՍԵՐՊԵՅ ԳԵՆՐԳԻՍԻ ՍԱՐԱԶՅԱՆ**

Հիմնադիր, գլխավոր խմբագիր և հրատարակիչ, երաժշտագետ՝
ԳՈՂՏՐ ԿԱՌԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ

Համարի թողարկման պատասխանատու, պատասխանատու քարտուղար,
դոցենտ՝

ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԹՈՎԱՍՏԱՅԱՆ

Աջակից խորհուրդ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
պրոռեկտորներ՝

**ԱՐԿԱԳԻ ՄԻՔԱՅԵԼԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ,
ՆԱՐԵԿ ՌՈՐԵՐՏԻ ԱՆՏՈՆՅԱՆ**

ԽՍՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Արմեն Սմբարյան (պրոֆեսոր), Սերգեյ Սարաջյան (պրոֆեսոր), Ռոբերտ
Ամիրխանյան (պրոֆեսոր), Նելլի Ավետիսյան (արվեստագիտության
թեկնածու, պրոֆեսոր), Աննա Արեշադյան (արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր), Գևորգ Գյուրջյան (արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր),
Մանուկ Չուրաբյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
Դավիթ Դազարյան (պրոֆեսոր), Էդվարդ Միրզոյան (պրոֆեսոր),
Գոհար Շաղոյան (նախագահ), Լիլիթ Երևանյան (արվեստագիտության
դոկտոր, պրոֆեսոր), Լևոն Չառուչյան (պրոֆեսոր), Կարինե Ջաղացյանյան
(արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր), Մարգարիտ Ռուսիկյան
(արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր), Սվետլանա Սարգսյան
(արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր), Արարիկ Սարգսյան (արվեստագի-
տության թեկնածու, պրոֆեսոր), Հենրիկ Սմբարյան (պրոֆեսոր),
Իրինա Տիգրանյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր),
Ալինա Փահլևանյան (արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր)
Սյրեխան Սուքիասյան (պրոֆեսոր)

Խմբագիրներ՝ Հովհաննես Մուրադյան, Սոֆա Ազնատրյան (ռուս.),
Արմինե Եսայան (անգլ.)

Գեղարվեստական խմբագիր՝ Նունե Սամվելյան
Կազմի ձևավորումը՝ Հարություն Երիջանյանի
Համակարգչային շարվածքը՝ Սուսաննա Դովասյանի

Արտատպումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի գրավոր արտոնու-
թյամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձայն է հեղինակների կարծիքներին կամ
փեսակերպերին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:
Գիտական հոդվածները գրախոսվում են:

**ԳԱՐԵԳԻՆ Բ. ՇԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԵՆ ԱՍՏՈՒՑՈՅ ԵՒ ԿԱՍՏՐՆ
ԱԶԳԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊՏԱՊԵՏ ԵՒ ԿԱՌՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ
ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՏԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՄԻՐԵՅԵԱԼ ՈՐԳԻՆ ՄԵՐ ԵՒ
ՀԱՐԱԶԱՏ ԶԱԿԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ
ԷԶՄԻԱՇՆԻ ՄԵՏԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ
ՓԻՏԵՃԵԱՆ ՈՐ Ի ՆԻՒ ԵՕՐՔ, ԱՄՆ**

Յարգարժան Պրն. Փիտեճեան.

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր
Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր
օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ բարձր գնահատելով
Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և հարազատ
ժողովրդի հանդէպ դրսևորած Ձեր անկեղծ սէրն
ու անմնացող նուիրումը:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում հայ
երգարուեստի ասպարեզում երկար տարիների
Ձեր գործունեութեանը, որը Բարձրեայի օրհնու-
թեամբ արդիւնաւորուած է բազում բարի պտուղ-
ներով: Ձեր ղեկավարած երաժշտական խմբերի
միջոցով Դուք տասնամեակներ շարունակ
Ափիւղքի մեր ժողովրդին մատուցում էք հայ
հոգևոր եւ ազգային երգը՝ երաժշտութեան ներ-
գործութեամբ նրանց հոգիներում զօրացնելով
հաւատն առ Աստուած եւ սէրը առ հայրենի մեր
ժառանգութիւնը:

Գնահատարժան է Ձեր վաստակը նաև ԱՄՆ
Հայոց Արևելեան Թեմի կեանքում: Երկար տարի-
ներ Դուք ղեկավարեցիք Սուրբ Վարդան Մայր
Տաճարի երգչախումբը և դասաւանդեցիք
Սբ.Ներսէս Ընծայարանում՝ Ձեր աւանդը բերելով
հայրորդեաց հոգևոր կեանքի պայծառութեանը:

Մեր ժողովրդին մատուցած Ձեր բազմարդիւն
ժառայութեան եւ երգարուեստի անդաստանում
Ձեր աւանդի բարձր գնահատանքով եւ ընդառաջ
ԱՄՆ Հայոց Արևելեան Թեմի Առաջնորդ, Գերաշ-
նորի Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի
խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով
շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկե-
ղեցոյ **Սուրբ Ներսէս Շնորհալի** պատույ բարձր
շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք նույն խանդավառութե-
ամբ և կորովաշատութեամբ յետայսու ևս պիտի
շարունակէք Ձեր ժառայութիւնը հաւատաւոր մեր
ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղ-
թանքն է, որ Բարձրեայ Տէրը հանապազ զօրավիզ
ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամ-
ներին պարգեւելով քաջատուր երկար կեանք, եր-
ջանկութիւն եւ գործոց մշտանորոգ յաջողութիւն-
ներ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ
Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Սէնք. Ամէն:
Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱՌՈՂԻԿՈՍ**

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ
ԿԸ ՊԱՏՈՒԷ ՏԻԱՐ
ԳՐԻԳՈՐ
ՓԻՏԵՃԵԱՆԸ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետի շնորհած Ս.Ներսէս Շնորհալի շքանշանը, ստացման օրը 2007թ., նոյեմբերի 11-ին Ռուսապոլի Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, (դէս նաև կազմին)

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

Ամերիկահայոց Արեւելեան թեմի Առաջնորդ, Բարձրաշնորհ Տ.Խաժակ Արք. Պարսամեան, որ Կիրակի, 2007 թ-ի նոյեմբեր 11-ին կը պատարագէր Ռուայթ Բլէնզի (Նիւ Եորք) Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս.Պատարագին, եկեղեցոյ հովիւ՝ արժանաշնորհ Տ.Գարեգին Ա. Քինյ. Գասպարեան հանդիսաւոր կերպով կարդալէ ետք Տիար Գրիգոր Փիտեճեանին նուիրում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին սրբատառ Կոնդակը, պատարագիչ Սրբազան Հայրը Վեհափառ Հայրապետին շնորհած Ս.Ներսէս Շնորհալի շքանշանը փոխանցեց Տիար Փիտեճեանին:

Ահա Վեհափառ Հայրապետի սրբատառ Կոնդակէն մեջբերումներ.
- Յարգարժան Պրն. Փիտեճեան, Ձեր ղեկավարած երաժշտական խմբերի միջոցով Դուք, տասնամեակներ շարունակ Սփիւռքի մեր ժողովուրդին մատուցած էք հայ հոգեւոր եւ ազգային երգը՝ երաժշտութեան ներգործութեամբ նրանց հոգիներում գորացնելով հաւատն առ Աստուած եւ սէրը առ հայրենի մեր ժառանգութիւնը:

Մեր ժողովուրդին մատուցած Ձեր բազմադիրն ծառայութեան եւ երգարուեստի անդաստանում Ձեր անդի բարձր գնահատանքով եւ ընդառաջ ԱՄՆ Հայոց Արեւելեան Թէմի Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցոյ Սուրբ Ներսէս Շնորհալի պատույ բարձր շքանշանը:

«Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ գորավիզ ու աջակից լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ»:

Խմբավար, յօրհնող, ուսուցիչ, երաժշտագէտ, գիրքերու հեղինակ Տիար Փիտեճեան, իր շնորհակալական սրտի խօսքը ըսաւ Ս.Պատարագէն յետոյ մեծ ճաշահանդէսի ընթացքին, ուր երախտագիտական շնորհակալութիւնները յայտնելէ յետոյ նախ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.Ամենայն Հայոց Հայրապետին, վերջացուց իր խօսքը հետեւեալ այնքան իմաստալից պատկերով, որ հանդիսացած էր իր կեանքի ուղեցոյց եղող նշանաբաններէն մին:

«Եթէ լուցավառ մոմիս բոցովը ուրիշին մոմը վառեմ, ի՞նչ կը կորսնցնեմ: Բացարձակապէս ոչինչ: Բայց, ուրիշին լոյս տուած կ'ըլլամ»:

Հովիւ եւ Հոգաբարձութիւն Ս.Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցոյ ջերմօրէն կը շնորհաւորեն Տիար Գրիգոր Փիտեճեանը եւ կը մաղթեն անոր քաջառողջութիւն ու արգասատր գործունէութիւն:

ՀՈՎԻԹ ԵՒ Ծ . ԽՈՐՀՈՒՐԳ

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

2008թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին պրն. Գրիգոր Փիթեճեանը գլխավորում էր Հայրենիքում և հրավիրվել էր Ս.Էջմիշածին, որտեղ մեծարվել էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի և պարվելի հոգևորականության կողմից նրա կարարողական, հասարակական և գիտական, մանկավարժական գործունէության համար:

ԱՆՆԱ ՎԱՂԱՐՇԱԿԻ
ԳԵՎՈՐԳՅԱՆ

Երաժշտագետ,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դասախոս

Գրիգոր Փիթեջյան. սիյուռքի անբասիր մրավորականներից մեկը, մոլեռանդ հայրենասեր, անսահման բարի ու ազնիվ մի հոգի, հասարակական գործիչ ու խմբավար, կոմպոզիտոր, անվանի երաժշտագետ և հեղինակ բազմաթիվ հոդվածների ու արժեքավոր աշխատությունների:

Ծնվել է 1935թ-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս): Մանկուց սիրել է երաժշտությունը, դպրոցում սիրած առարկան երգն էր: Երաժշտության ուսուցիչը՝ այժմ ֆրանսաբնակ Կարայիս Ափրիկյանը Գ. Փիթեջյանին ընդունում է «Յառաջադիմաւեր» ակումբի երգչախմբի անդամ և նա առնչվում է հայ ժողովրդական երաժշտության անուշներին: Մայրը՝ Կրիստինա Մարին, որ լավ գիտեր ազգային երգարվեստը, հավատարմացյալ էր և փոքրիկ Գրիգորին հաճախ էր փանդում եկեղեցի և շուրով Գրիգորը կապվում է եկեղեցուն և հոգևոր երաժշտությանը:

«1940-ական թուականներու վերջին և 50-ականներու սկզբին Կարայիս Ափրիկեանի ղեկավարած երգչախումբը կը կատարէր հայկական դասական երաժիշտներու գործերը: Այն շրջանին, երբ Հայաստան Թ.Այթունյանի «Երգ ու Պարի անսամբլ»-ի արտասահմանեան շրջագայութեան շնորհիվ 1959թ-ին հայկական ժողովրդական երգերը տա-



Փոքրիկն Գրիգորը ավագ եղբոր՝ Պողոսի և մոր՝ Մարի Փիտեճեանները, Ալեքսանդրիա, 1937թ.

Հայկական մշակույթի նվիրյալը

րածվեցան Սիջին Արևելքի մէջ, դեռ չէր թափանցած սիյուռքի հայ մշակույթէն ներս: Կար Կոմիտաս, Բ.Կանաչեան, Հ.Պերպերեան, Վ.Սարգսեան և Հայաստանէն ունէինք մի քանի հեղինակներու գործեր, ինչպէս Կարօ Ջաքարեանի, Ռոմանոս Մելիքեանի, բայց ոչ 50-ականներու արթունեանական երաժշտութիւնը: Կ.Ափրիկեանի խումբին մասնակցելով ձևով մը նախաճաշակը առի հայ դասական երաժշտութեան: Երբ տարիքս քիչ մը յառաջացաւ, 16 տարեկանիս զացի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի դպրեմանքը ուսանելու»:

Ընդունվում է դպրեմանք և բախտ է ունեցել աշակերտելու լավագույն ուսուցիչներին՝ Գերենիկ եպիսկոպոս Փոլադեանին, Գարեգին վարդապետ Սարգսեանին (նախ Մեծի Տանն Կիլիկիոյ, իսկ այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոս), Բյուզանդ Եղյանեանին, Շահան Բերբերեանին, Համբարձում Բերբերեանին, Գնէլ վարդապետ Ծէրէճեանին, Սիմոն Սիմոնեանին:

«Պերպերեանին աշակերտեցա, թէև ծանրաբեռնուած էի շատ առարկաներով, սակայն տարօ-

րինակ կերպով կը սիրէի երաժշտական առարկաները՝ նօթագրութիւն, տեսութիւն, հարմոնիա: Ան զգացած էր իմ այդ վերաբերմունքը և կ'ըսէր՝ «Այո, տեղ մը պիտի հասնիս»: Իսկ եկեղեցական երաժշտութեան ուսուցիչս էր հմուտ շարականագետ Գնէլ վրդ. Ծէրէճեան»:

Դպրեմանքը ավարտելուց հետո նշանակվում է Անթիլիասի Մայր փանարի երաժշտագետ, միաժամանակ հաճախում է Բեյրութի պետական կոնսերվատորիան: Այդ ժամանակ Ջարեհ կաթողիկոսը ցանկանում է, որ Գ.Փիթեջյանը դասավանդի դպրեմանքի աշակերտներին:

1962թ-ին, Գ.Փիթեջյանը մեկնում է Նյու Յորք: Մի քանի առարկա է ուսումնասիրում Ջուլիարդի դպրոցում, իսկ 1965-1970 թվականներին հաճախել է Mannes college of music-ը ու ստացել B.S. կոչում մասնագիտանալով խմբավարության ասպարեզում: 1969-70 թվականներին Mannes կոնսերվատորիայի երգչա-խմբի փոխղեկավարի պաշտոնն է զբաղեցնում: Երկար փորձեր դասավանդել է Նյու Յորքի պետական վարժարանում: Իր երաժշ-

ԳԻՄԱՆԿԱՐ

Երաժշտական ԴԱԳՍՍԱՆ 2(37)2010



Գ.Փիտեջյանը նախակրթարանի աշակերտ, Ալեքսանդրիա, Եգիպտոս, 1951թ.



Հայր Փիտեճեան Դպրեվանքի չորրորդ կարգի աշակերտներուն հետ երաժշտութեան պահուն: Իր ձախ ուսին ետին կանգնողը բոլորիս սիրելի, հոգեւոյս Մեսրոպ Արք. Աճեանն է, իսկ աջին՝ Կորյուն Արք. Պապայանը

Երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

րագիտական ուսումը խորացնելու նպատակով հաճախում է Hunter college՝ սրանալով մագիստրոսի կոչում (M.S.): Հետևում է էթնոերաժշտագիտության (ethnomusicology) դասընթացներին, ուսումնասիրելով հնդկական, պարսկական, թուրքական, արաբական, եբրայական և արևմտյան աֆրիկայի ժողովուրդների երաժշտությունը: 1970թ-ին Նյու-Յորքի Սուրբ Վարդան Մայր տաճարում երաժշտապետության է հրավիրվում: Քանի որ այդ տարիներին Հայաստանից քիչ էր պրոֆեսիոնալ երաժիշտների հոսքը դեպի Ամերիկա, Գ.Փիթեջյանը դժվարությամբ գտնում է մի քանի հայ նուրաճանաչ երաժիշտների և իր դպրոցական օտար ընկերներից 12-ի հետ կազմում է Սուրբ Վարդան Մայր տաճարի պրոֆեսիոնալ երգչախումբը: Այդ խմբում էր երգում նաև իր կիևը՝ Գրիգոր Գեորգիան:

«Շուրջ 11 տարի սուրբ Վարդան Մայր տաճարին հոյակապ զկառույցը արդարացնող երաժշտութեամբ ժողովուրդին հոգևոր փափագին հագեցում

կու տալինք: Հեռու տեղերեն կու գալին, որպեսզի բառաձայն բարձրորակ երաժշտութիւն լսեն:

1962թ-ին, երբ Ամերիկա գացի, այնտեղ հանդիպեցայ Միհրան Թումանյանին՝ Կոմիտաս վարդապետի պոլսահայ շրջանի 5 սաներէն մեկուն: Անոր հետ հօր և որդու հարաբերութիւն ստեղծուեցաւ, երբ օր մը իրեն յայտնեցի, որ կ'ուզեմ երգչախումբ կազմել, ան ոգևորուելով ըսաւ. «Ես յուսահատած էի, որովհետև այստեղ խնդիրներ պատահեցան և այլն, դուն, որ կ'ուզես երգչախումբ կազմել, կ'օգնեմ քեզի»: Իր օրհնությամբ երգչախումբը կազմուեցաւ ու իր ալ փափաքով գայն կոչիցինք «Գուսան»: Առաջին համերգէն յետոյ, կը յիշեմ, երբ հաւաքուած էինք եկեղեցւոյ սրահին մէջ, պրն. Թումանյանը ըսաւ. «Ես սազը պատէն վար առի, որովհետև Փիտեճեանը եկաւ շարունակելու թողած գործս»:

Չանագան համերգներով արտասահմանի հայ ժողովուրդը կ'կամրջէինք հայրենիքի հետ: Մանաւանդ այդ օրերուն, 1960-ականներու սկիզբներուն, երբ Հայաստան գալը այնքան ալ հեշտ չէր: Հայրենասիրութեան ոգին, զգացումները վառ պահելու առումով ասիկա անհուն զոհողութեանց կապուած մեծ առաքելութիւն էր իրականութեան մէջ, որովհետև շատ դժուար էր Ամերիկայի մէջ հայկական երգչախումբ պահել: Հոգեկան բաւարարուածութեամբ և սիրով կ'աշխատէի»:

Գ. Փիթեջյանը կանոնավոր աշխատանք ուներ, Սուրբ Վարդան Մայր տաճարի երաժշտապետ էր, նաև պետական վարժարանում 7 րարվա ուսուցիչ, երբ նրան հրավիրեցին Նյու Ջրսի՝ հայ ամենօրյա վարժարանի տնօրենի պաշտոնը ստանձնելու, որովհետև դպրոցը պիտի փակվեր, աշակերտները լքել էին դպրոցը, մնացել էր միայն 23 աշակերտ, նա համաչայնում է. «Ասոր կ'ըսեն ազգային խենթութիւն»,- Գ. Փիթեջյանը թողնում է իր կանոնավոր պետական բարձր վճարով աշխատանքը և ընդունում առաջարկը: «Այդ, կարևոր էր, որովհետև կը փափագէի, որ հայ փոքրիկները հայեցի դաստիարակութիւն ստանային»: Քանի որ աշակերտների ծնողներն արդեն ճանաչում էին Գ. Փիթեջյանին, գիրքին նրա ծավալած ազգային գործունեության մանրամասները, իրենց զավակներին հետ են բերում, դպրոցը փրկվում է և աշակերտների թիւը հասնում է 150-ի:

Վերջին տարիներին Գ. Փիթեջյանի երաժշտության, հայրենասիրական և հեղափոխական երգերի, լարային և փողային նվագախմբերի համար մշակած ելույթները բարձր են գնահատվում հազարավոր ունկնդիրների կողմից:

Գ. Փիթեջյանը սրեղծագործող է, մշակող, դաշնավորող, երաժշտագետ և վերլուծող: Իր սրեղծագործությունների և մշակումների մի մասը կատարվել են Միրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Ֆրանսիայում, Կանադայում, ինչպես նաև ԱՄՆ, Հայաստանում: Նրա երաժշտագիտական խազարանական վերլուծական և պատմաբանա-

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

սիրական աշխատանքներից են՝ “The Chants of the Armenian Church”: «Հայ Յեղափոխական երգերուն րեղըր հայ երաժշտութեան պատմութեան մեջ»: Այս գրքի ծնվելու պատճառը եղավ մի հանդուզն հողված այն մասին, թե հայ հեղափոխական երգերը կարևոր արժեք չեն ներկայացնում. հողվածագիրն անարգում, ծաղրում էր այդ երգերը: Գ. Փիթեջանը գրելում է, որ եկել է պահը այս թե-

մայի շուրջ գիրական պատասխան րալու: Նա հանգամանորեն ներկայացնում է այդ երգերի արժեքը և ընրրում մատուցման այնպիսի լեզու, որ մատչելի լինի ինչպես երաժշտներին, այնպես էլ երաժշտասերներին: Այս գիրքը ժողովրդականություն է վայելում և՛ հայրենիքում, և՛ սփյուռքում:

Քրիստոնեությունը Հայաստանում պերական կրոն հռչակման 1700-ամյակի առթիվ Գ. Փիթեջա-



Անդովկ, Պերճուհի, մեծ մայրը՝ Ռահան Քաջյանը, Գրիգոր Փիտեճեանները ավագ որդի Տաթևը բժշկական “Tafts” համալսարանի շրջանավարտ, 1991թ.



Պերճուհի և Գրիգոր Փիտեճեանները կրտսեր որդու՝ Անդովկը “Fordham” համալսարանի իրավագիտության բաժնի շրջանավարտ, 1995թ.



Փիտեճեանն իր կազմած ժողովրդական երգի-պարի անսամբլի հետ, որն առաջինն էր հիմնադրված Նյու-Յորքում, Սիացյալ Նահանգներում, 1964թ.



նր պատրաստել է «Գրիգոր Նարեկացի շարակա-
նագիր» գիրքը (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,
1999թ.):

«Երբ կ'ուսանեի և կ'ընթերցեի հայկական գր-
քեր, աչքիս հանդիպեցաւ Մանուկ Աբեղյանի 1-ին
հատորում տեղ գտած «Փառք Քրիստոսի ամենա-
զօր յարութեանն» ԴԿ Տէր յետկնից յարութեան շա-
րականը: Աբեղյանը մեկնելով բնագրի բովանդա-
կութենէն կ'ըսէ հավանաբար, ատիկա կը պատկա-
նի Գ.Նարեկացիին: Առանձին պրպտումներ ընելէն
ետք, կը համոզուինք, որ Նարեկացիին այդ, նաև շա-
րականագիր է»:

«Անձինք նուիրեալք» շարականը («Միս»
հրատարակչարուն, Ազգային Առաջնորդարան,
Նյու Յորք, 2003): Այս գիրքը նույնպէս նվիրված է
Քրիստոնէությունը Հայաստանում պետական
կրոն հռչակման 1700-ամյակին, ինչպէս նաև Ս.Էջ-
միածնի մայր տաճարի օծման 1700-ամյակին: Հե-
ղինակը տեղին և անհրաժեշտ է համարել ընթեր-
ցողին ծանոթացնել այս հոգեզմայլ շարականի
պատմությունը, որ ներշնչված է Հռիփսիմեանց
կոչյտերի նահապետությամբ և ներկայացված է
Հռիփսիմե և Գայանէ կոչյտերի այնքան հուզիչ ու
սրտառու պատմությունը:

«Երբ դարեվանքի մէջ կ'ուսանեի, առանձնա-
յատուկ կերպով ուշադրութիւնս գրաւած էր այս շա-
րականը՝ իր կառուցուածքային հարստութեամբ և
գեղեցկութեամբ: 7-րդ դարուն Կոմիտաս Աղձեցի
կաթողիկոսին կողմէ յօրինուած «Անձինք նուիրե-
ալք» շարականը, որ գերազանցապէս գեղեցիկ շա-
րական մըն է, ուզեցի երաժշտագիտական հիմունք-
ներու վրայ կատարուած վերլուծական աշխա-
տանքով մը ներկայացնել զայն մեր ժողովուրդին»:

Հաջորդ գիրքը պիտի լինի «Հայ եկեղեցւոյ
երաժշտութիւնը», որ պատմական ակնարկ մըն է,
թէ՛ գիտաշխատողին, և թէ՛ եկեղեցական երաժշ-
տութեան պատմութեամբ հետաքրքրուողին հա-
մար: Ասիկա լոյս պիտի տեսնէ մի քանի ամիսնե-
րու ընթացքին, Նյու Յորքի Էջմիածնական Թեմի
Առաջնորդարանին կողմէ»:

Որպէս երաժշտական աշխատանք, 2 տարի
առաջ Գ.Փիթեշյանը պատրաստել է խրատային՝
նվիրված մեծ Եղեռնի հիշատակին:

Արդէն 5 տարի է, ինչ պարուն Փիթեշյանն իր
տիկնոջ՝ Պերճուհի Փիթեշյանի հետ աշնան առա-
ջին ամիսներին գալիս են Հայաստան: Թեև Գ.Փի-
թեշյանը աշխատանքային հանգուտի է կոչված,
բայց չի դադարում գիտական ուսումնասիրություն-
ներ կատարել: Յուրաքանչյուր այցելութեան ժա-
մանակ մտադրված ծրագիր է եղել, այս անգամ ևս
բացառություն չի կազմում. պարուն Փիթեշյանն իր
առաջիկա գրքի համար նյութեր է հավաքում՝ այն է
«Կարա Սուրբայի կյանքն ու գործունէությունը»:

Գրիգոր և Պերճուհի Փիթեշյաններն ունեն 2
որդի՝ Տաթևը և Անդրվիկը: Դաստիարակված են
ազգային ոգով, զորացած ազգային գիտակցու-
թյամբ և իրենք էլ իրենց հերթին այդ ոգին փոխան-
ցել են իրենց զավակներին: Ավագ որդին՝ Տաթևը
(բժիշկ) և կինը՝ Ջինի Մինասյանն ունեն 3 զավակ՝

մեկ դուստր և 2 ուսուր: Կրտսեր որդին՝ Անդրվիկը
(փաստաբան) և կինը՝ Անի Հաջյանը ունեն երկու
որդի: Թոռներս գիտեն, որ հայկական երգ մը կայ,
երաժշտութիւն, պատմութիւն և ուր ալ որ երթան
հպարտութեամբ ոտքի կ'ելլեն ու «Մեր հայրենիքը»
կ'երգեն: Սերունդներ դաստիարակեցի և հայրենի-
քը ամէն բանէն վեր դասելու միտքը տուի, աշա-
կերտներս ալ նույնպէս երախտապարտ են և կը գ-
նահատեն իմ այդ նուիրումով տարած աշխա-
տանքս: Անոնց մէջէն պիտի առանձնացնեմ ամե-
նէն արժեքավորը, հայրենասէրը, ժողովուրդի եզա-
կի գաւակը հանդիսացող հանգուցեալ Մետրոպ ա-
րքեպիսկոպոս Աշճեանը: Միւս աշակերտներն ալ
զանազան տեղեր ազգային երաժշտութեան մէջ օգ-
տակար եղան: Իրենց ծառայութիւնը բերին ազգին
եկեղեցւոյ միջոցաւ: Ի վերջոյ ի՞նչն է մարդս ար-
ժեւորողը կամ մարդուս նպատակ հետապնդելու
ճիգը, որ մարդս կը մղէ իր լուսագույնը տալու: Եթէ
ժողովուրդին ծառայել մը կայ, ես ընտրել եմ այդ
ուղին՝ կը ծառայեմ: Կը ծառայեմ այն մտածումով,
որ եթէ կրնամ որևէ տեղեկութիւն մը, ծանօթութիւն
մը, գիտութիւն մը տալ դիմացինիս, անիկա ինձի
համար մեծ գոհունակութիւն տուած կ'ըլլայ: Կեան-
քիս մէջ միշտ ունեցած եմ պարզ օրինակ մը. եթէ
ես, վառած մոմէս դիմացինիս մոմը վառեմ ինչ
կորսնցուցած կըլլամ՝ ոչինչ, բայց դիմացինիս լույս
տուած կ'ըլլամ: Սա է եղած կյանքիս բնաբանը և
խորապէս հաւատալով ասոր, կեանքս կ'իմաստա-
որուի»:

(տե՛ս կազմին)



Պերճուհի
Փիտճեանը
երգեցողութեան
պահին,
Նյու-Յորք, 1963թ.

Երաժշտական ԴԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

**ԱՆԱԳԻՏ ԳՈՎՅԱՆՆԵՍԻ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

*Արվեստագիտության քեկնածու,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ*

Հայոց ազատագրական պայքարն ընդդեմ թուրքական լծի՝ Արևմտյան Հայաստանում, 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին, արտացոլվել է բազմաթիվ ժողովրդական և հեղինակային երգերում: Վերջիններս, լինելով այդ պայքարի յուրօրինակ գեղարվեստական փարեգրությունը, փարբեր անվանումներով՝ ազատագրական, հեղափոխական, հայրուկային, ֆիդայական երգեր են և այլն: Դրանք կազմում են հայ ազգային-հայրենասիրական բազմաթուվանդակ և բազմաբնույթ երաժշտության հարվածներից մեկը, սիրված և փարածված հայկական միջավայրում: Բազմիցս հրատարակվել են չայնագրյալ և ոչ չայնագրյալ ժողովածուներում,



Ռոբերտ Ամիրխանյանը հանձնում է ՀՀ կոմպոզիտորների և երաժշտագետների միության անդամության վկայականը հայրենամովեր երաժշտագետին

**Գ.Փիտեճեանի «Հայ յեղափոխական երգերուն տեղը
հայ երաժշտութեան պատմութեան մէջ» գիրքը**

դիտարկվել են, մասամբ նաև երաժշտագետների կողմից, սակայն, հիմնականում բովանդակային այլ ուղղվածության երգերի շարքում:

Ամերիկաբնակ երաժիշտ խմբավար, երաժշտագետ, կոմպոզիտոր, Սիիյուքում և Հայրենիքում իր ազգանվեր գործունեությամբ ճանաչված Գրիգոր Փիթեճյանի «Հայ յեղափոխական երգերուն տեղը հայ երաժշտութեան պատմութեան մէջ» խորագրով գիրքը (Նիւ Եորք, 1998), որի շրջանակներում ներդաշնակորեն միահյուսված են չայնագրյալ ժողովածուն և գիտական հետազոտությունը, առանձնահարուկ նշանակություն ունի: Առաջին անգամ հայ հեղափոխական չայնագրյալ երգերը հավաք

ներկայացվում են առանձին հրատարակությամբ: Դրա հետ մեկտեղ առաջին անգամ հայ հեղափոխական երգին նվիրվում է հարուկ երաժշտագիտական հետազոտություն:

Գրքում ընդգրկված են ոչ միայն փարբեր հին ու նոր ժողովածուներից քաղված հեղափոխական երգեր, այլև հեղինակի նուրագրած նմուշները, որ առանձնակի հետաքրքրություն է առաջացնում այս հավաքածուի նկարմամբ: Հարկապես նշելի է նաև, որ հին երգերի կողքին գրքում տեղ են գտել, թերևս առաջին անգամ հայ երաժշտագիտության մեջ, արցախյան ազատամարտի օրերին ծնված մի շարք երգեր: Չեղեղված են դրանց միայն բանաստեղծա-

ԳՐԱՆՍՈՒԹՅՈՒՆ



Շ ն ո թ հ ա ն ղ ե ն մ ե ծ ար ու մ ը
Հ ա յ աս տ ա ն ի Ա զ գ ա յ ի ն
գ ռ ա դ ար ա ն ու մ, տ մ օ թ ե ն՝
Դ.Մ.Սարգսյանը և
Գ.Պ.Փիթեճյանը

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

կան Կրեմլի տերերը: Արցախյան երգերը դեռևս չեն մտնում հայ երաժշտագիտության շրջանառության մեջ, այնինչ այդ երգերի հավաքագրման, դասակարգման և մանրակրկիտ ուսումնասիրության անհրաժեշտությունը վաղուց արդեն հասունացել է, ավելին, ըստ պարոն Գրիգոր Փիթեճյանի ճշմարտացի պնդման՝ անհերքելի հարց է հայ երաժշտագետների համար (էջ 127):

Գրքում բերված է ոչ միայն ավանդական (միաշայն) երաժշտական նյութը (գրքի Ա մաս), գրքի Բ մասը փաստորեն հայ ազգային-հայրենասիրական, ընդհանուր առմամբ, և մասնավորապես, հեղափոխական երգերի, այդ թվում նաև Ա մասի երգերի որոշ հարվածի բազմաշայն մշակումների ընկերակցություն է: Մ.Եկմալյանի, Վ.Սարգսյանի, Կոմիտաս վարդապետի, Գ.Կառվարենցի և իր իսկ՝ Փիթեճյանի հեղինակությանը: Դրանք են՝ խմբերգեր առանց նվագակցության, դաշնամուրային նվագակցությամբ, երգեր չայնի և դաշնամուրի համար:

Ուշագրավ է Փիթեճյան երաժշտագետի հետազոտական սկզբունքը: Հեղափոխական երգերը ենթարկվում են բազմակողմանի վերլուծության թե՛ երաժշտական չափորոշիչների տեսանկյունից՝ մեղեդու ձևը, շայնակարգը, կշռության կաղապարը և այլն, թե՛ ըստ բովանդակության, հերոսների, ծագումնաբանության: Փորձ է արվում լուծել որոշ երգերի չարագրանված հեղինակության խնդիրը: Հարկապես հետաքրքիր և նշելի է հայ հեղափոխական երգի պարունակական պարբերացումը: «ա) 1850 Էն մինչև 1918 (հին երգեր), թ) 1965 Էն ցարդ (նոր երգեր)» (էջ 17):

Գ. Փիթեճյանի գիրքը ծանրակշիռ ներդրում է հայ ազգային-հայրենասիրական երաժշտության մեծածավալ, բազմախնդիր և քիչ լուսաբանված անդասարանի մեջ: Միաժամանակ, սա մեր հայրենակցի և գործընկերոջ արժանի, իր իսկ խոսքերով՝ «դասինեաց պասկն է», որ պետք է «զարդարէ Հայրենիքի ազատութեան ու անկախութեան ճամբուն

գոնուած քաջ ու ազնիւ հոգիները, եւ յաւեր կենդանի պահէ անոնց խնկելի յիշատակը» (էջ 6):

Գ. Փիթեճյանի անդրադարձը եկեղեցական երաժշտութեանն իր հաջորդ՝ «Անձինք նուիրեալք» շարականը խորագրով գրքում (Նիւ Եորք, 2003), կարծում ենք, պարահասկան չէ, այլ արտահայտում է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության Գլխավանքի «ազգային եւ կրօնական աստուծոյններով յագեցած հարուստ մթնոլորտի մը մէջ» (էջ 153) ուսանած և մեծացած հայորդու խոնարհումը ազգային երաժշտության վեհաշուք գանձարանի առաջ:

Գիրքն այն սակավաթիվ օրինակներից է, երբ մի ամբողջ գիրական հետազոտություն նվիրվում է ընդամենը մեկ երգի: Գրքի «հերոսը» միջնադարյան հանճարեղ բանաստեղծ-երաժիշտ Կոմիտաս Ա Աղցեցի հայրապետի հոյակերպ կոթողը, նվիրված ս. Հռիփսիմյանց կույսերի հիշատակին, քննության է առնվում այդ կոթողը «ծնած և սնած» հայ միջնադարյան երաժշտության գրեթե բոլոր բաղկացուցիչների տեսանկյունից՝ կանոն կամ կարգ, շայնեղանակային համակարգ, խազագրություն: Գործի են դրված նաև շայնակարգային, կշռության վերլուծության սկզբունքները: Համեմատվում են շարականի հայրենի մեղեդիական տարբերակները: Ուշագրավ է, որ վերլուծվում է շարականի ոչ միայն երաժշտությունը, այլև մյուս բաղադրիչը՝ բանաստեղծությունը, նաև այս երկուսի անքակտելի կապն արտացոլող տարաչափական հենքը:

Գրքում առանձին բովանդակալից ակնարկներ են նվիրված Կոմիտաս Ա Աղցեցու կյանքին և գործունեությանը, Հռիփսիմյանց կույսերի վարքագրությանը, հայ միջնադարյան երաժշտությանը և այլն:

Գիրքն ընթերցվում է հետաքրքրությամբ, ընկալվում որպես «Անձինք նուիրեալք» շարականի հայ միջնադարյան գլուխգործոցի յուրօրինակ հանրագիրարան:

(Կեն կազմին)

երաժշտական ԴԱԳԱՍՏԱՆ 2(37)2010



Ա.Հ.Բաղդասարյանի ղեկուցումը Գ.Պ.Փիթեճյանի մեծարժան հանդիսությանը Հայաստանի Ազգային գրադարանում

8



Գ.Պ.Փիթեճյանը և Տ.Անուշավան Եպս. Ժամկոչյանը Հայաստանի Ազգային գրադարանում

ՄՅԵՐ ՈԱՖԱՅԵԼԻ
ՆԱՎՈՅԱՆ

Արվեստագիտության քեկնածու,
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտը



Տ.Անուշավան Եպս. Ժամկոչյան, Տ.Ներսես Աբր.Պոզապայան
(այժմ վախճանված), (...) ԵՊԿ դոցենտ Միտր Նավոյան,
ԵՊԿ պրոֆեսոր Աննա Բարսամյան

Գ. Փիթեջանի գիրքը վերնագրված է հարցականով: Ոչ պարմական աղբյուրները, ո՛չ էլ շարականագիրների միջնադարյան ցուցակները Ս.Գրիգոր Նարեկացուն որպես շարականագիր չեն հիշարակում: Հարության ԳԿ Տեր հերկնիցը նրա գրչին վերագրելու

ԳՐԻԳՈՐ ՓԻԹԵՃԵԱՆԻ

«Գրիգոր Նարեկացին՝ շարականագիր»

(Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 1999)

հարցը տարբեր տեսանկյունից բարձրացվել է անցյալ դարի երկրորդ կեսին ակադ. Մ.Աբեղյանի, ակադ. Գ.Աբգարյանի կողմից: Հայ երաժշտագիտության մեջ խնդիրը հիմնավոր քննարկման է ենթարկել Ն.Թահմիզյանը:

Հայրնի է, որ Հարության կարգերի շարականները հիմնականում վերագրվել են Ս.Մովսես որենացուն, Անանիա Ծիրակացուն, Սյրեփանոս Սյունեցուն: Սակայն, հիշյալ շարականի և վարահաբար Ս.Գրիգոր Նարեկացու գրչին պատկանող Հարության «Մայլն այն իջաներ» տաղի միջև մեծ հարազատության առկայությունը հիմք հանդիսացավ այս շարականը ևս հայկական միջնադարի աներկրայելի հանճարին վերագրելու համար:

Հեղինակն իր խնդիրը տեսել է Ս.Գրիգոր Նարեկացու նշված տաղի և Հարության խնդրո առարկա շարականի առնչակցության հարցը լուսաբանելու մեջ, ինչը որպես գիտական հետաքրքրության հանգույց չեականացվել է դեռևս Ն.Թահմիզյանի կողմից: Մասնավորաբար՝ տաղի և շարականի մեկը մյուսին կից երգվելու, գրչագրերում հարակցված արտացոլվելու կամ էլ մեկը մյուսի մասը կազմելու հարցը պարզելը, դրանց չեական փոխառնությունները քննելը Գ. Փիթեջանը դրել է իր գրքի հիմքում. «Ու այս աշխատանքովս ճիշդ այդ պիտի ընեն» (նշվ. աշխ., էջ 19):

Իր խնդրին հետամուտը՝ գրքի հեղինակը աշխատել է բոլոր հնարավոր աղբյուրների հետ, դիտարկել թե՛ Հարության տաղը, թե՛ շարականը: Ավելին, որոշ ոճական տարրեր պարզելու նպատակով

անդրադարձել է դեռևս անցյալ դարի սկզբին Գարեգին վրդ. Հովսեփյանի (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս) հրատարակած այլ տաղերի ևս:

Վերլուծությունները կատարվել են տարբեր մակարդակների վրա՝ բանաստեղծական տեքստի և երաժշտության համաշայնեցման, կառուցվածքաբանական, ձևի, չայնեղանակային և նույնիսկ որոշ խազաբանական դիտարկումներ կատարելով:

Գ. Փիթեջանի այս աշխատանքը գալիս է լրացնելու խնդրի վերաբերյալ ստեղծված գրականությունը: Իրեն հետաքրքրող առանցքի շուրջ գիտական բարեխղճությամբ ի մի բերված հայեցակետերն ու փաստական նյութը կատարված մանրակրկիտ աշխատանքը, անշուշտ, նպաստելու է Ս.Գրիգոր Նարեկացու ժառանգության հետագա ուսումնասիրման գործին:



Գ.Փիթեջանի գրքերի Շնորհանդեսը Հայաստանի Ազգային գրադարանում

ԳՐԱՆՍՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

ՄԱՆՈՒԿ ԹՈՐՈՍԻ
ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Արվեստագիտության քեկնածու,
Երևանի Խ.Աբովյանի անվ. պետական
մանկավարժական համալսարանի պրոֆեսոր**

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

2008 թվականի հոկտեմբերին Երևանում էր սիյուռքահայ նշանավոր երաժշտական գործիչ Գրիգոր (ավագանի անունով Հակոբ) Փիլեդանը: Վերջերս լույս տեսած նրա աշխատությունն է՝ «Անձինք Նուիրեալք Շարականը» (2003 Նյու-Յորք):

Ուշագրավ է, որ իր ուսումնասիրություններում Գ. Փիլեդանը, որպես սկզբունքային կանոն, թեմայի հետ առնչվող հարցերին նախապես մոտենում է լայն դիրարկմամբ ու միայն դրանից հետո, աստիճանաբար մտքերը, փաստերը, եզրակացությունները հավաքում բուն թեմայի կիզակետում: Այսպես՝ իր «Անձինք Նուիրեալք Շարականը» աշխատության մեջ, որպեսզի հասնի այդ հոյակապ Շարականի ներկայացմանը, նախապես բերում է Հռիփսիմեան և Գայանեան սուրբ կույսերի մասին մեզ հասած

լուծելով նյութը:

Գ. Փիլեդանը, հենվելով հայ երաժշտական արվեստի այս ասպարեզի վաստակաշար գործիչներ՝ Համբարձում Լիմոնճյանի, Եղիա Տևրեսյանի, Նիկողայոս Թաշճյանի, Կոմիտաս վարդապետի, Ռոբերտ Աբայանի և Նիկողոս Թահմիզյանի շեքքերումների վրա, նրանցից մեջբերումներ է անում, նշում նրանց եզրակացություններն ու վերծանումները և այդ բոլորը ընդհանրացնելով բացահայտում է ուսումնասիրված երաժշտական կոթողի բազմակողմանի արժանիքները:

Բայց նյութի ուսումնասիրման և վերլուծման գործը ինքնակապարակ չէ: Աշխատության վերջում, մի սրվար բաժնում Գ. Փիլեդանը ներկայացնում է ինդրո առարկա Շարականի փարբեր վերծանումները, որոնք կարարել են իր և իրեն նախորդող մասնագետները հայկական (Հ.Լիմոնճյան) կամ եվրոպական նուրագրությամբ:

Այսպիսով, դարերի խորքից եկող այդ հոյակապ նյութը XIX դարում սկսելով իր նոր փայլարակումը, հասնում է մինչև մեր օրերը ու կրկին ներշնչանքի ու հոգևոր և գեղագիտական ներգործության

«ԱՆՃԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ ՇԱՐԱԿԱՆՆԸ» ԳԻՐՔԸ

ավանդույթը, ապա նկարագրում Կոմիտաս Ախցեցի կաթողիկոսի հովվապետական, շինարարական, սրեղծագործական գործունեությունը: Եվ միայն դրանից հետո անցնում է իր ուսումնասիրության բուն նյութին՝ Շարականին: Սակայն այստեղ էլ Գ. Փիլեդանը հավաքարբիմ մնալով հենվից մոտենալու իր մեթոդական սկզբունքին, նյութը դիրարկում է զանազան տեսանկյուններից, այն փրոտելով մի քանի ավարտուն բաժինների՝ «Շարականը որպես «Սրբազան երգարվեստ», «Անձինք Նուիրեալք Շարականը», «Գրական գոհարը», «Դի չայներու հարկանիչները», «Տաղաչափության և կշռության փոխհարաբերությունները» և այլ նման ենթավերնագրերի, հակիրճ ու հարակ ներկայացնելով և վեր-

մի նոր ուժով ծառայում ազգի ներկա և գալիք օրերին:

Չարմանալի երևույթ է, հրաշք է, որ դաժան ակարագրի բերումով, մայր հողից կտրված, արմարախիլ արված ու միայն ժառանգականության հարարեման շնորհիվ սիյուռքում, Ամերիկայի Միացյալ Նահագներում, գուցե շրջապարտող միջավայրի խայրաբղետությամբ ամենամարբենապար քվացող պայմաններում, դարերի խորքից եկող հայ մշակույթի անզնահարելի արժեքները ոչ միայն վերապրում, հարարեում են, այլև զարգանում, արդիականանում, բազմաչայն իմբերգային գործեր դարչած գնում են ապագային ընդառաջ:

(տես կազմին)

Երաժշտական ԴԱԳԱՍՏԱՆ 2(37)2010



Գ.Մ.Սարգսյանի ողջույնը շնորհանդեսին Հյուրեր՝ Վ.Սանթրյան, Ռ.Ամիրխանյան

**ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱԶԻԿԻ
ԹՈՎՄԱՍՅԱՆ**

Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ

«**Ե**րաժշտական Հայաստան» ամսագրի ընթերցողներին արդեն բազմիցս ներկայացրել ենք օտար ափերում բնակվող և գործող մեր այն հայրենակիցներին ու ազգակիցներին, ովքեր զբաղվում են հայ երաժշտության բազմազան խնդիրներով, փարածման գործով, ինչու չէ՞ նաև այդ երաժշտության կատարման և հետազոտման աշխատանքներ

Ասործո, այսօր մայր հայրենիքում եք և մեր հյուրն եք:

Ըսեմ անմիջապես որ, Եգիպտոս, Ալեքսանդրիա քաղաքի մեջ ծնած եմ, նախնական ուսումն առած եմ տեղվույն Պողոսյան վարժարանին մեջ, ուր իմ երաժշտության ուսուցիչս է եղած Կարպիս Ափրիկյան, որ այժմ ֆրանսաբնակ երաժիշտ է, տակավին կգործեն:

Մտեսարոն Կարպիս Ափրիկյանը Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու «Միսիան Կոմիտաս» երգչախմբի ղեկավարն էր երկար տարիներ և անչափ մեծ գործ է կատարել խմբերգային արվեստի փարածման ու զարգացման գործում:

Այո, ինք եղավ իմ առաջին ուսուցիչս, կամ խմբավարս, որ իմ պատանի հոգիս բացավ հայ դասական երաժշտության, որովհետև փոքր տարիքես, այդ դպրոցի գրասեղաններեն սկսած, սեր ունեի,

**Հարցազրույց
ԳՐԻԳՈՐ ՓԻԹԵՉՅԱՆԻ հետ**

րով: Այդպիսի խոշոր գործիչներ շար ենք ունեցել և այսօր էլ ունենք՝ Աշոտ Պատմագրյան, Էդվարդ Հակոբյան, Կարպիս Ափրիկյան, Համբարձում Բերբերյան... և շարերը, որոնց շարքին այսօր պետք է ավելացնենք նաև երաժշտական հասարակական գործիչ, կոմպոզիտոր, խմբավար, հայկական խազերի ուսումնասիրող, վերծանող նաև հետազոտող, պրակտիկ մտքի տեր մի անհնավորություն, որը հանգիստ չունի, թեկուզ ցանկացած պահի մեկ վայրկյան, կամ ազար մեկ ժամ գրվելով անպայման իր գրասեղանին է դնում հայոց շարականները, զաները, փաղերը, ուսումնասիրում, մեկնաբանում և աշխատություններ է հրատարակում, որոնցից շարերը մեզ է ներկայացնում մաքրամաքուր վիճակով, ինչպես Մեծն Կոմիտաս Վարդապետը մեր երգերն էր մաքրում, զրոնք ավելորդ զարդարանքներից ու ներկայացնում իր ժողովրդին: Այդպես է վարվում նաև Գրիգոր Փիթեչյանը:

կախրեի հայ երգը, ինք ալ նկատելով այդ, ուզեց որ, իր կազմած «Հառաջդիմասեր»-ի երգչախումբին մասնակցիմ, հակառակ որ, փոքր տարիք ունեի, տակավին ձայնս պատանեկան, դեռ չէր դարձած, այդ իսկ պատճառով դասեց զիս այլոներու (*alto*) շարքին: Եվ հոն է որ, համերգներու որ կպատրաստվեիմք, կերգեիմք դասական երգերեն և ձևով մը նախաճաշակը առի հայ դասական երաժշտության, հատկապես Կոմիտասի:

Բարև Ձեզ, պարոն Փիթեչյան, բարի եք եկել մեր խմբագրություն: Այցելություն, որն արդեն ավանդական է դարձել և խմբագրությունում էլ Ձեզ անհամբերությամբ են սպասում, սկսնակալով հետաքրքրական հանդիպում:

Այնուհետև անցաք երաժշտական փարքեր բնագավառների մանրակրկիտ ու քրտնաջան, խորիմաստ ուսումնասիրության, ուսումնական, կրթական, համալսարանական, նաև երաժշտական կրթվելու մասին խնդրեմ:

Բարև Ձեզ, պարոն Թովմասյան և ողջույն սիրելի ազգակիցներ: Շատ ուրախ եմ որ, պարոն Թովմասյանը զիս հրավիրելով այստեղ, առիթ կուտա ինձի խոսքս ըսելու իմ ազգակիցներու:

Երկրորդական ուսումն, որ, իսկապես, իմ հայեցի դաստիարակության օջախն է եղած, եղած է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանքը, ուր հաճախեցի 1952թ-ին և սնա այդպիսի վանական մթնոլորտի մեջ, ուղղակի ապրելով մեր ավանդությունը, հատկապես եկեղեցական, որովհետև ամբողջ Ծեսը, կամ բոլոր արարողությունները կկատարեիմք ինչպես որ հասած էին մեզի միջնադարյան կամ, նույնիսկ վաղ միջնադարյան շրջանեն: Ասիկա թեև, տակավին պատանի, գիտական ոչ հիմքի վրա է որ, կերգեիմք, պարզապես գոց սորվելով կերգեիմք, սակայն, հետո ասիկա իր մեծ դերը ունեցավ երբ երաժշտական իմ գիտությունս զարգացուցի և ասիկա դարձավ խարիսխը, ինչպես կըսեն՝ փորձարարական բաժինը իմ գիտությանս: Գիտությունը, առանձին բավարար պիտի չըլլար ուսումնասիրելու և խորանալու միջնադարյան երաժշտության մեջ, եթե երբեք այս վանական դպրեվանքի այդ մթնոլորտեն անցած չըլլայի, ուր առավոտ իրիկուն, հայկական ձայնեղանակներուն վրա կերգեիմք, այդ բոլորը

կկատարեինք, ինչպես որ ըսի՝ ըստ ավանդության, սակայն, ասոր վրա ավելցավ հառաչիկա գիտություն, երբ Լիբանանեն, Դպրեվանքեն հետո Միացյալ Նահանգներ գացի 1962թ-ին, այնտեղ երգչախումբ կազմեցի, ապա ուսանեցա, երաժշտանոց հաճախելով, բարձրագույն կրթությունը առի, խմբավարություն ուսանեցա, կամ խմբավարական ամբողջական ծրագրին հետևելով ստացա Պսակավորի տիտղոս, անկե հետո մագիստրոսի տիտղոս ալ ստացա երաժշտագիտության, հատկապես ազգաբային երաժշտագիտության մեջ: Այնպես որ, բոլոր այս միջոցները, մեթոդները, որոնց ծանոթացա երաժշտանոցներու մեջ, բերի և գործածեցի զանոնք ուսումնասիրելու համար մեր հայկական երաժշտությունը: Եվ ուրախ եմ ըսելու որ, որոշ ծանոթություններ, գիտություններ կրրցա ամբարել և առիթը ունեցա այս վերջին, զոնե տասնամյակին, աշխատիլ և հրատարակել զանոնք, մասնակցիլ հայ մամուլին:

Դպրեվանքի շրջանավարտ Գ. Փիթեջյանը հաճախել է ևս և Բեյրութի Պեյրական երաժշտանոց, դասավանդելով Դպրեվանքում և վարել Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարի երաժշտապետության պարասիանարտի պաշտոնը, որը պահանջում էր հայ եկեղեցական երաժշտության խորունկ իմացություն և ծանոթություն, կարարողի և երգչախումբ ղեկավարելու կարողություն:

1960թ-ին, կազմել է երեսուն հոգիանոց արական երգչախումբ, հարուկ հանդիսավոր օրերին Կոմիտաս Վարդապետի մշակած Պարարազը Մայր Տաճարում կարարելու համար:

1962թ-ին, Նյու-Յորքում հասարակվելուց հետո, Կոմիտաս Վարդապետի համբավավոր հիևզ սաներից Միհրան Թումանյանի աջակցությամբ կազմել է «Գուսան» երգչախումբը: Տասը րարի շարունակ դասարհարակելով իմբի անդամներին, բարձրորակ համերգներով հմայել է հասարակությանը և հազեցրել հայկական երգի ու հայրենիքի կարոտ հոգիների պապակը:

1964թ-ին, պարուսույց Նվարդ Համբարյանի հետ հիմնել են 120 մասնակցից բաղկացած Ամերիկայում առաջին հայկական երգի-պարի անսամբլը, որը Նյու-Յորքի Համաշխարհային րոնավաճառի 10000-ից ավելի հայ և օրարազգի մասնակից ունկնդիրներին հրամցրել է հայկական ժողովրդական երգն ու պարը:

Գ. Փիթեջյանը հաճախել է Նյու-Յորքի հանրահայր Մաննես երաժշտանոց, որն ավարելով խմբավարի մասնագիտություն է սրացել, Պսակավորի (B.S.) վկայականով: Ապա, Հանթրը քոլեջում ավելի խորացնելով երաժշտական ուսումը, սրացավ Մագիստրոսի (M.S.) վկայական:

Տարիներ շարունակ դասավանդել է Նյու-Յորքի Պեյրական վարժարանում, որպես երաժշտության ուսուցիչ:

1969թ-ին, որպես սիյուռքահայ երաժիշտ, Հայաստանի արրասահմանյան երկրների հետ Մշակութային կապի կոմիտեն նրան հրավիրեց հայրենիք՝ մասնակցելու Կոմիտաս Վարդապետի ծննդյան

100-ամյակին նվիրված րոնակարարություններին: 1969-70թ-ի ուսումնական րարում վարել է Մաննես երաժշտանոցի հայրենի երգչախմբի րոնիչեկավարի պաշտոնը

Գ. Փիթեջյանը Նյու-Յորքի Հայ մշակույթի Համագային միության հիմնադիր անդամներից է և «Գուսան» երգչախումբը դարձրեց նորակազմ միության հիմքն ու կորիզը:

1970-81 թվականներին ղեկավարել է Նյու-Յորքի Ս. Վարդան Մայր Տաճարի բարձրորակ երգչախումբը, որը նույնպես ինքն է հիմնել:

Լարային և րոդային գործիքներից բաղկացած առանձին նվագախմբերի կազմերի համար հոգևոր և ազգային հայրենասիրական երգերի Գ. Փիթեջյանի անզուգական մշակումներն ու կարարումները ցարդ անջնջելի րպավորություն են թողել:

Գ. Փիթեջյանի սրեղծավորություններից ու մշակումներից շարերը կարարվել են Լիբանանի, Միրիայի, Եգիպտոսի, Հորդանանի, Իրաքի, Հայաստանի, Կանադայի Հունաստանի, Արգենտինայի, ինչպես ևս Իրանիայի, Միացյալ Նահանգների զանազան քաղաքներում:

Գ. Փիթեջյանը երաժշտական իր ուսումնասիրություններով ու քննադարական հողվածներով հանդես է եկել սիյուռքի և հայրենիքի հայ մամուլի էջերում:

Հարուկ դասախոսություններով ելույթներ է ունեցել և այսօր էլ շարունակում է Միացյալ Նահանգների Նյու-Յորքի, Նյու Ջրսիի, Բոսթոնի, Գլենդելի, Ֆրեզկոյի, Վալիի, Սան Իրանցիսկոյի, Վաշինգթոնի, Միչիգանի, ինչպես ևս Մոնոնեայի (Կանադա) ու Ալեքսանդրիայի (Եգիպտոս) հայ գաղթօջախների Հայ րներում և համերգարահներում:

Մեծ Եղեռնի 90-ամյակի առիթով հրարարակվեծ անմեղ նահարակների հիշարակին նվիրված «Երգապասկ» անունով իրասալիկը (երգչախմբային և նվագախմբային) Գ. Փիթեջյանի ղեկավարությամբ:

Այո, Չեր կարարածը ոչ միայն մամուլին մասնակցություն է, որոշ մաս, ինչպես Դուք եք համեարորեն նշում, այլ հիմնավոր ուսումնասիրություն, աշխարանքներ են, որոնք այժմ դրված են մեր սեղանին՝ «Հայ հեղաիրոխական երգերուն րեղը հայ երաժշտության պարմության մեջ», առաջին գիրքն է, առաջին աշխարությունն է, որ դուք ներկայացրել եք հանրության ուշադրությանը, ինչպես և «Գրիգոր Նարեկացին իբրև շարականագի՞ր», «Անձինք նվիրյալը շարականի պարմությունը» (րեն կազմին) իագերից վերծանումը, որոնց բառ առ բառ, րառ առ րառ Չեր ուսումնասիրությունը, ոչ միայն դասագիրք է, ուսումնական ձեռնարկ է, այլև, թող շար չլին ասել, որ հայ յուրաքանչյուր երաժշտի և ոչ միայն երաժշտագետի կամ ուսումնասիրողի համար, Չեր աշխարասիրությունը, նրանց սեղանի գիրքը պեպր է լինի:

Խնդրեմ, եթե կարելի է առաջինը «Հայ հեղաիրոխական երգերուն րեղը հայ երաժշտության պարմության մեջ» գիրքն ինչպես մրահացաք, կամ ինչպես սրեղծվեց:

երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

Այո: Ինչպես գիտեք, նախկին վարչակարգի շրջանին ազգայնական կամ կուսակցական արարքները, երգերը և այլ գետիններու վրա կատարված աշխատանքները որոշ չափով կասկածված էին:

Եթե չասենք արգելված էին:

Այո, չուզեցի գործածել այդ բառը: Լավ: Շիտակ խոսինք, արգելված էին և տրված ըլլալով որ, այլևս ազատ ենք, ամեն արժեք իր տեղը պետք է ունենա ամեն գետնի վրա և երբ տակավին անձեր, որոնք կառչած ըլլալով հին գաղափարաբանության դեմ կարտահայտվեին հեղափոխական երգերուն, նույնիսկ ըսելով որ, Կոմիտաս Վարդապետն անգամ, դեմ էր անոնց՝ հեղափոխական երգերուն, ասիկա պատճառ դարձավ, որ այլևս չլռեմ, խոսիմ այս մասին, արտահայտվիմ, որովհետև արտասահմանի մեջ այն համոզումը գոյացած էր թե, հեղափոխական երգերը կուսակցական երգեր էին միայն, քանի որ միայն դաշնակցութիւնը պահած էր զանոնք: Անշուշտ, որ կուսակցական երգեր ալ կան անոնց մեջ, ըլլա հնչակյան, ըլլա դաշնակցական կուսակցությանց պատկանող երգեր, սակայն հեղափոխական երգերը իրենց ամբողջության մեջ առած, միայն կուսակցական երգեր չեն և ճիշտ չէ գոհել, ազգային գետնի վրա շատ կարևոր այդ ամբողջ ժամանակաշրջանի մը արդյունքը, արգասիքը եղող այս երգատեսակը, որովհետև ի վերջո՝ 1918թ-ի Անկախութիւնը իրականացավ մեր այս ֆիդայական շարժումներու, ոչ միայն դաշնակցության, ոչ, անկէ առաջ կար հնչակյանությունը, անկէ առաջ կար արմենական կուսակցությունը, ի վերջո, անկէ առաջ ալ առաջինը՝ Էրզրումի շարժումը կար, որուն երգը արդեն բոլորս գիտենք՝ «Չայն մը հնչեց Էրզրումի հայոց լեռներէն»: Ասոնք ոչ մեկ ձեռով կարելի է վերագրել միայն ու միայն դաշնակցության: Հետևաբար, արտասահմանի մեջ քաղաքական նպատակներ հետապնդողներ, որպէսզի անշքացնեին, նսեմացնեին և ձեռով մը գուգահեռ գաղափարախոսության լարին վրա մնային անցյալի վարչության հետ, ոչ միայն կքննադատեին հեղափոխական երգերը, այլ երգողներուն վրան ալ կխնդային:

Ես, ըսեմ որ, հաճախ իմ համերգներու մշակած ու հնչեցուցած եմ հեղափոխական երգերը, որոնք մեծ, մեծ խանդավառությամբ կընդունվեին, ունկնդիր հասարակության կողմէ:

Ուրեմն, երբ, անունը չեմ ուզեր տալ, անձ մը սկսավ հողվածով մը քննադատել և նույնիսկ, որպէսզի հեղինակություն տա իր գործին, Կոմիտասի անունն ալ հոն հիշելով, այլևս ժամանակը հասած նկատեցի գրելու այս գիրքը, ուր անկողմնակալ կերպով, անաչառորեն պատրաստեցի, ուսումնասիրեցի այս աշխատանքը, որպէսզի ես ալ չպիտակվիմ որպէս դաշնակցական, որպէս դաշնակցականի գործ չներկայանա այս աշխատանքս:

Ուրեմն, այս անկողմնակալ մոտեցումն և հատկապէս՝ պատմական, գիտական գետնի վրա ներկայացնելով այս աշխատանքը, այսինքն «Հեղափոխական երգերու տեսակը», փորձեցի և գետեղեցի զայն իր տեղը մեր երաժշտության պատմության մեջ, որ չկար, գոյություն չունէր ցարդ:



Թաթուլ Ալթունյանը և Գրիգոր Փիթեջյանը Կոմիտասի անվ. պանթեոնում, 1969թ.

Ձեր հավաստումները ծանրակշիռ են և արժեքավոր ու անգնահատելի և եթե Ձեր նշած եզակիների պնդումներն էլ հաշվի առնենք, ապա Տիգրան Չուխաջյանին էլ պետք է դաշնակցական համարենք և նրա սրեղծած ազգային հայրենասիրական ամբողջ սրեղծագործական ժառանգությունն էլ, սկսած «Արշակ Բ» օպերայից ու ավարարած «Գարուն» և այլ ռոմանսներով ու երաժշտական այլ ժանրերի սրեղծագործություններով, ապա, պետք է կուսակցական համարենք: Երաժշտության մեջ հայրենասիրությունը գրեթե նրանից է սրեղծվել և Ձեր կարարած աշխարհներ գրեթե նրա կարարածի շարունակությունն է և կեցցե՛ք, Ձեր կարարած գործի համար:

Շատ շիտակ կըսեք, պարոն Թովմասյան, շնորհակալություն:

Եվ Ձեր հաջորդ սրեղծագործությունը՝ «Գրիգոր Նարեկացին շարականագի՞ր»: Այո, այն էլ հարցականով, խնդրեմ, այս աշխարասիրության մասին.

Ուրեմն, Քրիստոնեության պետականացման 1700-ամյակի առթիվ, երբ կմտածեի ձեռով մը համեստ մասնակցությունս բերել, մտածեցի, թե ի՞նչ կըրնամ ընել և անմիջապէս հիշեցի տարիներ առաջ իմ ընթերցանությանս ընթացքին հանդիպած մեկ շարականին, ուր որ Մանուկ Աբեղյանի «Հայ գրականության պատմության» 1-ին հատորին մեջ էր Նարեկացիի բաժնի մեջ, ուր գետեղված էր Դկ Հարության Տէր Հերկնից՝ «Փառք Քրիստոսի ամենագոր Հարությանն» տողով սկսող շարականը և Մանուկ Աբեղյան բաղդատելով այդ շարականի բնագիրը Գրիգոր Նարեկացիի «Սայլն այն իջաներ» տաղի բնագրին հետ, ուր «Փառք ամենագոր Հարությանն» տունը, որպէս կրկներգ կերպի, կկարծեր թե, այդ շարականը պատկանած պետք է ըլլար Նարեկացիի գրիչին, բայց, ինչպէս գիտենք, միայն բնագրով, այդ կարելի է որոշ եզրակացության հանգիլ, սակայն, ըլլա Շարականը, ըլլա Տաղը,

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

այնպիսի երգատեսակ են, որոնք միայն արտասանվելու համար չեն գրված, այլ երգվելու համար ևս: Ասոնք ունին հետևաբար, երկու բաղադրիչներ՝ գրական և երաժշտական: Եվ, այս երկու երկերը. «Սայլն այն իջաներ» տաղը, ինչպես նաև շարականը, բարեբախտաբար, հասած են մեզի իրենց եղանակներով ևս: «Սայլն այն իջաներ» տաղը շնորհիվ Կոմիտաս Վարդապետի, Աթայանի և Թահմիզյանի, վերականգնված և գրեթե ամբողջական վիճակի հասած, ամբողջական երգ մըն է: Իսկ շարականն ալ, հասած է մեզի եկեղեցվո ճամբով, ուրեմն ինձի ալ պարտականություն համարեցի ուսումնասիրել երաժշտական բաղադրիչը այս անգամ, այս երկու երգերուն: Եվ, ինչպես բնագրային նմանություններն Մանուկ Աբեղյան կկարծեր որ, այս շատ հավանաբար պետք էր Նարեկացիի գրչին վերագրել, ես

ալ այս անգամ ուսումնասիրելով երաժշտական բաղադրիչը, իսկապես նույն եզրակացության հանգեցա, որովհետև օրգանական կապը շատ հստակ էր երկու երգերուն միջև, տաղին և շարականին միջև՝ անոնք ունեին Դ-Կ ձայնեղանակի խարիսխը, շարականը հորինված է Դ-Կ ձայնի մեջ, կերգվի Դ-Կ ձայնով, իսկ տաղին ալ բուն տուն ձայնը, որովհետև տաղերը շարականներեն շատ ավելի բարդ երգատեսակ են և միայն մեկ ձայնի մեջ չեն ընթանար տաղի մը եղանակը, այլ ձայներու շղթայավորումով կզարգանա, բայց միշտ կվերադառնա իր տուն ձայնին, հիմնական ձայնին:

Այսինքն բազմաշայն զարգացում:

Այո, ճիշտը այդ է: Փոխանակ բազմաձայնություն վար վեր ըլլալու, բազմաձայնությունը, հորիզոնական կընթանա: Այո, բազմաձայնություն՝ մեկ լա-



Գ.Փիթեջյանը «ԵՊԿ հրատարակչություն»ում, հյուր՝ Հարություն Սամուելյան, Նունե Սամվելյան (ղիզայներ), հյուր՝ Սիլվա Բաբայան (Վեղիի երաժշտական դպրոցի ուսմասվար) Ա.Գևորգյան, ուսանողներ՝ Ե.Ասլանյան, Ռ.Սիբայելյան



«ԵՊԿ հրատարակչություն»

Կարինե Բրուտյան (խմբագիր 2007թ-ին), Վալենտին Թովմասյան (բաժնի վարիչ), Հովհաննես Մուրադյան (խմբագիր), Գրիգոր Փիթեջյան («ԵՊԿ հրատարակչության պատվավոր խմբագիր»), Գոհար Շագոյան (հիմնադիր - գլխավոր խմբագիր) Իրինա Տիգրանովա (ԵՊԿ Հրատարակչական խորհրդի անդամ) Աննա Գևորգյան («Երաժիշտ» թերթի 1-ին գլխավոր խմբագիր 2005-2008թթ), Սոֆա Ազնաուրյան (խմբագիր), Սուսաննա Գուկասյան (համակարգչային օպերատոր)

Շնորհավորում ենք - 75

րի վրա: Ուրեմն այս ուսումնասիրությանց արդյունքը այն եղավ որ, իսկապես ալ այդ շարականը եղած է մեկ մասը, կամ վերջին մասը այդ տաղին, որ անջատորեն որպէս շարական, այլ շարականներու հետ հասած է մեզի:

Ինչո՞ւ համար է, սակայն, այս հետաքրքրութունը տաղին և շարականին: Անոր համար որ, շարականի, այդ մեծ աշխատանքի գրքի սկզբնավորության շարականագիրներու ցանկին վրա չէ հիշված Գրիգոր Նարեկացին որպէս շարականագիր, բայց Գրիգոր Նարեկացին, անկախ ամեն բանէ առաջ, անիկա մեր «Մատյան ողբերգության», այդ մեծ աղոթագիրք դարձած աշխատանքին հեղինակն է: Հետո, ծանոթ է մեզի, որպէս տաղասաց և գանձասաց: Եվ, ասիկա տաղերգության այս արվեստը իր մով սկսավ, ինք նորարարություն բերավ հայ երաժշտութենէն ներս և մեզի ծանոթ է հետևաբար, որպէս տաղասաց, որպէս գանձասաց, բայց ոչ որպէս շարականագիր:

Այս ձևով, այս ուսումնասիրությամբս այլևս հաստատվեցավ որ, շարականի մեջ ալ իր գործը կա, հետևաբար կրնանք զինք կոչել նաև շարականագիր: Ասոր համար է, որ վերնագիրը այդպէս նախ հարցականով է դրված. «Գրիգոր Նարեկացի շարականագիր»:

Վերջավորության, ուրեմն, կրնանք ըսել, այո՛ Գրիգոր Նարեկացի շարականագիր:

Հրաշալի մի աշխատասիրություն է սա և հեղաբարբառականն այն է, որ ուսումնասիրության նյութ է դարձել և ամբողջական րեսք սրացել, ի մի բերվել և այսօր կարծում եմ որ բազմաթիվ երաժշտագետներ ու երաժիշտներ անպայման կօգտվեն Ձեր աշխատասիրությունից: Եվ բացի դա, ճմարտությունն այն է, որ իրականության մեջ, հայ մշակույթի պատմության մեջ Վերածնունդն սկսվել է XI դարից՝ Նարեկացուց, այսպես Ներսես Շնորհալի և հայրնի է ամբողջ աշխարհին, որ եթե Եվրոպայում այն սկսվել է XIV-XVI դարերում, այսպես Հայաստանում XI դարում, այսինքն երեք, չորս դար առաջ և ինչպես հայ ժողովուրդն առաջինն է բնդունել Քրիստոնեությունը որպէս պետական կրոն, նույնպես և հայ ժողովուրդն է սկսել մշակույթի Վերածնունդը:

Եվ անդրադառնալով Ձեր հաջորդ աշխատասիրությանը, որն անգամ հյանգիկ թերթիկա, թռուցիկ ծանոթությունն անգամ շար բան է րալիս, որովհետև «Անձինք նվիրյալ» շարականը և նրա պատմությունն այդպէս վեր հանել նաև ներկայացնել մասնագետներին ու երաժշտասերներին, վերծանելով այն խաղերից, որն այսօր երգվում է և գոյություն ունի, իհարկե Ձեր կատարած մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ:

Շատ շնորհակալ եմ, պարոն Թովմասյան, նորեն մնալով 1700-ամյակի ծիրեն ներս «Անձինք նվիրյալ» շարականը հատկապես ընտրեցի ներկայացնել, որպեսզի ժողովուրդը, որ երկար ատեն է ի վեր, գոնե երկու, երեք սերունդն է ի վեր ձևով մը կտրված էր հոգևոր գրականութենէ, որ ատենին՝ 19-րդ դարու վերջավորության և 20-րդ դարու սկիզբը մեծ տեղ կգրավեր հայ ընթերցողի կյանքն ներս, մեծ



Գրիգոր Փիբեջյանի, Անգինե Բեշիշյան-Մուրադյանի հանդիպումը Արամ Խաչատրյանի հետ, Երևան, 1969թ.



«Գուսան» երգչախումբի 10-ամյա տարեդարձին, Նյու-Յորք, 1973թ.

տեղ կգրավեր նաև հայ մամուլին մեջ, եկեղեցական երաժշտական հարցեր և այլն, ուրեմն առիթը նկատեցի «Անձինք նվիրյալ» շարականը ներկայացնել այս աշխատասիրությամբս, որովհետև «Անձինք նվիրյալ» շարականը իր նյութով, իր գրական և երաժշտական որակով այնպիսի կատարյալ և բարձր մակարդակի վրա ստեղծագործություն մըն է որ, որպէս 7-րդ դարու գործ և որպէս այդպիսին, պետք է մատնանիշ ընել, հատուկ շեշտել անոր արժեքին համար: Որովհետև 7-րդ դարու մեր կաթողիկոսներն Կոմիտաս Աղցեցի Հայրապետը, որ շինարար, մե՛ծ, իմաստուն կրթական գործերու զարկ տվող Հայրապետ մըն է եղած, շա՛տ, շատ կհարգեր Հոփսիմյանց հիշատակը, անոնց կատարած գոհողությունը՝ ի գին Քրիստոնեության պահպանման: Ինչո՞ւ, սակայն, 1700-ամյակին առիթին կապել այս: Կապեցի 1700-ամյակին, որովհետև անուղղակիորեն հոփսիմյանց պատճառ դարձան, կարծեք, Տրդատ թագավորին և Գրիգոր Լուսավորչի Քրիստոնեությունը պետական կրոն դարձնելու հաջողության: Գիտենք որ, Հոփսիմյան և Գայանյան կույսերը Հռոմի Թեոկրեդիանոս կայսեր հալածանքնե-

րեն փախան, ոմանք Եգիպտոսի շրջանը գացին, ոմանք ալ Հայաստան եկան: Տրդատ թագավոր, երբ իմացավ ասոնց ներկայությունը Հայաստանեն ներս և լսած ըլլալով Թեոկղեղիանոս կայսեր կողմն թե՛ Հռիփսիմն անունով գեղանի կույս մը կա կույսերու մեջ, իրեն կնության կուզե առնել Թեոկղեղիանոս կայսրը, Տրդատ, որ իմացավ, ինք հետապնդեց, փնտրեց, գտավ և ինքը ուզեց իրեն կնության առնել նույն անձը՝ Հռիփսիմն կույսը: Սակայն, չհաջողեցավ, պատմությունը չեմ ուզեր այստեղ երկարել և սպանեց կույսը, ինչպես նաև բոլոր ընկերուհիները: Երբ այս պատահեցավ, ավանդության համաձայն Տրդատ թագավոր ալ հիվանդացավ և մինչ այդ արդեն Գրիգոր Լուսավորիչ ալ Տրդատ թագավորին

կողմն Խոր Վիրապը նետված էր: Ուրեմն, Տրդատ թագավորի քույրը, ատեն մը ետք, երազ կտեսնե, տեսիլքին համաձայն պետք էր Գրիգոր Լուսավորիչ ելլեր և բուժեր Տրդատ թագավորը: Միակ անձը, որ պիտի կարենար բուժել Տրդատ թագավորը՝ Գրիգոր Լուսավորիչը պիտի ըլլար: Ուրեմն, այդ ալ պատահեցավ, այդ ալ եղավ, բուժվեցավ Տրդատ թագավոր և Գրիգոր Լուսավորիչի հետ Քրիստոնեությունը պետական կրոն հռչակեցին: Ուրեմն, անուղղակիորեն կտեսնեք, կապը ուր գնաց, թե ինչու համար «Անձինք նվիրյալք»ը ընտրեցի, որովհետև, եթե երբեք Տրդատ թագավոր հալածած և սպաննած չըլլար Հռիփսիմն կույսը, ինչպես նաև անոր ընկերները, ինք հիվանդացած պիտի չըլլար: Եթե ինքը հիվան-



Ս.Ներսես Շնորհալիի 800-ամյակի առթիվ մեծաշուք համերգը, Նյու-Յորք, St.Patrik's Cathedral, 1972թ.



Հակոբ Ասատուրյան, Յիցիլիա Բրուտյան (երաժշտագետ), (...), Ռոբերտ Աթայան (երաժշտագետ) և Գրիգոր Փիթեջյան (երաժշտագետ), Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնում, Կոմիտասի 100-ամյակի հանդիսությանը, Երևան, 1969թ.

երաժշտական ՂԱՅԱՍՏԱՆ 2(37)2010



Նյու-Ջերսիի Հովնանյան վարժարանի ուսուցչական կազմի հետ



Գրիգոր Փիթեջյան Նյու-Ջերսի Հովնանյան վարժարանի տնօրեն՝ 1980-1985թ.

դացած ըլլար Վիրապեն ո՞վ պիտի հաներ, ի՞նչ պիտի ըլլար հայտնի չէ, չենք կրնար ըսել, թե ե՞րբ Քրիստոնեություն պիտի ընդունեինք: Սակայն, ահավասիկ, անուղղակիորեն դրդապատճառը Քրիստոնեության ընդունման, որպես պետական կրոն՝ Հռիփսիմյանց կույսերը հանդիսացած են: Իսկ Կոմիտաս Կաթողիկոս, որ ինչպես ըսի մեծ հարգանք կտածեր Հռիփսիմյանց կույսերուն նկատմամբ, տեսնելով անշուք վիճակը իրենց գերեզմանին, կամ հուշատեղիին, ուխտատեղիին, կորոշե, երբ կաթողիկոսանա, իր առաջին պարտականությունը պիտի ըլլա այդ վայրին վրա տաճար մը կառուցել: Եվ իսկապես ալ, 7-րդ դարու սկիզբը, երբ ինքը Կաթողիկոսացավ, իր առաջին պարտականությունը եղավ կառուցել գեղեցիկ տաճար մը և անհավատալի կթվի, սակայն իրավ է, այսօրվան Սուրբ Հռիփսիմե տաճարը, որ կըսենք եկեղեցիներու գեղուհին է, ահավասիկ Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոսի ձեռակերտն է: Եվ մինչև այսօր գործող եկեղեցի է և այդ եկեղեցիի օժման առիթով հորինեց այս «Անձինք նվիրյալք» գեղեցկահյուս շարականը: Շարական մը, որ իր տեսակի մեջ նոր էջ բացավ շարականագրության մեջ, որովհետև անկէ առաջ Սուրբ Սահակով և Սուրբ Մեսրոպով սկսած մեր շարականագրությունը, որ շատ փոքր տուններէ, երեքական տուններէ բաղկացած փոքրիկ ստեղծագործություններ էին, որոնց նյութը, անպայման, եթէ ոչ ամբողջությամբ, առնված էին Սուրբ Գիրքեն, Կոմիտաս Աղցեցի Կաթողիկոս իր համարձակությամբը, այս շարականի ստեղծագործությամբ, նոր էջ մը բացավ, որովհետև կտրվեցավ Սուրբ Գիրքեն և որպես նյութ առավ ահավասիկ Սուրբ Գրքին հետ կապ չունեցող իրական, սակայն, պատմութենէ: Եվ ոչ միայն այս, այլ ստեղծագործեց այբբենական ծայրակապով Ակրոստիքոս ոճով երկարապատում բանաստեղծություն մը:

Կարծեք թե պոեմ է:

Շատ շիտակ, ասիկա պոեմ է, ուրիշ բան չէ կարծեք՝ երաժշտականացած պոեմ: Եվ հնչեցուց զայն առաջին անգամ Սուրբ Հռիփսիմե տաճարի օժման առիթով: Եվ իր այս ոճը դարձավ, ինչպես կըսեն, կաղապար, որուն վրա հաջորդ շարականագիրները հետևելով ստեղծագործեցին նույնատիպ շարականներ, անոնցմէ լավագույն օրինակը որ, շատ շատերս, որ Դուք ալ, վստահ եմ, շատերդ գիտեք, Ներսես Շնորհալիի ստեղծած՝ «Նորահրաշ պսակավոր Վարդանանց գորավարաց» նվիրված հերոսապատում շարականն է:

Ահա և սպառնիչ պատրասխանը նաև «Անձինք նվիրյալք» շարականի մասին, նաև շարականագրության ու մեր երաժշտագրության ասպարեզում հրաշալի աշխարհություններ, որոնք իրականության մեջ մեծ արժեք ունեն: Համոզված եմք, որ այսօր էլ Ձեր պրպրուն միտքը դադար չունի և արդեն մտքորում եք մի նոր գործ իրականացնել, որն առնչվում է Մեծ Եղեռնի փարեկիցին, ավելի լավ է Դուք պատմեք:

Այս տարի երկու ծրագիր ունեի իրագործելու, առաջինը՝ դասախոսության շարք մըն էր, վերա-



Ուխտագնացություն Պատմական Հայաստան, հունիսի 12-25, 1998թ., Մեսրոպ Արք. Աշճեանը, Հայկ սարկավագ, Գրիգոր և Պերճունի Փիտեճեանները Վանում կատարում են հատուկ հոգեհանգստյան արարողություն

դարձնելու համար, կամ ավելի բարձրացնելու համար մեր ժողովրդի մտքերու մեջ մեր հանճարեղ Կոմիտաս Վարդապետի գործը: Կատարած հրաշքը իրականության մեջ, մեր ազգային երաժշտութենեն ներս: Այդ դասախոսությունները սկսա Միացյալ Նահանգներու մեջ, Եգիպտոս ալ հատ մը տվի՝ Ալեքսանդրիո մեջ, իսկ վերադարձիս՝ նոյեմբեր 13-ին, Նյու-Յորքի մեջ պիտի դասախոսեմ և ատիկա կարծեմ այլևս վերջինը պիտի ըլլա: Սակայն, 2-րդ և շատ կարևոր ծրագիրս մեր ապրիլյան նահատակներուն նվիրված խոսասալիկ մը պատրաստելն էր, որովհետև մինչև այսօր, հակառակ որ շատ խոսված է, շատ հարգանքի մեր տուրքը տված ենք գիրքերով, հողվածներով, սակայն, տակավին ոչ մեկ երաժշտական խոսասալիկ, կամ ձայներից նվիրված է մեր Մեծ Եղեռնի նահատակներու հիշատակին: Այս ծրագիրը, անշուշտ նյութական հովանավորողի պետք պիտի ըլլար, հետևաբար դիմեցի Նյու-Յորքի Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության առաջնորդ, Սրբազան հոր, երբ ծրագրին տեղեկացավ, ըսավ այո, ծրագիրը լավ է, ընդառաջեց, որպեսզի իրականացնենք զայն: Եվ այդ գործով է, որ եկած եմ հայրենիք, որպեսզի երգերու խումբ մը՝ 13 խմբերգեր՝ երգեր և երկու մեներգեր, այսպիսով խոսասալիկ մը պատրաստեմ ինչպես ծաղկեպսակ, աս ալ որպես երգապսակ ըլլա մեր Մեծ Եղեռնի նահատակներուն և այս առիթով աշխատեցա Երևանի կամերային երգչախումբին հետ, որուն գեղարվեստական խմբավարն է մանեսթրո՝ Հարություն Թովիկյան և աշխատեցա նաև մանեսթրո՝ Մերուժան Սիմոնյանի Ալան Հովհաննես կամերային նվագախումբին հետ, որոնք, իսկապես իրենց բարձրորակ մակարդակով հայտնի են հասարակության, ժողովուրդին:

Բազմամյա անբասիր ու նվիրյալ գործունեության համար Գ. Փիթեջյանն արժանացել է պարգևների ու բարձր գնահատականների:

Այսպես. Ի գնահատություն նրա ազգագուր երաժշտական գործունեության, 2007թ-ի նոյեմբերի 11-ին, Գ. Փիթեջյանն արժանացավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գա-

Երաժշտական ՀԱՅՍՍԱՆ 2(37)2010

րեզին Բ Անենայն Հայոց Հայրապետի սրբաբան Կոնդակիևի և Ս.Ներսես Շնորհալի պարվո շքանշանին:

2008թ-ի հոկտեմբերի 5-ին, «Համագային Հայ Կրթական և Մշակութային Միության» Կեդրոնական Վարչությունը Գ.Փիթեջյանին պարգևատրեց Ոսկե մեդալով վկայագրի վրա արձանագրելով, որ նա «Երկարամեա անասկարկ նուիրումով ծառայած է հայ երաժշտութեան ծանօթացման և զարգացման աշխատանքին»:

2008թ-ի հոկտեմբերի 17-ին, Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն, Տիար Դավիթ Սարգսյանի կազմակերպած Գ.Փիթեջյանի վերջին երեք գրքերին և «Երգասասկ» խրատայիկին նվիրված շնորհանդեսի ընթացքում Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության նախագահ Տիար Ռոբերտ Ամիրխանյանը, բարձր գնահատելով Գ.Փիթեջյանի վաստակը, պաշտոնապես հայտարարեց նրա անդամակցությունը ասելով. «Հայ երաժշտական մշակույթի միջնաբերդ հանդի-

սացող կոմպոզիտորների և երաժշտագետների միության»: Ապա, մեծ հանդիսությամբ, ներկաների ծափողջույնների ներքո, Գ.Փիթեջյանին հանձնեց անդամակցության վկայագիրը:

Գրիգոր Փիթեջյանն իր ազգային համոզումներով ու գործելակերպով, իր ունեցած երաժշտական բազմակողմանի հմտությամբ խորք ու որակ է րվել և այսօր էլ րալիս է Նյու-Յորքի և շրջակայքի հայկական գաղթօջախի մշակութային կյանքին:

Մեր ընթերցողներին գաղտնաբար հայրենեք, որ հայ երաժշտության անխուճ հասարակական գործիչ ու հրաշալի գիրակ խմբավար, կոմպոզիտոր, երաժշտագետ, խաղաղագետ Գրիգոր Փիթեջյանը շուրով երաժշտագետների, ինչու չէ նաև երաժշտասերների սեղանին կղնի նաև Քրիստափոր Կարա Մուրզայի (Մարգարյան) կյանքին և սրեղծագործական գործունեությանը նվիրված աշխատասիրությունը: Ուստի նրան ցանկանք առողջություն, եռանդ, ուժ ու կորով իր առաքելությունն ի կարար ածելու ազնիվ գործում:

Յ.Գ. 1-ին. Ազնվագույն անձնավորություն երաժշտագետ Գրիգոր Փիտեճեանը «ԵՊԿ հրատարակչության» ստեղծման առաջին իսկ տարուց 2004 թվականից սկզբում որպես բաժանորդ, այնուհետև, երախտագիտությամբ պետք է նշենք, որ հարգելի պարոն Գրիգոր Փիտեճեանը առաջին հերթին որպես երաժշտագետ իր հողվածներով ստեղծագործական համագործակցություն է ծավալել «ԵՊԿ հրատարակչության» հետ, բազմաթիվ հետաքրքրական հողվածներով ու նաև նրա աշխատակազմի անդամների կատարած աշխատանքները լուսաբանել Սփյուռքահայ մանուլում:

Յ.Գ. 2-րդ. 2008 թվականին պարոն Գրիգոր Փիթեջյանին մեծարեցին Հայաստանի Ազգային գրադարանում տնօրեն Դավիթ Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Անենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ողջունի գրությունը ներկայացրեց գերաշնորհ սրբազան Տ. Անուշավան Եպիսկոպոս ժամկոչյանը ինչպես նաև, ցավոք այժմ երջանկահիշատակ գերաշնորհ սրբազան Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանը, ՀՀ կոմպոզիտորների և երաժշտագետների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը, հանդիսավոր այդ օրը հանձնեց նրան միության անդամության սպասված ու բաղձալի վկայականը, ԵՊԿ պրոֆեսորադասախոսական կազմը ներկայացնելով ազգօգուտ գործունեություն ծավալած բարձր մասնագիտական կրթություն ստացած անվանի երաժշտագետին և նրա գործունեությունը և աշխատությունները, իհարկե գրադարանին նվիրաբերած հեղինակային գրքերի շնորհանդեսով, որ ներկայացրեցին վերը հրատարակված հողված-ուղերձներով ԵՊԿ դոցենտներ արվեստագիտության թեկնածուներ Սիեր Նավոյանը և Անահիտ Բաղդասարյանը:

Յ.Գ. 3-րդ. Պարոն Փիթեջյանը անկախացած Հայաստան իր այցելության առաջին իսկ տարին հյուներկալվեց Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի «ԵՊԿ հրատարակչությունը» 2004 թվականից երբ նոր էինք հիմնադրվել որպես հրատարակչություն, սակայն խմբագրություն դեռ 1998 թվականից «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադրմամբ և այդպես շարունակվեց մեր փոխադարձ բարեկամությունը խմբագրական կազմի հետ, որոն մինչ այսօր շարունակվում է: Շնորհավորում ենք նրան միանալու Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության ընտանիքին և առավել եռանդուն գործելու ի փառս հայկական մշակույթին, երաժշտությանը: Հրատարակչության հետ բարեկամությունը խոսուն ներկայացնում են լուսանկար-վկաները:

երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԻ ՓԻՏԵՃԵԱՆ

**Երաժշտագետ,
Նյու-Յորք**

Սփռոքահայ կեանքին մէջ հազուադէպ երեւոյթ է, եթէ ոչ եզակի, րեւսնել ազգային հասարակութեան մը անընդմիջաբար բերած իր ազգասիրական եւ մարդասիրական ծառայութեանց 175-ամեակի նշումը:

Այս պատմական եւ պատկառելի հասարակութիւնը, երբեմնի Արեւմտահայ մշակոյթի կեդրոն հանդիսացող, երկու հարիւր հազար հաշուող Պոլ-

սոս մայրերը թողելով հիւանդանոցի դարպասէն ներս մտնելու, բոլորովին փարբեր աշխարհ մը պարզուեցաւ մեր առջեւ: Խաղաղ եւ լուռ, հսկայ փարածքի մը վրայ հանգչած հիւանդանոցին մեծ շէնքերը ու եկեղեցին, շրջապարուած՝ խնամուած ծաղկապսակներով եւ բուրասպաններով:

Մեծ հպարտութեամբ եւ հիացումով ծանօթանալէ յետոյ հիւանդանոցի գործունէութեան, ուրախութեան գզացումներով համակուեցան մեր սրբերը երբ այցելեցինք մաքուր, հանգստաւէր պայմաններով, գեղեցկօրէն սարքուած եւ դէպի կեդրոնի հրապտրիչ պարտիզակիս բացուող սենեակներով հայ փարեցներուն բաժինն ու առիթը ունեցանք գրուելու հոն բնակող մեր ազգակիցներուն հետ:

Մեծապէս փայտորիչ ու ազգային հպարտութիւն շոյող երեւոյթ էր միջանցքներուն վրայ բացուող դռներու կողքերուն զետեղուած ներսը գործող

**ՊՈԼՍՈՅ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՅ ԱԳՁԱՅԻՆ
ԻՒԼԱՆՊԱՆՈՑԻ 175-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ
ԻՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԽՏԱՍԱԼԻԿԸ**

սահայ գաղութին հրաշալի իրագործումներէն Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցն է, հիմնուած՝ 1832-ին, բարերարութեամբը Գազազ Արթին Յարութիւն Ամիրա Պէգմանի եւ հրամանագրովը (Ֆէրման) Սուլթան Մահմուդ Բ.-ի:

Ասկէ ուղիղ փասը փարիներ առաջ, երբ փրկիւն՝ Պերճոնիսն ու ես Տիար Արմէն Արոյեանի կազմակերպած դէպի Արեւմտեան-Պատմական Հայաստան ուղեորութիւններէն միոյն կը մասնակցեցինք այցելելու համար մեր ծննդաց ծննդավայրերը, ու երբ Պոլիս կը գտնուէինք, այլ ազգային հասարակութիւններու շարքին այցելեցինք նաեւ այս պատմական ազգային հիւանդանոցը:

Տրուած ըլլալով որ, այսու ներկայացուող խրատալիքը պարտապարտած եւ հրապարակուած է սոյն հիւանդանոցի 175-ամեակին առթիւ, ուզեցի անպայմանօրէն քիչ մը ծանրանալ այս հոյակապ հասարակութեան ներկայացման վրայ եւ զանց առնել մանրամասնեալ կերպով վերլուծումը ու բնութագրումը ներկայացուած երաժիշտներու սրեղծագործութեանց ոճերուն եւ գեղարուեստական արժէքներուն: Յարկապէս որ, գրքոյկին մէջ արդէն իսկ իւրաքանչիւր երկի մասին, պարբերութեամբ մը, պատմական ու երաժշտագիտական յարակ ու մեկին ծանօթութիւններ փոսած է հսկրայայր դաշնակահար-երաժշտագէտ՝ Ծահաւն Արծրունի:

Ազգային արժէքներով խանդավառուիլի գիւրցողի մը համար, անցեալի փառահեղ Պոլիսին փառապասկը եղող Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցին պատմութիւնը ազգային հպարտութիւն առթող կենդանի ազգային կրթող է:

Ուրեմն, երբ Պոլսոյ բազմամարդ եւ բազմաժ-

բժիշկներուն անուանաբարակները (մեծաւ մասամբ հայեր) ու անոնց փակ իրենց հերթին սպասող խնամքի կարօր հիւանդներուն պարզած պարկերը, գոր լոյսի արագութեամբ միտքս ու հոգիս նեփեց պատմութեան խոր արահետներուն մէջ, որոնք վկայեցին հայուն ազնուասրտութեան եւ մարդասիրական ծառայութեանց նկարագրային ոսկեայ առաքինութիւնը:

Ի դէպ ըսեմ, որ թէեւ ամբողջովին հայկական-ազգային հասարակութիւն է հիւանդանոցը եւ բարերարներու կրակներով ու այցելուներու նուէրներով կը պահուի անոր գոյութիւնը, սակայն, զայն գործածող հիւանդներու ուսումնական առ հարիւրը այդ շրջանի ոչ հայ ժողովուրդէն է:

Բազմարեսակ մասնագիտական բաժիններով վերջին նորութիւններով ու արդիական սարքերով օժտուած հիւանդանոց մըն է ան:

Սուրբ Փրկիչ Ազգային Հիւանդանոցը, ամբողջ Պոլսոյ մէջ, ամենահին, առաջին ու ամենակարեւոր հիւանդանոցը կը համարուի:

Հիւանդանոցը ունի իր պաշտօնական «Ս. Փրկիչ» բժշկագիտական թերթը: Ան հայոց պարծանքն է:

Այսքան փեղեկութիւն հիւանդանոցին մասին բաւարար համարելով կ'անցնինք ներկայացնելու «Հայ Յօրինողներ Փոքր Ասիոյ Մէջ» խորհրդակցական բովանդակութիւնը:

Ծիշդ է, որ Սուրբ Փրկիչ Ազգային հիւանդանոցի հոգաբարձութեան արեւնասպետ՝ Տիար Պետրոս Ծիրինօղլուի խնդրանքով ներկայ հայ իգական սեռի երիցագոյն երգահանը՝ Տիկ. Սիրվարդ Գարամանուկ, յօրինեց «Ըսյլերգ Ազգային Հիւանդանո-

ցի» երկը հիմնում ժազլին Էրմէնի համանուն քանասրեղծութեան վրայ, նուիրում հիւանդանոցի հիմնադրութեան 175-ամեակին, սակայն, Շահան Արծրունի գայն արշանագրելու մտքէն թելադրում, յղացած է գեղեցիկ գաղափարը փաստագրելու Փոքր Ասիա ծնած հայ դասական երաժիշկներու գործերէն՝ նմոյշներ կարենալ յաջորդ երաժիշտ սերունդները կապելու իրենց աւագ ու սնցեալ սերունդներու երաժշտական արունեսրին ու արժէքներուն:

Հերեւաքար, այս նպատակադրումով գործի լծումած Շահան Արծրունիի աշխատանքին արդիւնքը կ'ըլլայ պարմականօրէն, գեղարունեսրականօրէն, շնորհալի ու արժէքաւոր եռալեզու (հայերէն, թրքերէն եւ անգլերէն) գրքոյկով մը հիւանդանոցի մուտքին փայտորիչ լուսանկարը կրող «Հայ Յօրինողներ Փոքր Ասիոյ Մէջ» անուն խրատալիկը:

Այժմ ծանօթանաւք խրատալիկին:

91 էջանոց եռալեզու գրքոյկը կը բացուի չախին՝ յարուկ, գեղեցիկ եւ ճաշակաւոր պահպանակի մը մէջ փեղաւորում խրատալիկով եւ աջին՝ հիւանդանոցին քարերար՝ Գագագ Արթին Յարութին Ամիրա Պէգճեանի դասականացած գունաւոր իդանկարի լուսապարճէնով:

Երկրորդ էջին վրայ կը գրենեք կարարողական հերթականութեանք ներկայացում երաժշտական գործերուն անունացանկը իրենց հեղինակներուն եւ կարարողներուն անուններով, ինչպէս նաեւ գործերուն փետողութեան նշումներով: Իսկ հանդիպակաց էջին վրայ կը գրենեք, այբբենական կարգով գերեղում, կարարողներուն անունները իրենց մասնագիտութիւններով:

Ապա, կու գայ գրքոյկին բուն մարմինը կազմող Շահան Արծրունիի կողմէ շարադրում լուրջ ու արժէքաւոր ուսումնասիրութիւնը, որով բացարեւելէ յեփոյ թէ՛ ինչպէս ծնունդ առաւ սոյն խրատալիկը պարարարելու գաղափարը եւ թէ՛ ինչպէս հիւանդանոցի հոգաքարչութեան աջակցութեանք իրագործուեցաւ ան, կ'ըսէ. - «Եկէք սկիզբէն սկսիք»: Եւ յաջորդ 12 էջերով կու փայ Արեւմտահայ մշակոյթի գարթօլեքի շրջանի հայ երաժշտութեան ականաւոր դէմք՝ Պապա Համբարշում Լիմոնճեանով (1768-1839) սկսած Արեւմտահայ երաժշտական մշակութային գործիչներու հարուստ եւ հեփաքրքրական փեղեկութիւններով լեցուն համապարփակ մէկ պարմականը, յարկապէս շեշտելով այն 15 երաժիշկներու մասին, որոնց գործերէն նմոյշներ կը հրամցուին այս խրատալիկով: Այս երաժիշկներուն լուսանկարները եւս գերեղում են ժամանակագրական իրենց փեղերը: (շարունակելի)

(*Կեն կազմին*)



«Գուսան» երգչախմբի անդրանիկ համերգից հետո Վիլիամ Սարոյեանի գարմիկը Սուրէն Սարոյեանը, Գրիգոր վրդ. Փիտեճեանը, Սեւրոպ վրդ. Աճեանը, Նյու-Յօրք, 1963թ.



«Գուսան» երգչախմբի անդրանիկ համերգից հետո Կոմիտաս Վարդապետի սան երաժշտագետ բանահավար Սիրան Թումանճանը և Գրիգոր վրդ. Փիտեճեանը, 1963թ.

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԻ ՓԻՏԵՆԵԱՆ

Երաժշտագետ
Նյու-Յորք

Ա.

Մեծ գիրնական եւ խորհմաց երաժշտագետ պրն. Նիկողոս Թահմիզեան, անգամ մը եւս իր քեղուն գրչէն ծորոդ երաժշտապարմագիրական-վերլուծական ծաւալուն աշխատանքով մը, առանչին գրքով, այս անգամ կը ներկայացնէ 19-րդ դարու հայ երաժշտութեան կարկառուն ղէմքերէն արեւմտահայ երաժիշտ, հայ օբերայի հիմնադիր՝ Տիգրան Չոլիսանեանի կեանքը եւ սրեղծագործութիւնը, որ գրքին ալ անունն է:

առ պարտադի հասարկով, ինչպէս կ'ըսուի գրքին սկիզբը. - «անցած դարավերջի եւ ներկայ հարիւրամեակի հայկական պարբերական մամուլի, յերպարտագնական շրջանի հայ թարերագիրութեան ու երաժշտագիրութեան, մասամբ նաեւ օտարալեզու գրականութեան եւ հիմնականում, կոմպոզիտորի երեսանեան ղիւանի նիւթերի հետազօտութեան հիման վրայ» կը ներկայացնէ ամբողջ գիրք մը նուիրում 19-րդ դարու մեծարարանդ արուեստագետ Տ.Չոլիսանեանի կեանքին եւ սրեղծագործութեան:

19-րդ դարը հայ ժողովուրդին համար եղաւ շրջադարձային դար մը: Այս դարը հանդիսացաւ արդի մեր իրավիճակին ծնունդ փոռոդ ժամանակաշրջանը: Այս դարուն, ինչպէս գրականութիւնն ու թարերագութիւնը նոյնպէս եւ երաժշտութիւնը կը մտնէր նոր փուլի մէջ:

19-րդ դարը յայտկանշունեցաւ որպէս ազգային ազարագրութեան, վերագարթօլիքի դար:

Հայ երաժշտութիւնը, որ միաշայնային էր, այս

ԳՐԱՆՈՒՍՈՒԹՅՈՒՆ - ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԵԶԵԱՆԻ

«ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՆԵԱՆ» գիրքը

Ինծի համար սրտագին պարտականութիւն է այսպիսի ուսումնասիրութեամբ մը յարգելի ընթերցողներուն ներկայացնել այս բացառիկ եւ թանկարժէք գործը, գիրքը:

Աղբիւրներու սահմանափակութեան, ինչպէս նաեւ երաժշտագետներու միայն մասնակի հետազօտութիւններուն պարմառաւ հայ օբերայի հիմնադրին մասին, բացի մանր ուսումնասիրութիւններէ, մանրամասնեալ, լիարժէք գործ մը չէ կարարում:

Տ.Չոլիսանեանի կեանքն ու սրեղծագործութիւնը արժանատրագոյն կերպով ներկայացուելու համար հարիւրէ աւելի տարիներ պէտք էր անցնէին, որպէսզի պրն. Թահմիզեանի նման երաժշտագետ, հեղինակաւոր անչնատրութիւն մը ներկայացնէր զայն իր ամբողջական մեծութեանը մէջ:

Յոսամ պրն. Թահմիզեանին համեպութիւնը վիրատրած չեմ ըլլար, եթէ յայտնեմ հանրութեան թէ՛ ամբողջ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, այսօր, հայ երաժշտագիրութեան ընդհանրապէս եւ միջնադարեան հայ երաժշտագիրութեան յարկապէս ամենահեղինակաւոր անչն է ան:

Ինչպէս միշտ ըսած եմ, պրն.Թահմիզեանի գրչէն ելած իւրաքանչիւր գործ մեծ արժէք եւ կշիռ ներկայացնող աշխատանք է եղած, ու անհունօրէն նպաստած՝ հայ երաժշտագիրութեան: Ու, այս վերջին գործով ան տակաւ կու գայ իր լուման չգելու հայ երաժշտութեան մշակոյթի «պարմասրեսական երաժշտագիրութեան» զանչանակէն ներս:

Վերը երաժշտագետ բառը գործածեցի շեշտելու համար պրն. Թահմիզեանի կրքոտ պրպրոդ, հեպախուռոդ երաժշտագետի նկարագիրը, որուն շնորհիւ ան մեծ համբերարարութեամբ, պարտադի

դարուն պիտի որդեգրէր երոպական բազմաշայնային երաժշտարուեստը: Այս տեղաշարժերը կը պարտադի Ն. Պոլսոյ մէջ, ուր հոծ հայ զաղոթ մը կար իր ամէն տեսակի խաւերով, իրեն յարուկ ղիմագծով, եռեռեպիուն եկեղեցական եւ քաղաքային կենցաղով, ուր երաժշտութիւնը եւս կ'ապրէր աշխոյժ կեանքով մը՝ փաթարում արեւելեան երաժշտականութեամբ, պոլսահայուն յարուկ քաղաքային զօրեղ ղիմագծով մը շեշտում:

Դարաւոր միաշայնային երաժշտութեանէն բազմաշայնային դրութեան անցումը այնքան ալ հեշտ կերպով չընթացաւ:

Երոպական երաժշտութեան եւ շայնագրութեան ծանօթ երիտասարդ երաժիշտներ, որպէս անոնց ջարագովները, հակադրութեան արեւելեան երաժշտութեան ջարագովներուն, որոնք առաւելաբար եկեղեցոյ երաժիշտներ էին, մեծ ու սուր վիճարանութիւններ տեղի ունեցան նոյնիսկ մամուլին մէջ:

Սակայն, երոպական երաժշտութիւնը արագօրէն սկսած էր տարածուիլ տուններու մէջ ու արմար չգել ժողովուրդի կեանքէն ներս երկու պարմառներով, նախ՝ դասակարգային, որովհետեւ սովորութեան եւ ընկալում շարտանիշի վերածում էր բարեկեցիկ տուններուն հիւրասենեակները զարդարել դաշնակով ու այդ ընտանիքին զաւակներուն, յարկապէս աւագ դուարին դաշնակի դասեր առնել տարով: Այս, եղան այնպիսիներ, որոնք լրջօրէն հետեւեցան եւ իւրացուցին երոպական երաժշտութիւնը, որոնցմէ մին էր Տ.Չոլիսանեան:

Կարեւոր է վերահասու ըլլալ 19-րդ դարու պոլսահայ երաժշտական մշակութային կեանքի ներկայացուցած պարկերին կարենալ ըմբռնելու համար

Երաժշտական ԳՐԱՆՈՒՍՈՒԹՅՈՒՆ 2(37)2010

մեր նիւթը հսկողիսացող, մեզի ներկայացուած S.Չոլիսանեանի կեանքին եւ սրեղծագործութեան ամբողջական արժէքը: Որովհետեւ, ինչպէս կը տեսնէք, S.Չոլիսանեան սպարած ու սրեղծագործած է Կոմիտաս Վարդապետէն առաջ, ժամանակաշրջանի մը մէջ, երբ հայ երաժշտութեան հայկականութիւնը իրաւական-վիսապաշտական եւ մերձ-արեւելեան երաժշտութեանց միաշոյնումով հայերէն լեզուի եւ մտածողութեան, ինչպէս նաեւ հայուն յայտնի հոգեյուզականութեան-զգացականութեան (psychotemper) վրայ հիմնուած եւ շեւտորուած աշխատանքին մէջ կը կայանար: Ասոր լաւագոյն օրինակն է, մեզի այնքան սիրելի, Գաբրիէլ Երսնեանի «Հայաստան, երկիր դրախտավայր»-ը, որ կը սկսի E flat մեծալար (major) դաշնակի (cord) հնչիւններով գրուած յարաբար սնանի arpeggio-ի ու ամբողջ երգը յօրինուած է E flat մեծալարի մէջ որ բնաւ կապ չունի հայկական շայնակարգերուն հետ: Ասիկա հայ քաղաքային երաժշտութիւնն է, որ կը նկատուէր եւ կը նկատուի հայկական: Հայկականութեան չափանիշները Կոմիտաս Վարդապետով փոխուեցան: Բայց, անմիջապէս սա այլ ըսեմ, որ երբ մեծ վարպետը՝ Կոմիտաս Վարդապետ, ուզած է դաշնաւորել մեծ ժողովրդականութիւն վայելող «Հայաստան» երգը, պահելու համար անոր արեւմտեան նկարագիրը, կարարած է զայն համաշայն արեւմտեան երաժշտութեան դաշնաւորման պարզագոյն շեւտորուն կիրարկելով շայնասանդուիին հիմնական դաշնակային յառաջարկութիւնները (progression):

Ան նախադրեալէն յետոյ կ'անցնիմ ներկայացնելու գիրքը:

Շուրջ «7x10» մեծութեամբ, 215 էջերով, ազնիւ թուղթի վրայ մաքուր տպագրութեամբ, կողքը զարդարող Տիգրան Չոլիսանեանի գունագեղ իւղանկարի լուսանկարին վրայ հեղինակին եւ գործին անունը գեղեղումով ծաւալուն գիրք մըն է, որ մեծ հաճոյքով կը ներկայացնեն ընթերցասէր հասարակութեան:

Գրքին հրատարակումը կարելի է դարձած շնորհիւ հետեւեալ ազնիւ ազգային հոգածուններու դրամական օժանդակութեանց՝ Տեարք Յարութիւն Մինոնեանի, Յովսէփ Թորաթի, Լուս Անճելըսի Պոլսահայ Միութեան, ինչպէս նաեւ գրասէր բարեկամներու եւ կազմակերպութիւններու:

Գիրքը լոյս տեսած է Փաստօրենայի Գրագարի հրատարակչութեանէն: Գրքի անուանաթերթին կը յաջորդէ S.Չոլիսանեանի մեծադիր նկարը, ապա հակիրճ երկու խօսք մը, ուր կը բացատրուի գրքին նպատակը հետեւելով. «(Գիրքը) հող սրեղծելով ապագայում նրա երաժշտական ժառանգութիւնը աւելի մանրամասն քննելու, վերլուծելու եւ արժեքաւորելու համար»: Եւ, հետեւեալ կարեւոր կէտը որ ըստած է, կ'ուզեմ փոխանցել ընթերցողներուն. - «Աշխարհութիւնը հասցեագրուած է ինչպէս մասնագէտ երաժիշկներին, նոյնպէս եւ երաժշտասէր եւ գրասէր ընթերցող լայն հասարակութեան»:

Ապա, կը տեսնենք բովանդակութեան էջը, որուն հետեւող ութը էջերով պրն. Թահմիզեան կը

պարարաստ ընթերցողը, լաւագոյնս ըմբռնելու համար նիւթը, դէմքին մեծութիւնն ու անոր կարարած դերին տարողութիւնը: Ան կ'ըսէ. «Չոլիսանեանը հայու հսկանարը մասնաշէլի դարձրեց հայուն, շրջապատի ժողովուրդներին եւ ամբողջ աշխարհին: Նրա հսկայ կերպարանը, որ ամենայն իրաւամբ դասելի է Կոմիտասի, Ալ.Սպենդիարեանի ու Արամ Խաչատրեանի կողքին... տիրաբար իշխում է հայկական մասնագիտացուած հիմնաւորց միաշայնութիւնից դէպի արդի բազմաշայնութիւնը տանող կարեւորագոյն ժամանակահատուածի վրայ»:

Ապա, խօսելով S.Չոլիսանեանի երաժշտութեան լեզու-ոճական առանձնայարկութիւններուն մասին, որ կապուած չըլլալով հայ գեղջուկ ժողովրդական երգարուեստին, մնաց, սակայն, հայ հոգետը եւ քաղաքային երաժշտութեանց հաղորդակից ու սրեղծագործեց ըստ այնմ: Այս կէտի մասին պրն. Թահմիզեան կ'ըսէ. «Այնուամենայնիւ լեզու-ոճական առումով եւս չկարուեց ազգային հողից, շնորհիւ հայ հոգետը եւ քաղաքային երգի»:

Յետոյ, յետադարձ ակնարկով մը կը խօսի ուշ միջնադարէն մինչեւ Չոլիսանեան հասնող քաղաքային երաժշտութեան անցած փուլերու մասին, ուր կը տեսնենք թէ՛ ինչպէս հայ ժողովուրդի աշխարհագրական դիրքին եւ տեղւոյն ժողովուրդներու քաղաքային երաժշտական մշակոյթին հետ ուղղակի կամ անուղղակի կերպով շփման մէջ մտնելով հայ քաղաքային երաժշտութիւնը սրացած է հայ-արեւելեան գունաւորում: Հասնելով 19-րդ դարուն, կ'ըսէ. - «Երգ, որի հիմնաւորց այլազան ակունքներին այժմ աւելանում էր (զնայով աւելի վճռական դեր խաղաւու միտումով), երոպական արուեստը, երբ դարակէտերին, առաջին հայեացքից կարծես յանկարծաւ մի բռնկումով, ամբողջ հայ իրականութիւնը լցուեց ազգային ազատագրական ընդհանուր շարժման ու նոր գաղափարաբանութեան տաք շունչով»:

Այս շարժումը յառաջացնելով ազգային զարթոնք, հայ երաժշտութիւնը՝ քաղաքային-ժողովրդական արուեստը եւս իր նոր ազգային-հայրենասիրական նորակերպ երգով դարձաւ ժողովուրդի ազատագրական շարժման մեծ արտայայտիչներէն մին, իր հետ անշուշտ, առաջ քաշելով հայ քերթողութիւնը, որուն հետ անմիջական կապի մէջ էր: Արուեստի բոլոր միւղերուն նպատակը դարձաւ հայրենասիրութեան խթանումը ժողովուրդին մէջ:

«...Ազգային աննախընթաց զարթոնքն ու ազատագրական ընդգրկումն շարժումը հասարակական կեանքի ու մշակութային վերընթացի հսկայ ալիքներ բարձրացրին ու դրանց հետ նաեւ՝ բացառիկ տաղանդի տէր մի ամբողջ շարք դէմքեր՝ ամբողջ հայ իրականութեան չափացոյցներով: Նրանց շարքում առաջին տեղերից մէկը պատկանում է Չոլիսանեանին»:

Ապա, դիտել տալէ յետոյ հայ եւ երոպացի ունկնդիրներուն սրացած գոհացումը Չոլիսանեանի երաժշտութեանն է եւ հայ ունկնդրողին կողմէ անբռնազբօսի կերպով ընկալումը այս նոր, երոպական արտայայտչամիջոցներով սրեղծուած երաժշտական գործերուն, պրն. Թահմիզեան կը նշէ. «Չոլիսանեանի»:

Երաժշտական ՂԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

ձեռնն իր սրեղծագործութեանը ընդգրկեց (կոմպոզիտորական) արուեստի սեռերի գրեթե ամբողջ հարստությունը, յօրինելով դաշնամուրային, առնա-սարակ գործիքային, ձայնային (vocal), փողային և համահնչակային (symphonic) բազմապիսի սրեղծագործություններ»:

Յերոյ, անդրադառնալով արիւնարբու Սուլբան Ապրիլ Համիրի գազանաբարոյ ընթացքին հայերուն հանդէպ, որուն գոհ կ'երթան նաեւ Չոխաճեանի գործերը, հակառակ շարքան փոխուելուն, Չոխաճեանին անունը, սակայն կ'ըսէ պրն. Թահմիզեան, «մինչեւ այժմ էլ բարի խօսքով է յիշարակուով Մերձատր Արեւելքի խոշոր քաղաքների լուսատրեալ երաժիշտների միջավայրում»:

Եւ, վերջապէս, գոհունակութեամբ խօսել է եւրթ թէ՛ սփիւռքի եւ՛ թէ՛ հայրենիքի մէջ Չոխաճեանի գործերուն հանդէպ ցուցաբերուած հեւաբարբոթիւններու մասին, կ'աւելցնէ. «Մինչ այդ էլ, սակայն, անհրաժեշտ է, թէկուզ մեծ ուշացումով, մարել հայ երաժշտագիտութեան սիրտը այրող պարտքերից մէկը՝ Չոխաճեանի կեանքին եւ սրեղծագործութեանը նուիրուած գէթ համառօտ մի մեկնագրութեան աշխատասիրութիւնը»:

Այսպիսով, ահա կը տեսնենք թէ՛ ինչպէս պրն. Թահմիզեան, խղճմանքի տէր երաժշտագետը, որպէս փոշորած սրտի պարտք կը շեռնարկէ այնքան կարեւոր, իր տեսակին մէջ անդրանկի աշխատանքին:

Յաջորդ էջով կը սկսի աշխատասիրութիւնը, որ կազմուած է չորս բաժիններով՝ կեանքը, սրեղծագործութիւնը, վերջաբան եւ յաւելում:

Գիրքը կը փակուի պրն. Թահմիզեանի պարկառու կենսագրականով:

Բ.

Այժմ, կ'անցնիմ ներկայացնելու «Տիգրան Չոխաճեան» գրքին նիւթը:

ԿԵԱՆՔԸ (էջք 13-85)

Պրն. Թահմիզեան, Տ.Չոխաճեանի կեանքը ներկայացնելու գիրականի իր իւրայարուկ ոճով, այս բաժինով, ոչ միայն տուած է կարելի եղած չափով անոր կեանքի մանրամասնութիւնները, այլ նաեւ ներկայացուցած՝ այդ ժամանակաշրջանի երաժշտական, քաղաքական, գրական մշակոյթի, ընկերային կեանքի եւ քաղաքական իրադարձութիւններու խորացնալ պարունութիւնը:

Այսպիսով, հեղինակը Տ.Չոխաճեանի կեանքը պարունական չափազանց հարուստ ծանօթութիւններով լեցուն շրջածրի մը կամ հիւսուածքի մը մէջ դնելով կը ներկայացնէ զայն աւելի պայծառ դիմագիծով մը եւ լրիւ արժեւորումով:

Պրն.Թահմիզեան եօթանասուն երկու էջերու վրայ տարածող Տիգրան Չոխաճեանի այնքան հեւաբարբոթական եւ հարուստ կեանքը ներկայացուցած է ինը մասերով, զօրս իրարմէ բաժանած է աստղիկներով:

Թէեւ այս բաժանումները ցոյց կու տան հեղինակին այնքան կարեւոր տրամաբանուած եւ ծրագ-

րուած մտային դասաւորումները, միաժամանակ, սակայն, մեծապէս կը նպաստեն եւ կ'օգնեն ընթերցողին դիրութեամբ հետեւելու, հասկնալու եւ ըմբռնելու զարգացող կեանքի մը բարդ ծալքերը:

Ահա թէ՛ ինչպէս պրն. Թահմիզեան պարզ ու յարակ շեռով կը սկսի այս բաժինը.-

«Տիգրան Չոխաճեանի կեանքի մասին մանրամասն տեղեկութիւններ չեն հասել մեզ տարաբախաբար:

Պոլիս է եղել նրա ծննդավայրը, եւ այստեղ է որ նա հասակ է առել, կրթուել, դաստիարակուել, նկարագիր կերտել եւ գործունէութիւն ծաւալել»:

Բացման այս փոդերով պրն. Թահմիզեան ընթերցողին միտքը անիջապէս կը փոխադրէ այն վայրը, ուր տեղի սիրտի ունենան յաջորդ եօթանասուն երկու էջերով տրուած երաժշտապարմաբանական երեւոյթները, Չոխաճեանի կեանքին անցողարձեռն ու զարգացման երեսները:

Նախ, ան շարք հակիրճօրէն, գրեթէ թուելու շեռով, կը ներկայացնէ 19-րդ դարու Օսմանեան Կայսրութեան Պոլսոյ վիճակը - 1839թ-ի Թանգիմաթին շնորհած որոշ բարելաւումները Պոլսոյ եւ Չմիւռնիոյ մէջ, Պոլիսը՝ իր 220 հազարէ աւելի հաշուող հայ զաղութով, իր դպրոցներով, եկեղեցիներով, քարտուներով, տպագրատուներով, պալատական արհեստարարներով, մտաւորականներու համապրեդութիւններով, 1863թ-ի Ազգային Մահմանադրութիւնով արեւելեան ու արեւմտեան հակումներ ունեցող երաժիշտներով եւ այլն, - Չոխաճեանի ծնունդը դնելու համար պարունական իր շրջանակին (context) մէջ:

Հերեւաբար, ժամանակաշրջանի մասին որոշ կնիքային պարկեր մը տալ է յերոյ, կ'ըսէ. - «Տիգրան Չոխաճեան ծնուել է Կ. Պոլսի Բերա քաղաքում, 1837թուականին, արքունի գլխաւոր ժամագործի հայ կաթողիկէ բարեհամբաւ ընտանիքում»:

Կարեւոր է ծանօթացումը միջավայրի այս ամփոփ պարկերին կարենալ աւելի յարակօրէն տեսնելու համար Չոխաճեանի անման ընթացքին իր շրջապարէն կրած տպաւորութիւնները:

Կը տեսնենք թէ՛ ինչպէս պարունակի Չոխաճեանի դպրոցական տարիներուն անոր երաժշտական դաստիարակութեան մասնակցած է ազգային երաժշտարուեստի արեւելյան ազդեցութիւնը արեւմտեանով հակակշռող պոլսահայ տաղանդաւոր երաժիշտ՝ Գաբրիէլ Երանեան:

Տակաւին պարունակի, Չոխաճեան իր դաշնակի սրեղծագործութիւններով եւ դաշնակահարի արուեստով արդէն իսկ հասարակութեան ուշադրութիւնը կը գրաւէ:

Ան կ'ուսանի պոլսաբնակ իրաւացի երաժշտապետ Մանչոնիի ղեկավարութեամբ:

Պրն. Թահմիզեան խօսելով այս շրջանի հայ քաղաքական իրավիճակին մասին, եւ նշելով անոր թողած ազդեցութիւնը երգ-երաժշտութեան վրայ, կը վերջացնէ բաժնին առաջին մասը տալով արեւելահայ ու արեւմտահայ երաժշտապարմաբանական մեծապէս արժէքաւոր էջեր, ուր յիշել է եւրթ արդի հայ քարտուի ծնունդի մասին եւս, որ արեւմտահայ

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

իրականություն հետ կապուած երեւոյթ է՝ 17-րդ դարուն Լվովի հայ գաղութէն սկսելով «Իսկ ԺԹ հարիւրամեակուն» Կ. Պոլսի եւ Չմիւռնիայի հայկական կաթողիկէ դպրոցներուն»: Եւ կը շարունակէ. «1850-ական թուականների երկրորդ կէսին դպրոցական քաւրրոնից սերուն էն Կ. Պոլսի թաղային քաւրրոնները, որոնք սկսուն էն գործել ինչպէս դերասանական, նոյնպէս եւ երաժշտական խմբերի մասնագիտացման նշանաբանի ներքոյ»:

Այս շար կարետր կէտրով կը վերջանայ առաջին մասը:

Կարետր՝ անոր համար, որ հայ օբերայի արուեստին ծնունդը արեւմտահայ իրականութեան հետ կապուած երեւոյթ ըլլալով սերտօրէն առնչուած է ան, յարկապէս, պոլսահայ թաւրերգութեան հետ:

* * *

Երկրորդ մասով՝ վերահասու կ'ըլլանք

Թէ՛ Բերայի եւ Օրթագիւղի թաղային քաւրրոններուն մէջ ներկայացուած պայմանադրեւանասիրական տրամախաղերու ազգայնաշունչ ոգին կը փոխանցուի նաեւ երգին ու նուագին:

Թէ՛ 1858-ին Արիարակէս Յովհաննէսեանի եւ Գաբրիէլ Երանեանի նախաշեշտութեամբ լոյս կը տեսնէ «Բնար Արեւելեան» առաջին երաժշտական ամսաթերթը, արեւմտեան չայնագրութեամբ:

Թէ՛ 1859-ին Խաւազիւղի մէջ նոր հիմնուած քաւրրոնին երաժշտական ղեկավարի պաշտօնը կը ստաննէ երիտասարդ, այլեւս երաժշտագէտի համբաւի փիրացած Չոլիսանեան, որ օրուն պահանջը եղող հայրենասիրական երգեր կը յօրինէ զանազան ներկայացումներու համար:

Թէ՛ այսպիսի ներկայացումներով «Կ. Պոլսի հայկական գաղութում, ճաշակ եւ պարուստել, վիպապաշտական տրամադորգիայի սկզբունքներն եւ հաստարել, ազգային արժանապարտութեան միութեան եւ ազատութեան գաղափարներն եւ շեփորել, որով դաստիարակուել է արդէն նախապարտարտող մասնագիտացուած քաւրրոնը հասկանալու եւ զնահարելու ընդունակ հանդիսարետը»:

Թէ՛ 1861-ին կը հիմնուի հռչակատր «Արեւելեան Թատրոնը», իր շուրջ հասարակով Պոլսոյ երեւելի մտաւորականները, ընդ որս նաեւ Տ. Չոլիսանեան:

Թէ՛ 1862-ի մարտին, կը ստեղծուի «Բնար Հայկական» երաժշտական ընկերութիւնը, որուն հիմնադիր անդամներէն մին կ'ըլլայ Չոլիսանեան: Եւ շնորհիւ Չոլիսանեանի, «Բնար Հայկական» ամսաթերթին, որ տարի մը առաջ փոխարինած էր «Բնար արեւելեան»-ին, իր նոր խմբագրական կազմին մէջ կու զան իրալացի երաժիշտ Կ. Ֆոսիկի, ինչպէս նաեւ հայ գրականութեան մեծ դէմքերէն Սկրտիչ Պէշիկթաշեան, Նահապետ Ռուսինեան, Գրիգոր Օպեան եւ ուրիշներ:

Թէ՛ 1862 մայիս 12-ին, Պոլսոյ Նաուն քաւրրոնին մէջ Թովմաս Թերգեանի «Սանդուխտ» պարմական ողբերգութեան ներկայացումէն առաջ կը կարարուի Չոլիսանեանի «Բաժակ Ողջոյնի» երգը, որուն մասին մեծ դրուստարեւելներով կ'արարայայ-

տուին հայ եւ թուրք թերթերը:

Թէ՛ քաւրրոնի այս արագօրէն ծաղկունն ու երգերով ճոխացող ողբերգութիւններու եւ կարակերգութիւններու բարձրորակ ներկայացումները նկարի ունենալով Չոլիսանեան եւ Թերգեան հայկական օբերա ստեղծելու ծրագիրներ կը փայտիայեն:

Չոլիսանեան իրագործելու համար իր ծրագիրները, երաժշտական լման եւ բարձրագոյն ուսում ստանալու նպատակով, իր ուսուցչին՝ Մանչոնիին եւս յաննարարութեամբ, «Սանդուխտ»-ի ներկայացումէն յետոյ կը մեկնի Միլան, Իտալիա:

Գ.

Երրորդ մասը կը վերաբերի Չոլիսանեանի Միլանի մէջ ուսանողութեան տարիներուն:

Այս մասով ընթերցողը կը ծանօթանայ 19-րդ դարու, աշխարհի օբերայի կեդրոն, Միլանին:

Հեղինակը ցաւով կ'արարայայտուի, որ Չոլիսանեանի ուսանողութեան մասին տուեալներու եւ ծանօթութիւններու չգոյութեան կամ բացկայութեան պարմառաւ, առ այժմ չէ կարելի ըսել թէ՛ ո՞ր երաժշտականոք յանախած է Չոլիսանեան: Բայց, ուր ալ որ յանախած է լաւապէս խորացած է ուսման մէջ, որովհետեւ արդիւնքը՝ այսինքն Չոլիսանեանի գործերը այդ ցոյց կու տան, հոյակապ եւ:

Պրն. Թահմիզեան կ'ըսէ. «Չոլիսանեանը ցնցուած է եղել տեսածով, լսածով (ինչպէս եւ պէտք էր սպասել), առաւել՝ Վերդիի օբերաներով եւ «Լա Սկալա»-ի թաւրերախմբի երաժշտա-կարարողական անհասանելի վարպետութեամբ»:

Ապա, խօսելէ յետոյ Իտալիոյ 19-րդ դարու ներկայացուցած երաժշտարուեստի ոճին (style) մասին, որ ընկերային եւ քաղաքական իրարարշտութիւններու արդիւնք եղող հայրենասիրական ոգով յագեցած վիպապաշտութիւն (romantism) էր, սկսնարկով մը հեղինակը կ'իմացնէ նաեւ թէ՛ Միլանի հայ գաղութը սիրած, շրջապարած ու հոգ տարած է Չոլիսանեանին:

Չոլիսանեան Իտալիա գրնուած միջոցին միշտ կապը պահած ըլլալով ծնողներուն եւ «Բնար Հայկական» ընկերութեան հետ, տեղեակ եղած է Չմիւռնիոյ եւ Պոլսոյ մէջ խմորտող ազգային երգերու ու ազգային օբերայի սուր պահանջի հարցին ու այս կապակցութեամբ իրմէ սկսնալուսածներուն:

Չմիւռնիոյ «Արշալոյս Արարարեան» թերթը 1863, թիւ 704-ին մէջ կը գրէ. «Ժողովուրդն սրակ չպիտի ինայէ, թէ որ հայերէն օբերաներ ներկայացնելու ըլլան, մանաւանդ երբ ազգային ըլլան»:

Իսկ, յաջորդ թիւին՝ թիւ 705-ին մէջ հետեւեալ տողերը կը գրուին Չոլիսանեանին սկսնարկելով. - «Չմիւռնիայի երիտասարդաց մէջ ունիւնք մեկը, որ սոյն արուեստին կը պարապի եւ կը յուսանք որ թիչ արեւնէն իր աշխարտութեամբը հայկական օբերա մը կը տեսնենք»:

Ուսանողութեան երրորդ տարիին Չոլիսանեան արդէն իսկ կը շեշտարկէ «Արշակ Բ»-ի պարմա-հայրենասիրական օբերայի աշխարանքներուն:

Պրն. Թահմիզեան այս մասը կը վերջացնէ հե-

երաժշտական շՊԳՍՍՏԱՆ 2(37)2010

յրենալ րոդերով. «Եվ իրօք, գերագանց արդիւնքներով ասարելով ուսումնառութեան եռամսյա շրջանը, կոմսոգիւրորը 1865թ-ին վերադառնում է Պոլիս՝ բեռնուած արդէն պարրասար կամ լոկ վերջնական իմբագրման կարօր բազմաթիւ սրեղծագործութիւններով, այդ թում եւ «Արշակ Բ» օպերայի վերաբերող ծաւալուն հարուածներով, զինուած երաժշտա-արտայայտչական միջոցների արդի գրեթէ ամբողջ զինանոցով, հաղորդակցուած երաժշտութեան զարգացման արդի գրեթէ ամբողջ զինանոցով, հաղորդակցուած երաժշտութեան զարգացման համաերուպական ընթացքին, ընդմիջար հարազարացած Վերդիի օպերայի անկրկնելի արուեստին, րոգորուած գեղագիտական առաջարկ գաղափարներով ու կրակուած ազարարտելի վեհ յգրումներով»:

Այսրեղ կը րեսները Չոխաճեանը Պոլիս վերադարձած, անուանացած իրեն կողակից ունենալով Աննիկ Ապագեանը: Որպէս ասրուարի միջոց, ան րուներէ ներս դաշնակի դասեր կու րայ:

Անոր մանկավարժական աշխարակներուն մասին, ինչպէս նաեւ պարկառագոր ունենալութեան նկարագրային յարկանչական գիծերու ու երաժշտական ընթրնումներուն մասին իօսած ժամանակ պր.Թահմիգեան յաճախ կը վկայակոչէ Չոխաճեանի աշակերտուիներէն Անայիսի՝ Եսիիմէ Աեպիսեանի արժքարուր «Յուշեր»-ը:

Այս շրջանին Չոխաճեան կը ջանայ ամբողջացնել «Արշակ Բ» օպերան, եւ միաժամանակ «Արեւելեան Թարրոն»ի ներկայացումներուն ու այլ իումբերու համար երաժշտութիւն կ'սրեղծէ:

1860-ական թուականներու երկրորդ կէտին կը պարկանին անոր ջայնային նուագական կամ զուր նուագական գործերը, րոդային նուագախումբի համար յորինած քայլերգները գորս իր դեկավարութեանը կը հնչեցնէր Պոլսոյ հանրային պարտէզներուն մէջ:

Դժբախտաբար, թարերական ներկայացումներու համար գրած իր երաժշտութիւնը լման կերպով չէ հասած մեզի: Եւ յիշելէ յերոյ 1867, րեպր. 28-ին Նաում թարրոնի մէջ ներկայացում Սէրէֆճեանի հեղինակած «Վարդան Մամիկոնեան րիկիչ հայրենեաց» երգախառն ողբերգութիւնը, որուն երաժշտութիւնը յորինած էր Չոխաճեան, պրն. Թահմիգեան կ'ըսէ. «Սեզ չեն հասել՝ ոչ Սեղեֆճեանի ինղրոյ առարկայ ողբերգութեան ընագիրը եւ ոչ էլ Չոխաճեանի համապարասիան երաժշտութիւնը: Ըոկ ժամանակի մամուլի իանդավառ արձագանքներն են վկայում այն մասին, որ ներկայացումը բացառիկ յաջողութիւն է ունեցել (նաեւ նրա հայրենասիրական իտրըը լաուագոյնս բացայարած Չոխաճեանի երաժշտութեան ու երգերի շնորհիւ), եւ մեծ ոգեորութիւն առաջացրել հայ հասարակութեան րարբեր իաերում եւ մանաւանղ երիրասարդութեան շրջանակներում: Ոգեորութիւն, որ գրեթէ քաղաքական ցոյցի է վերածուել ընղղէմ բռնարիական կարգերի: Այս մթնոլորտում ներկայացումը կրկնուել է նոյն թուականի մարրի 1-ին ու ասրիի 8-ին եւս, ի վերջոյ իր վրայ է հրասիրել սուրանա-

կան կառավարութեան յարուկ ուշաղորութիւնը, որի հեպեաներով էլ, 15-20 օր անց րակուել է Արեւելեան Թարրոնը»:

1867թ-ի սկիգըը, վերջացնելու համար «Արշակ Բ» օպերան, Չոխաճեան իր մրերիմ բարեկամ՝ Թովմաս Թերգեանի միջոցաւ կ'ապահովէ համբաւարուր մարրարասպեր ու երաժշտասէր Յակոբ Պէյ Պալեանի մեկենասութիւնը:

1868թ-ին, Չոխաճեան կ'ասարտէ օպերան, որ սակայն, պերական գրաքննութեան համար զայն «Օլիմպիա» կ'անուանէ, որուն անղրանիկ կարարման կապակցութեանը պրն. Թահմիգեան կ'ըսէ թէ՛ ամենայն հասանականութեանը 1868-ի վերջարտութեան Յակոբ Պալեանի ընակարակին մէջ կարարում է նահերգանըը:

1869թ-ին, Չոխաճեան երաժշտութիւն կը յորինէ «Պերրոս Դուրեանի Վարդ ու Շուշան հովուերգական մեղողրամայի համար», ինչպէս նաեւ երաժշտութեանը կը վերակենղանացնէ Սր.Թղլեանի «Մեծն Տրդար» թարերախաղը:

Ըար Սմբար Էէսէճեանի, որ Չոխաճեանի աշակերտը եւ օգնական է եղած, «Արշակ Բ» օպերան, առաջին անգամ ըլլալով, 1869-ին կը ներկայացող Նաումի թարրոնին (Բերա) մէջ իրայական օպերայի իումբին կողմէ իրայերէն լեզուով:

Օպերան կազմակերպողները երեր ներկայացումներէ յերոյ հագիւ ժախները կը գոցեն: Երրորդ ներկայացման հատոյթի կէտը կը րրուի Չոխաճեանին որպէս հեղինակի իրաւուրը: Երրորդ ներկայացումը կ'ըլլայ նաեւ «Արշակ Բ»-ի վերջին ընմաղրութիւնը:

Ապա, պրն. Թահմիգեանի պրպրումները ցոյց կու րան թէ՛ օպերային նահերգանքն ու առաջին պարկերը (Արշակի մուրքով) կարարում են կայսերական թարրոնին մէջ, ինչպէս նաեւ նահերգանքը կարարում է Վիէննայի եւ Նարոլիի մէջ: Իսկ, աեւի յաճախ՝ Պոլսոյ, Չմիւռնիոյ եւ Փարիզի մէջ:

1871-ին, լոյս կը րեսնէ «Արշակ Բ» օպերային թարերարերըը իրայերէն եւ հայերէն լեզուներով, որ իբրեւ առաջին հայ օպերայի թարերարերըը ջերմ ընղունելութիւն կը գրնէ:

Պրն. Թահմիգեան, այս առնչութեանը հայ մամուլի թեր ու դէմ արարայարութիւնները ներկայացնելէ եւ բացարականներ րայլէ յերոյ կը վերջացնէ այս մարը նշելով. - «1870-71 բոլորում է Չոխաճեանի կենասարութեան կարերրագոյն շրջաններից մէկը, երը նա իր ամէնօրեայ գործունէութեանը հանղիսանում էր բազմարակնց հայութեան ազարարտելի իղձերն արարայարող առաջամարրիկներից մէկը: Պոլսում արղէն իսկ մռայլում էր մթնոլորտը, եւ այղ պայմաններում էր, որ հեպրագայ րասնամեակներում րեղի ունեցած կրրական րոտիոտութիւններից էլ առաջ, երաժշտասէրների նորանոր շրջանակներ էր նուածում Չոխաճեանի «Գարուն» երգռումանը, հայրենասիրական զգլիչ դրսերումների ջերմութեանը, գոնէ առժամանակ բթացնելով սուրանական գրաքննութեան զգօնութիւնը»:

Երաժշտակամ ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

* * *

Այս մասին մէջ կը տեսնենք թէ՛ ինչպէս Պոլսոյ քաղաքական պայմաններուն աստիճանական վարթարացման պարճառաւ Չոխաճեան ժակրային փոփոխութիւն կը կարարէ իր սրեղծագործական աշխարհակրին մէջ եւ կ'որդեգրէ երաժշտական կարակերգութեան սեռը:

1872-ին կը հանդիպի Միլանի իր նուագարդար ընկերներէն Ալպորէթթոյին, որ նոյնպէս իորհորդ կու տայ իրեն արեւելեան կեանքին կապուած երաժշտական կարակերգութիւններ յօրինելու: Պրն. Թահմիզեան հետեւեալ մատնանշումը՝ կ'ընէ. - «Չոխաճեան ինքն էլ անշուշտ տեսնում էր, որ սրեղծագործութեան բնագաւառում առաջ շարժուելու այլ ուղի չկայ արդէն»:

Հերեւաքար, 15 փարի մայրեկի լեզուով սրեղծագործելէ յետոյ, սրեղծագործական աշխարհակրները յառաջ տանելու համար «նա պէտք է անցնէր փաստօրէն թրքական կենցաղը պարկերոյ երաժշտարարական երկերի կերպմանը, աւելի եւս հարստացնելով հայ նուագարդարի իր լեզուն ու ոճը, բացայայտելով սեփական փառանդի ու իստնութեան նոր կողմերը, եւ չգրելով քողարկուած կերպով, անուղղակիօրէն, երբեմն էլ նոյնիսկ թափանցիկ ակնարկներով՝ դարձեալ արտայայտել հայ հասարակութեան ազգային տենչերն ու իղջերը»:

Այսպիսով, 1872-ին Չոխաճեան կը կարարէ հիմնական այդ փոփոխութիւնը, որով կը դառնայ Թուրքիոյ ու ամբողջ Մերձատր Արեւելքի երաժշտական կարակերգութեան սեռի հիմնադիրը:

Ի դէպ ըսեմ, որ արդէն մի քանի փարի ետք, 1879-1909 փարիներուն, պէտքական հրահանգով արգիլուեցան հայերէն լեզուով կարարուած ներկայացումները: Ու այս շրջանին, այլեւս բեմերէն ազգային գաղափարներով ժողովուրդ ոգեւորելու մասին չէր կարելի որեւէ խօսք ըսել: (1909-ին, երբ կը վերցուին արգելքները, շնորհիւ Վահրամ Փափագեանի ջանքերուն բեմ բարձրացող առաջին թատերգութիւնը կ'ըլլայ «Սանդուխտ»ը:)

Չոխաճեանի յօրինած առաջին կարակերգութիւնը կ'ըլլայ «Արիֆ»ը, որ թրքական գիւղաքաղաքային կեանքէ առնուած նիւթ մըն է:

Պրն. Թահմիզեան հետաքրքրական տեղեկութիւններով ցոյց տալէ յետոյ «Արիֆ»ը բեմ հանելու հետ կապուած դժուարին աշխարհակրները, կ'ըսէ թէ՛ վերջապէս 1872-ի վերջերուն սպասուած յայտարարութիւնը լոյս տեսաւ մամուլին մէջ.

«Թատերանուագս երիս արարս,

Երաժշտութիւնը, պ.Տ.Չոխաճեանի»:

Դեկտեմբեր 17-ին, Կէրիկ-Փաշայի Վարդովեան թատրոնի մէջ տեղի կ'ունենայ «Արիֆ»ի անդրանիկ ներկայացումը: Սակայն, Չոխաճեանի նիւթական ակնկալութիւնները չորուելով անոր, Վարդովեանի հետ կապերը կը խզէ ու իր համետր ուժերով կ'անցնի ներկայացումներու Պոլսոյ զանազան թատրոն մէջ:

Ի տես այս գործունէութեան, գործառական (business) գաղափարներով Չոխաճեանին կը մօ-

տենայ Պոլսոյ մեծահարուստներէն արուեստաւէր Եղիազար Մելիքեան:

Ֆրանսերէնով կը ներկայացնեն «Չէմիրէ»:

1891-ին Չոխաճեան մեծ յոյսերով կը մեկնի Փարիզ:

* * *

Այս մասին մէջ, հեղինակը նախ մի քանի պարբերութիւններով ներկայացնելէ յետոյ Ֆրանսայի երաժշտական աշխարհին եւ ֆրանսահայ գաղութին վիճակները, կ'անցնի խօսելու Չոխաճեանի «Չէմիրէ»ի բեմադրութեան հետ կապ ունեցող հարցերուն մասին:

Չոխաճեան կը յաջողի մեծահարուստ արուեստաւէր Էզնայեանի դրամական խնայումը սրանալ «Չէմիրէ»ն բեմադրելու համար Փարիզի մէջ:

Չոխաճեանի ուրախութիւնը անսահման կ'ըլլայ: Որպէս արուեստագէտ, ահաւասիկ, առիթը ներկայացուած է համաշխարհային ճանաչում գրնելու: «Բայց, աւա՛ղ, ճակարագիրը անողորմ գրնուեց: Քիչ ժամանակ անց, Էզնայեանը յանկարծամահ է լինում, որով նուագարդարի յոյսերն ի դերու են ելնում: Հայութիւնը կորցնում է մի անշնաւորութիւն, որ պարտաւարում էր մեկեւնա դառնալու: Փարիզի հանդիսարեւը կորցնում է մի չքնաղ օքերա, որն անկասկած կը հարստացնէր իր պարկերացումները Արեւելքի եւ հայու հանճարի մասին: Աւելի շարքս կորցրեց հայ օքերային արուեստը, որն այդպէս էլ այլ առիթ չունեցաւ ներկայացնելու Եւրոպայի կեդրոնում» կ'ըսէ պրն. Թահմիզեան:

Այս հարուածը ծանր կու գայ Չոխաճեանին: Նոր մեկեւնա գրնելու ճիգերը սպարդիւն կը մնան: Սակայն, այս ընթացքին ծանօթանալով «Սպանդիդ Թավեռն»ի սենեկային նուագախումբի ղեկավար Ալթերի հետ, կը յաջողի իր գործերէն «Արշակ Բ»ի նախերգանքն ու «Արեւելեան ֆանթազիա»ն կարարել փայլ նուագախումբային համերգներէն մէկուն, ուր ժողովուրդի իսկողմառ ծափահարութեանց փակ կը կրկնուի յայտագրին հայկական բաժինը:

Ֆրանսացի երաժշտական քննադարներ մեծ հիացումով կ'արտայայտուին Չոխաճեանի մասին ֆրանսական մամուլին մէջ: Պրն. Թահմիզեան կ'ըսէ. - «Նրանցից մէկը Չոխաճեանին ողջունել է որպէս Արեւելքի Օֆենբախ-ի: Մէկ ուրիշը գրել է. - Արտադրելու փարօրինակ կարողութեամբ մը օժտեալ, անսահման է իր կարարած եւ մեզի աւանդած գործը: «Թան» թերթի աշխարհակր Վեբերը մի քանի դրուարակից յօդուածներ է նուիրում Չոխաճեանին եւ այլն»:

Չոխաճեան փասնումէկ ամիս Փարիզ մնալէ յետոյ, դրամական պաշարը գրեթէ սպառած, իր հիմնական ծրագիրը չիրագործած կը վերադառնայ Պոլիս:

1892-ին, Չոխաճեան կը ծրագրէ Թիֆլիս երթալ Կովկասահայութեան ներկայացնելու համար իր սրեղծագործութիւնները: Պոլսոյ London Herald-ն ու Թիֆլիսի Արշազանգ թերթերը այս կը հաստատեն. սակայն, քոլէրա հիւանդութեան համաճարակի պարճառաւ չիրականանար այս ծրագիրը, կ'ըսէ

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

պրն. Թահմիզեան եւ կ'աւելցնէ թէ՛ 1894-95 չմռան ամիսներուն Ֆրանցիկի, որ համաշայնած էր Չուխաճեանի հետ, իր իրաւական խումբով բազմիցս, մեծ յաջողութիւններով, կը ներկայացնէ «Չեմիրէն, որ սակայն Պոլսոյ մէջ տիրող հայահալած քաղաքականութեան հետեւանքով սրտերի տակ կը մնայ:

Չուխաճեան, իր ազգային զգացումներուն որպէս արտայայտութիւն Գոնգորտիա թայրոնին մէջ նուազահանդէս մը կը կազմակերպէ, ուր, կ'ըսէ պրն.Թահմիզեան, «ունկնդիր հոծ բազմութիւնը յորակայս ողջունում է Չուխաճեանին, հարիւր հոգուց բաղկացած սիւֆօնիկ մեծ նուազախումբի կատարմամբ եւ հեղինակի դեկավարութեամբ հնչած «Արշակ Բ»ի նախերգանքից յետոյ (յայտարարում այն անուանուել է Օլիմպիա)»:

Ապա, Չուխաճեան կ'ուզէ Չմիւռնիոյ մէջ գործունէութիւն ծաւալել. սակայն, հակառակ առաջին նուազահանդէսին առթած մեծ իսանդաւառութեան, իր նիւթական համեստ ակնկալութիւնները ամբողջութեամբ չստանալու համար, ինչպէս նաեւ առողջական վիճակին պարճառաւ, կը ստիպուի վերադառնալ Պոլիս, ուր այս անգամ ամէն հայր նման, իր զգայուն հոգին եւս անհունօրէն կը փոթորկի լսելով համիւրեան ահաւոր կոտորածներուն մասին:

Պրն. Թահմիզեան յիշել է յետոյ այն շրջանները ուր հայերը ջարդուեցան, կ'աւելցնէ. «Իսկ ամռանը (1896թ.) կոտորածների սարսափելի ալիքը հասնում է Պոլիս: Այստեղ վաղուց ի վեր որեւէ պարտուակ որոնող բութ դահճապետները վերջապէս գրկում են այն:

Բանկ Օթունահի դէպքը: Ծակարագրի հեգնանքը նրանում էր, որ բանկի գրաւումը 1896թ. օգոստոսի 14-ին (ընդամենը 12 ժամով), կուսակցութեան անհրաժեշտ էր լոկ յայտարարի ներկայացնելու համար Պոլսում վեց տէրութիւնների դեսպաններին, պահանջելով, որ դադարեցուեն մարդկայնութեան դէմ գործուող անլուր վայրագութիւնները Արեւմտեան Հայաստանում եւ իրագործուեն, վերջապէս, իտարացուած բարենորոգումները:

Եւ ահա, ի պարասիս այս արդարացի պահանջներին, զազազած սուլթանը (նոյն ինքն Արդով Համիդը) հրամայում է արեան մէջ խեղդել հայութեան շայնը: Երեք օր ու զիշեր իրենց սեւ գործն են կատարում զինուած ամբոխն ու խուժանը, զինուորական յարուկ ջոկարներն ու ոստիկանական խմբերը, քաղաքի քրէական յանցագործներն ու մասնագիրացած մարդասպանները եւ առհասարակ հասարակութեան ամէն տեսակի թափօնները:

Չոհուն են տասնեակ հազարաւոր անմեղ հայ քաղաքացիներ: Պոլսում արուեստի աշխարհը վերածում է ատերակների կոյրի, մանուսանդ հայ իրականութեան շրջանակներում: Չուխաճեանը դարձեալ, եւ այս անգամ ամենայն վճռակալութեամբ, հայեացքն ուղղում է դէպի Չմիւռնիա, եւ քիչ անց ընտանիքով տեղափոխում այնտեղ»:

* * *

«Մանրամասն տեղեկութիւններ չունենք, տարաբարարար, արուեստագէտի կեանքի նաեւ այս՝ վերջին շրջանի մասին»՝ տողերով կը սկսի Չուխաճեանի կենսագրութեան այս վերջին մասը: Այդու ամենայնիւ պրն. Թահմիզեան կ'ըսէ թէ՛ Չուխաճեան Չմիւռնիոյ մէջ գրադեր է մանկավարժութեամբ, աշխատեր է մեծ ու փոքր գործերու վրայ, մասնակցեր է դպրոցական հանդէսներու եւ կազմակերպեր է համերգներ որոնցմէ միոյն 1897 յունուար 12-ին, Սրբ.Հռիփսիմեանց Ազգային Վարժարանին մէջ ի նպաստ հայկական որբանոցի կատարուած համերգին մասին կը խօսի, եւ կը նշէ կարգ մը ներկայացուած գործերու շարքին «Հայր մեր»ը որպէս նոր երկ:

Հակառակ Չուխաճեանի նիւթական անշուկ վիճակին, ան երբեք չիրաժարեցաւ «երաժշտա-հասարակական օգրաշար գործունէութիւնից»:

Անողորմ հիւանդութիւնը՝ քաղցկեղը Չուխաճեանի առողջական վիճակը արագօրէն քայքայելով անկողնին կը դատարարէ հէք արուեստագէտը, որմէ քիչ յետոյ՝ 1898, մարտ 23-ին հոգին կ'աւանդէ Վերտիի Օթէլլօ օբերային շայնարարը շեռքերուն մէջ:

Մի քանի օր ետք թաղման արարողութիւնը կատարուած է Չմիւռնիոյ հայոց գերեզմանարան մէջ մասնակցութեամբ եկեղեցականաց դասուն, եւ ի ներկայութեան մրատրականներու, դպրոցականներու եւ ժողովուրդի հոծ բազմութեան մը: Վիքթոր Բալիայի նուազախումբը այլ երկերու շարքին կը հնչեցնէ նաեւ վարպետին յօրինած «Մահաւնուագ»ը:

Ապա պրն. Թահմիզեան կը մէջբերէ հայերէ եւ օտարներէ արտայայտութիւններ:

Չմիւռնիոյ առաջնորդը՝ Եղիշէ Արք. Գուրեան (այսպէ՛ Պարրիարք Երուսաղէմի - 1921-էն 1930) կարգ մը մրատրակական եւ նախանշախնդիր անշեքու հետ կ'որոշեն շիրիմ մը կանգնեցնել Չուխաճեանի հողակոյրին վրայ: Այս առթիւ, դրամ գոյացնելու միտումով, Յ.Սիւսանեան 700 տպաքանակով կը հրատարակէ «Արշակ Բ»ի (Օլիմպիա) նախերգանքը չորս շեռք դաշնակի շարադրութեամբ:

1903-ին, Չուխաճեանի կիսանդրիով շիրիմը հանդիսաւոր արարողութիւններով եւ նուազներով կը զեպեղուի հողակոյրին վրայ: (Կիսանդրին այժմ Երեւան կը գրկուի):

Գ.

Ե.Մելիքեանի կատարած նիւթական գոհացուցիչ վարձարութեանց շնորհիւ Չուխաճեան մեծ եռանդով կ'անցնի գործի: Կը կատարելագործէ «Արիֆ»-ը, եւ կ'աշխարհի «Բէօուէ Բէհեա» եւ «Լէպլէպիճի հօր-հօր Ադա» երաժշտական կատարակութիւններուն վրայ, որոնց ներկայացումները մեծ իսանդաւառութիւն կը ստեղծեն հայ, թուրք, յոյն, իտալացի, ֆրանսացի եւ այլ հազարաւոր հանդիսարեւ-ունկնդիրներուն մօտ, կ'ըսէ պրն. Թահմիզեան:

Երաժշտական ԳԱՅՍԵՍՅԱՆ 2(37)2010

1873-ին, Եղիազար Մելիքեանի դրամական միջոցներով, Տիգրան Չոխաճեանի երաժշտական եւ Տիգրան Գալէմճեանի վարչական ղեկավարութիւններով կը սրեղծուի «Օսմանեան Օբերայի թատերախումբ»-ը, իր շուրջ հաւաքելով շրջանի լաւագոյն ուժերը: Դժբախտաբար 1875-ին կը լուծուի:

Կէրիկ-Փաշայի Վարդովեանի խումբը, որ սկսած էր երաժշտական կարակերգութիւններու ներկայացումներով մրցիլ Չոխաճեանի խումբին հետ, կորսնցնելով իր լաւ ուժերը մեծ պայքար կը շրջաւազերձէ Չոխաճեանի դէմ:

1874 հոկտեմբերին եւ նոյեմբերին Պոլսոյ Պալատէր հրապարակի վրայ, նորակառոյց թատրոնի մէջ, յաջորդաբար կը ներկայացուին Չոխաճեանի «Արիֆ», «Դպրոցի Վարպէտը», «Բանասրեղծի ամուսնութիւնը» եւ «Դպրոցական Հանդէս» երաժշտական թատերգութիւնները, որոնց մէջէն «Արիֆ»-ը կ'արժանանայ բացառիկ ընդունելութեան:

Ապա, Չոխաճեան իր թատերախումբով Պոլսոյ թաղային թատրոններուն մէջ կը ներկայացնէ «Արիֆ»-ը ոգևորութեան ալիքներ քարշաղցնելով ամէն տեղ: Այնքան որ, մինչեւ 1875-ի վերջաւորութեան «Արիֆ»-ը բեմադրուած կ'ըլլայ շուրջ հարիւր անգամ:

Պրն. Թահմիզեանի, երաժշտագէտի սուր աչքը կարողացած է տեսնել Չոխաճեանի այս նոր արեւելեան-թրքական գործերուն մէջ թաքնուած հայկական երաժշտութեան մեղեդիական եւ կշռութային զանազան կենսական տարրերուն առկայութիւնը: Ան կ'ըսէ. - «Դա ամենեւին չի խանգարել, որ հայ արուեստագէտը դրանց երաժշտական հիւստածքում եւս արտացոլէր ազգային աւանդոյթներն ու ճաշակը: Ապացոյց, որ աւելի ուշ սրեղծուած «Չէնկիլեր» ու «Չէլքէլեր» թատերանուագներում, որոնց մէջ նոյնպէս գերիշխում են արեւելեան երաժշտութեան տարրերը, անգամ նուագախումբի զուտ արեւելեան կազմով (քանոն, սրինգ, ուղ եւ այլն), Չոխաճեանը վառ արտայայտել է նաեւ հայկական ազգային ոգին: Ինչպէս գիրենք զէթունցիների այնքան ժողովրդականացած քայլերգը, որ Պոլսում եւ այլուր տարածուել է (դեռեւս 1860-ական թուականների կէտերից), փաստօրէն ըստ Չոխաճեանի չայնագրութեան-խմբագրութեան ամբողջ զօրութեամբ օգտագործուած է եղել «Չէլքէլերում»:

1875-ի Օրթագիւղի հրդեհին զոհ կ'երթայ նաեւ Չոխաճեանի բնակարանը գրեթէ իր ամբողջ ունեցածով: Բարեբախտաբար, օբերաներուն չայնապրերերը այդ օր գրկուած ըլլալով իր բարեկամներէն միոյն մօտ կը փրկուին:

1875 նոյեմբեր 5-ին, Բերայի ֆրանսական թատրոնին մէջ առաջին անգամ ըլլալով կը ներկայացուի Չոխաճեանի «Լէպլէպիճի հօր-հօր Աղա»-ն, որ մեծապէս կը գնահատուի եւ կը գլէ ու կ'անցնի «Արիֆ»-ը: Պրն. Թահմիզեան կ'ըսէ. - «Հանդիսապետը շլացած ու զմայլուած է եղել պարզապէս»:

Չոխաճեան անմահացաւ «Լէպլէպիճի»-ով: Այս գործը ոչ միայն թրքերէնով կարարուեցաւ, կ'ըսէ պրն. Թահմիզեան, այլ հայերէնով, յունարէնով, գերմաներէնով, ռուսերէնով ու այլ լեզուներով եւ

մինչեւ այսօր բեմէն վար չէ իջած եւ բնաւ ալ պիտի չիջնէ:

Ասկէ ետք կը տեսնենք թէ՛ ինչպէս երբ Եղիազար Մելիքեանի ակնկալած նիւթական եկամուտներն ու շահերը չեն գոյանար, կը հրաժարի Չոխաճեանի եւ դերասաններու հետ կնքած պայմանագրութիւններէն: Խումբէն շարեր ստիպուած կ'ըլլան միանալու Վարդովեանի թատրոնին:

Արեւն մը ետք Չոխաճեան այս դժուարին կացութիւնը կը լուծէ դերասան եւ թատերախումբի ղեկավար Ս. Պենկլեանի աջակցութեամբ վերանորոգելով խումբը:

1878-ին բոլորը կը մեկնին Արրիանուպոլիս ներկայացումներու համար:

Բոլոր ելոյթները մեծ խանդավառութեամբ կ'ընդունուին:

Այս շրջանը զուգահիւսելով ռուս-թրքական պատերազմի աւարտին, մարտի 3-ի Սան-Ստեֆանոյի հաշտութեան դաշնագրին, այսպիսի մթնոլորտին մէջ Չոխաճեանին բերած ոգևորութիւնը քարշորէն գնահատելով Արրիանուպոլսոյ ռուս դեսպանը, Չոխաճեանին կը պարգևատրէ ցարական կառավարութեան կողմէ շնորհուած յարուկ շքանշանով: Ապա, պրն. Թահմիզեան արամտութեամբ մը կը շարունակէ. - «Շուրով՝ սուլթանական կառավարութիւնը եւս, կարծես նոր հասկանալով, թէ ինչպիսի արուեստագէտ է սպարում եւ գործում Թորքիայում, յանձնի Չոխաճեանի, նրան տալիս է նաեւ շքանշանը»:

Ապա, պրն. Թահմիզեան իսուելէ յետոյ Պենկլեանի եւ խումբին զանազան երկիրներու մէջ ունեցած ելոյթներուն, ու անոնց ներկայացուցած կարեւորութեանց մասին, կ'ըսէ թէ՛ ինչպէս հայ սրեղծագործութեան կարօտ հոգիով Չոխաճեան 1879-ին, Տիգրան Գալէմճեանի «Արա Գեղեցիկ» տրամային համար երաժշտութիւն յորինած է, որ բեմադրուած է Վարդովեանի թատրոնին մէջ:

17-րդ դարու երկրորդ կէտին, երբ ազգայնական շարժումներն ու արտայայտութիւնները խալթուէն արգիլուած էին, Չոխաճեան կը վերադառնայ մանկավարժական աշխատանքի: Կը դասաւանդէ Սկիւտարի ճեմարանին մէջ ու անհատական դաշնակի դասեր կու տայ տուններու մէջ:

Այս շրջանին կը պարգևատրուի ֆրանսական ու իտալական շքանշաններով: (Չոխաճեան ասկէ քաջալերուած պիտի ծրագրէր Փարիզ երթալ գործերը ներկայացնելու համար): Իսկ, իր յորինած «Պարսկական քայլերգ»-ին համար կը պատուարուի պարսկական պետական «Արեւի ու Առիծի» շքանշանով:

* * *

Եօթներորդ մասով ընթերցողին կը ներկայացուին Չոխաճեանի յորինած «Արտօսը ի Շիրիմ» մահանուագը, «Չէմիրէ» հեքիաթային բովանդակութեամբ օբերան, «Էբրուիա եւ Չէմիրէ» անուն օբերայի արաբական մեծ պարը:

Այսպէս, պրն. Թահմիզեան ընթերցողին ուշադրութեան կը յանձնէ թէ՛ ինչպէս ազգային սրեղծա-

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

գործական եւ կարարողական արուեստներու ծաղկման հետ կը հասուննայ երաժշտական հրապարակախօսութիւնը եւս, եւ որպէս օրինակ հայկական երաժշտաբննադարական մտքի մասնագիտական մակարդակի հմտութեան կը բերէ 1889, մայիս 19-ի համերգը նկարագրող «Արեւելք» թերթի մայիս 23 թիւին մէջ լոյս տեսած «Չուխանեան նուագահանդէս» անուն երաժշտաբննադարական յօդուածը:

Ե. Եւ Վերջ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ (էջք 87-193)

Գրքի այս գլուխով, որ ինքնին առանձին գիրք մը կազմելու չափ ծաւալուն աշխատանք մըն է, առար երկերու չայնագրութիւններով ու երաժշտական օրինակներով, ընթերցողը ոչ միայն պիտի ծանօթանայ Չուխանեանի յայրնի սրեղծագործութիւններու պարմական ու երաժշտական ծալքերուն, այլ նաեւ՝ անոր անծանօթ ու անյայտ գործերուն:

Պրն. Թահմիզեան, այս աշխատանքով ընթերցողը հայ երաժշտական աշխարհին մէջ այլ զագաթ մը կը բարձրացնէ այս անգամ ցոյց տալու համար մեծ հայրորդի՝ Չուխանեանի համապարած սրեղծագործութեան համապարկերը (panorama) իր պարզուած գեղեցկութեամբ:

Այս բաժինը, ըլլալով զուր երաժշտագիտական վերլուծական աշխատանք, իր ունեցած մասնագիտական բնոյթին պարմառաւ ուսումնասիրուած երկերը փոխանակ մի առ մի մանրամասնօրէն ներկայացնելու, պիտի թողում որ ընթերցողը առնէ գիրքը, անչամբ կարդայ ու ընթրչունէ զայն:

Սակայն, կարարուած աշխատանքին մեծութիւնը պարզապէս շեշտելու համար պիտի տամ Չուխանեանի ուսումնասիրուած երկերուն անունները:

Ահա գործերը պրն. Թահմիզեանի ուսումնասիրած շարքով. -

- «Չէնկիլեր» կարակերգութիւն
- «Չէյբէկլեր» կարակերգութիւն
- «Եմիշճիլեր» կիսար մնացած կարակերգութիւն
- «Ալեքսիմագ» քնարական փրամախաղ
- «Վարդան Մամիկոնեան» ողբերգութիւն
- «Վարդ եւ Շուշան» հովութեղական նուագախաղ
- «Մեծն Տրդատ» փրամախաղ
- «Արա Գեղեցիկ» քարերախաղ
- «Բանաստեղծի ամուսնութիւնը» քարերախաղ
- «Գպրոցական հանդէս» քարերախաղ
- «Գպրոցի վարպետը» քարերախաղ
- «Յիշեա» (Rappelle-toi) ռուման
- S.Եսայեանին նուիրուած ռուման:
- «Fleur d'Orient» օիէրէթ
- «Հնդկուհին-Ինդիանա» օրերս
- «Օն մեր նախնիք» ներքող 2 երգչի եւ դաշնակի համար
- «Գարուն» ռուման
- «Առ մայրենի լեզու» խմբերգ

- «Լոռա» ռուման
- «Mia imera to vlepí cardia» չայնի եւ դաշնակի համար
- «Ave Maria» չայնի եւ դաշնակի համար
- «Սուրբ Սուրբ» S.A.T.B. եւ նուագախումբի համար
- «Պատարագ» պակասատր
- «Fantaisies Orientales» (No. 1 եւ 2) դաշնակի համար
- «Ouverture Olympia» pour piano 4 mains Արշակ Բ-ի նախերգանքը
- «La Lyre Orientale» caprice pour piano
- «La Gaitn» (Polka) դաշնակի գործ
- «Illusions» (Fantaisie-Valse) դաշնակի գործ
- «Cascade de Couz» (Impromptu) դաշնակի գործ
- «Արսուր» ի Շիրիմ» մահաանուագ, Marche funebre
- «2de Fugue» (Fuga a 4 voci)
- «Յատերժական Շարժում» Mouvement per-petuel - նուագախմբային գործ
- «Թուրքական քայլերգ» նուագախմբային գործ
- «Պարսկական քայլերգ» նուագախմբային գործ
- «Արիֆ» կարակերգական օրէրս
- «Քէօւէ Քեհեա» կարակերգական օրէրս

Այս երկերէն իրաքանչիւրը կը ներկայանայ իրեն յարույկ դրութիւնով, պարմութիւնով, հարցերով եւ դժուարութիւններով:

Պրն. Թահմիզեան պարմական հարուստ ծանօթութիւններով, գործընթացին յարուստ հարցերու լուսաբանութիւններով, երաժշտական յարակից տեղեկութիւններով, երաժշտագիտական խորաքափանց ու սպառիչ վերլուծումներով՝ անոնց կառուցային ոճէն մինչեւ նուագախումբերու կազմերու պարկերացումներով, օրէրաներու երաժշտական լեզուա-ոճէն մինչեւ անոնց գրական բովանդակութիւններու մանրամասն բացատրութիւններով, իսկ ասոնց մէջէն յարկապէս, զագաթնակէտային բարձրութեան հասնող «Արշակ Բ» օրէրային հիանալի մարտցումով, ու այս բոլորը գրելով ու արարայարտելով մասնագիտական մակարդակի վրայ, սակայն, միաժամանակ պարզ, յարակ եւ դիրախաղորդ ոճով, մեծ գիրնակակնը կը ներկայացնէ հանձարեղ Տիգրան Չուխանեանի բեղմնատր գրչէն թիսած ու ճպտովը կենսատրուած անոր չքնաղ սրեղծագործութիւնը:

ՎԵՐՉԱՐԱՆ (էջք 195-206)

Հեղինակը վերջաբանը կը սկսի խօսելով հայ երաժշտութեան մէջ Կոմիտաս Վարդապետի հասարած հայկականութեան չափանիշներուն մասին՝ հիմնուած գեղջուկ-ժողովրդական երաժշտութեան վրայ:

Այսրեղ պրն. Թահմիզեան խօսելէ յետոյ Կոմիտաս-Սպենդիարեան եւ Կոմիտաս-Խաչատուրեան յարաբերութիւններու մասին, ցոյց կու տայ տարբերութիւնը այլոց եւ Չուխանեանի, որ Կոմիտաս Վարդապետէն առաջ սրեղծագործելով, երբ ազ-

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

գային ելեկտրոնիկայի և կոմյունիկացիոն տեխնոլոգիաների ոլորտներում և կոմյունիկացիոն տեխնոլոգիաների ոլորտներում վաճառական և պրոդյուսերական և մասամբ այլ մասնագիտացումներում և կոմյունիկացիոն տեխնոլոգիաների ոլորտներում, օգտագործելով և զանազան յարակալու «Արշակ Բ»-ի մէջ: Այդ ժամանակ հայերը մեծ խանդավառութեամբ ընդունում էին սևոնր արեղծագործութիւնները:

Երևոյթը, որ կը զանազանէր Չոխաճեանի գործերը (որոնք «արեւմտահայեաց բնոյթ ունէին») Կոմիտասեան ու յետ Կոմիտասեան գործերէն, հայ գեղջուկ-ժողովրդական երգարուեստի բացակայութիւնն էր սևոնր գործերուն մէջէն:

Պրն. Թահմիզեան, յաջորդ էջերով կը լուսաբանէ թէ՛ ինչո՞ւ կը բացակայէր հայ գեղջուկ-ժողովրդական երգարուեստը Չոխաճեանի գործերուն մէջէն:

Այս կէտի պարզաբանման ընթացքին պրն. Թահմիզեան չափազանց հարուստ պատմական վերլուծումներով և ծանօթութիւններով ոսկեայ էջեր կը նուիրէ հայ երաժշտագիտական պատմութեան, ու յետոյ կ'ըսէ. - «Ահա այս էր իրավիճակը, երբ Տիգրան Չոխաճեանը հանձարեղ ոստիկանով ու պատմականօրէն կարճագոյն ժամանակահատուածում հայ երաժշտութեան մէջ արեղծեց հրապորիչ հեռանկարներ խոստացող հակակշիռ բեռեր՝ արեւմտականութիւնը, որը հնարաւորութիւն էր տալիս երոպական երաժշտութեան հարուստ փորձն օգտագործելու ազգային արուեստի զարգացման ի ինդի, և որի փայլարակումից յետոյ միայն աստիճանաբար պիտի կազմաւորուէր թէ՛ Արեւմուտքից և թէ՛ Արեւելքից սևուելով վերակենդանանալու ընդունակ կեդրոնական երակը՝ Կոմիտասի արեղծագործութիւնը, իր շուրջ հաւաքելով արդէն զօրական առանցքով օժտուած ողջ մարմինը»:

Պրն. Թահմիզեան կ'աւարտէ՝ վերջաբանը «Արշակ Բ.»-ի արեղծման 100-ամեակին առթիւ Արամ Խաչատրուեսանի գրած «Հպարտանում եմ» վերնագրով խանդավառ յօդուածէն մէջբերումներ ընելով:

ՅԱՒԵԼՈՒԾ (էջք 207-211)

Այս բաժնին մէջ կը տեսնենք թէ՛ ինչպէս պրն. Թահմիզեան տարիներ առաջ շեռնարկած է «Չոխաճեանական Յանչնաժողով»-ի մը կազմութեան, սևոնր աշխարհացրիւ եղած շեռագիրները հաւաքելու ու ամբողջացնելու համար Չոխաճեանի Երեւանեան դիւանը, որ սակայն, դժբախտաբար Հայաստանի մէջ արեղծուած դժուարին պայմաններուն պարճառաւ չէ իրականացած: Բայց, աեւի սևդիս պրն. Թահմիզեան կ'ըսէ թէ՛ այս յարուցումը հարցը բոլորովին այլ սևարչագանք չննաց: Վերջերս, Փարիզի մէջ, Տիգրան Չոխաճեանի սևուելով հետազօտական կեդրոն մը հաստատուած է՝ “Centre de recherches Tchouhadjian” դերասան և բեմադրիչ Ժիրայր Բաբազեանի նախաշեռնութեամբ, որ որպէս առաջին ծրագիր պիտի հրատարակէ «Արշակ Բ» օրէրան ըստ Թովմաս Թերզեանի յօրինած իրաւերէն թարերարութիւն:

Ապա, խօսելով ցարուցրիւ եղած շեռագիրներու

մասին, յարակալէս ու արդարօրէն կը ծանրանայ Գալիֆորնիոյ մէջ գործող «Լարք» հայ երաժշտականի տէր և տնօրէն, դեկալար-երաժշտագէտ պրն. Վաչէ Պարսումեանի գրադարանին մէջ գրնոտող Չոխաճեանի երաժշտական կարակերգութիւններու բազմաթիւ ու բազմատեսակ շեռագիրներու վրայ, որոնք ցուցանիչ կը հանդիսանան Պարսումեանի ոչ միայն նախանշախնդրութեան, երաժշտական հետաքրքրութեանց, այլ և մանաւանդ, հայ արժէքներու հանդէպ սևոնր ունեցած նուիրումի աստիճանին:

Այստեղ փակագիծ մը բանալով պիտի ուզէի իմ այլ սևնական տպաւորութիւններս յայտնել այս հայ ազնիւ արուեստագէտին՝ Վաչէ Պարսումեանի գործունէութեանց մէկ երեսին մասին:

(Բախտաւորութիւնը ունեցած եմ այցելելու «Լարք» երաժշտականի ու ծանօթանալու սևոնր ծրագիրներուն և գործունէութեանց: Մեծ տպաւորութեամբ ու ազգային հպարտութեամբ բաժնուած եմ հաստատութեանէն: Հաստատութիւն մը, որ մեր երախարարեալ երաժիշտներէն Քրիստոսոս Կարա-Մուրզա այնքան աշխատած էր հիմնելու, բայց չէր կարողացած: Կոմիտաս Վարդապետ ես այնքան ծրագրեց ու աշխատեցաւ Պոլսոյ մէջ երաժշտական մը հիմնելու համար, սակայն, դժբախտաբար, չկարողացաւ իրագործել զայն թուրքի ճիւղային ծրագրին պարճառաւ, քանի որ 1915-ի ապրիլին, հայ մտաւորականներուն հետ, զինք ես Պոլսէն Չանդըրը արտրեցին ու իր կրած տառապանքներուն ու աչքին առջեւ պարզուած սհաւոր տեսարաններուն որպէս հետեանք, հոգեկան փլուզումով մտազարած, կեանքի ամենամարդիւնաբեր շրջանին 19 երկար տարիներ կեանքը քաշքշելով հիւանդանոցներու մէջ, վախճանեցաւ 1935, հոկտեմբերի 22-ին, Փարիզի մէջ:

Բայց, այսքան տարիներ ետք, սհաւասիկ, հայրենիքէն շար հեռու Գալիֆորնիոյ Լոս Անճելըսի Կլէմերէլ շրջանին մէջ, համակ սևնական գոհողութեան, նուիրումի, գիտակցութեան և հաստատութիւն որպէս արդիւնք, Վաչէ Պարսումեան լուսագոյնս իրականացուցած է Կարա-Մուրզայի և Կոմիտաս Վարդապետի այնքան փայլաւոր երազները, պարգեւելով այդ շրջանի հայութեան հայ երաժշտական մը, որուն համար հայութիւնը չափազանց երախարարար պետք է զգայ ու երաժշտանոցը պէտք է վիտրայ հայ աշակերտներով և վերածուի Կոմիտասեանի փեթակի մը:

Պրն. Վաչէ Պարսումեան եզակի սևնաւորութիւն մը ըլլալուն պարճառաւ պրն. Թահմիզեան կոտ գիծերու մէջ կը ներկայացնէ սևոնր հետաքրքրական կենսագրականը, ու սպա կ'սևնցի ներկայացնելու շեռագիրները, որոնց գիտաւորներն են. - «Լէպլէպիճի Հօր-Հօր Ադա» կարակերգական օրէրան, «Լէպլէպիճի»-ի զանազան տարբերակներ, «Արիֆ» և «Բեօուէ Բեհեայ» կարակերգական օրէրաններն ու այլ երկեր:

Մեծ է արժէքը այս գործերուն, մանաւանդ, երբ պրն. Թահմիզեան կը յայտնէ թէ՛ «Դրանք արժէքաւոր են այնու, որ ինչպէս նկարեցինք, Չոխաճե-

երաժշտական ԴԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

անի կայսերական երեք օբեռաների լրի շայնարարները Երեսնում էլ չկան: Մանասնը «Լէպլէպիճի»-ի լրի շայնարարը, որ պէտք է ամբողջապէս նորոյթ համարուի: Միս երկուսի պարագայում Երեսնում առկայ են բերի շեռագրեր, որով ամբողջական շայնարարները որոշակիօրէն լրացնում են պակասը»:

Յաւելուածին յաջորդող երկու էջերուն վրայ գրնուող պրն. Թահմիզեանի հարուստ կենսագրականով ու այնքան րպատրիչ գործերու ցանկով կը փակուի այս մեծափառ գիրքը:

Այժմ, Չուխանեանական նիւթերու ամենահարուստ եւ գլխաւոր աղբիւրը Չուխանեանի Երեսնեան դիւանն է, որ դժբախտաբար, ինչպէս րեսանք, րակաւին հեռու է ամբողջական ըլլալէ:

Պրն. Թահմիզեան, համաշայն իր պրպրումներուն, լաւարեւութեան յուսարու շայնով մը կ'ըսէ թէ՛ անհարներու գրադարաններու մէջ շար հաւանաբար գրնուիին րակաւին Չուխանեանի գործեր, որոնք օր մը կարող են ի լոյս գալ:

Հերեւաբար, այսպիսի դրութեան մէջ, առ այժմ երաժշրագիրութիւնը չի կրնար իր վերջին իօսքը ըսել Չուխանեան երեւոյթի մասին: Սակայն, այդ

ճամբուն վրայ, շնորհիւ մեծաքանար երաժշրագէր պրն. Թահմիզեանի այս կորողական գործով հայ երաժշրագիրութեան բերած նպաստին մեծապէս կը դիրանայ ընթնունն ու ճշգրիտ արժեւորումը Չուխանեան երեւոյթին:

Ահա թէ՛ որքան մեծ է արժէքը պրն. Թահմիզեանի «Տիգրան Չուխանեան» գրքին:

Միրելի պրն. Թահմիզեան, ես անշամբ գիրեմ թէ՛ առողջական ի՛նչ դժուարութիւններու եւ ֆիզիքական որքա՛ն ցաւարանջ վիճակներու մէջ կարողացար աւարել թանկարժէք այս գործը, գիրքը: Վարահ կրնար ըլլալ, որ մեծ երախարագիրութեամբ պիտի գնահարուի չեր աշխարանքը ոչ միայն մեր սերունդին, այլ եկող թոյր սերունդներուն կողմէ:

Չեր այլ անգուգական գործերու շարքին այս մէկը ես երաժշրագիրութեան պարմութեան ոսկեհոս աղբիւր մըն է:

Այս առթիւ սրտագին շնորհատրանքներով կը մաղթեմ չեզ կարարեալ առողջութիւն եւ բեղմնաւոր կեանք:

Վարչքերնիդ կարար, եւ գրիչնիդ դալար, թանկագին վարպետ:

(Կենս կագմին)

Խճանկար



Գրիգոր Փիտեճեանը և Գեորգ Էմինը, Նիւ-Եորք, 1977թ.



Ալեքանդր Յարութիւնեան, Համբարձում Պերպերեան, Գրիգոր Փիտեճեան, Նիւ-Եորք, 1975թ.

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԻ ՕԻՏԵՃԵԱՆ

*Երաժշտագետ,
Նյու-Յորք*

Կիրակի, Յունիս 21, 2009-ին, Նիւ Եորքի Հայ Օգնութեան Միութեան Էրեբունի մասնաճիւղի վարչութեան կողմէ կազմակերպուած եւ Ս.Սարգիս եկեղեցւոյ Չարրճեան լիցուն սրահին մէջ «Հայրերու Օր»-ուան առթիւ Գրիգոր Պետրոսի նուիրուած փառաւոր ճաշկերոյթի ընթացքին, որպէս փարոսան հայր կը մեծարուէր արուեստագետ խմբավար՝ Տիար Ռաֆֆի Սվաճեան:

Ճեռնարկը կը վայելէր թեմիս բարեջան Առաջնորդ Տ.Օշական Արք. Չորոյեանի բարձր հովանաւորութիւնը, ինչպէս նաեւ ներկայութիւնը Տ. Անուշաւան Եպս. Դանիէլեանի եւ եկեղեցւոյ հովիւ՝ Տ.Նարեկ Բեկ. Թրքոնեանի:

Այս գրութեան նպատակը ճեռնարկին նկարագրականը ընել չէ, որ իր բոլոր երեսներով շարձող անցաւ եւ որուն համար ալ բոլոր կազմակերպող անդամներին ու յայրագիրին մասնակցողները շնորհատրեղի են, այլ՝ ներկայացնել է յիսունէ աւելի տարիներու վաստակ ունեցող եւ մեծարուող մաէսքո Սվաճեանի ազգանունը կեանքն ու գործունէութիւնը նաեւ ընթերցասէր հասարակութեան:

Ռարի, կը ներկայացնեն ճաշկերոյթի ընթացքին արտասանած խօսքը:

* * *

Մաէսքո Ռաֆֆի Սվաճեան, որ ինծի համար կը նկատուի մշակութային հերոս, ազգային ու հոգեւոր արժեքներու գիրակցութիւն ունեցող անհատ, հայ մշակոյթի երաժշտական հարստութիւնը մեր ժողովուրդին յաւերժութեան ուժադիւր նկատուող երաժշտական գործիչ եւ վերջապէս հայրենասիրական խորունկ զգացումներու տէր անձ մը, որ հազիւ երկրասարդական տարիքը թեւակոխած, որպէս խմբավար կը ներուի հայ երաժշտութեան աշխարհին մէջ:

Ասիկա կը դառնայ առաքելական գործունէութիւն մը, որ իր կեանքի յիսուն տարիներու ընթացքին զինք կը փանի Միջին Արեւելքէն Երոսպ, Երոսպայէն Ամերիկա ու Ամերիկայէն հայրենի աշխարհ:

Խարի՛ Հայաստան:

Գեղարուեստական այն հասկացողութիւնն ու յարկութիւնը զոր մաէսքո Սվաճեան ունի՝ բարձրացուցած է զինք սովորական խմբավարի մակարդակէ վեր եւ դարձուցած՝ ասարդ:

Ժամանակի սղութիւնը չի թոյլարեր ինծի մէջբերելու եւ յիշելու հայրենի այն ակունաւոր երաժշտիկներուն դրոսարական ու հիացական խօսքերն ու արտայայտութիւնները, մաէսքո Սվաճեանի խմբավարական բարձր արուեստին մասին:

Շատ քիչերու տրուած է ունեցածը ժողովուրդին բաշխելու թանկագին յարկութիւնը, որ առաքիւնութիւն կը նկատուի զայն: Սվաճեան այդ քիչերէն մէկն է:

Թէ՛ ինչպէ՞ս եղան այս բոլորը:

Ռաֆֆի Սվաճեան ծնած է 1935թ-ին Պէյրութ, Լիբանան, ուր յաճախած է Ա.Նշան վարժարանն ու Փալատեան անարանը:

Հասակ առնելով Սվաճեան արուեստասէր եւ Թնկրեան երաժշտասէր ընտանիքներու մէջ չէր կրնար չարպաւորուիլ այդ մթնոլորտներէն:

Հերեւարար, Ռաֆֆի փոքր տարիքէն բնական ընթացքով մը կատարուցաւ երգարուեստին:

Սվաճեան եղաւ այն քաղաւոր միակը, որ կարողացաւ 1956թ-ին առանձնապէս աշակերտիլ Կոմիտաս Վարդապետի համբաւաւոր հիւնգ սաներէն Բարսեղ Կանաչեանի: Ռաֆֆի, վարպետէն ոչ միայն կը սորվի նախնական երաժշտական տեսութիւն եւ դաշնաւորում, այլ՝ յարկապէս, որ կարեւոր է, հայ խմբերգային արուեստի վերլուծում եւ հայկականութեան Կանաչեանական հասկացողութիւն:

Այս շրջանին կը յաճախէր նաեւ Պէյրութի Պեպական Երաժշտանոցը:

1957թ-ին աւարտելէ ետք երաժշտանոցի դասընթացները կը հիմնէ Համազգայինի անդրանիկ երգչախումբը եւ համերգներով մեծ ոգեւորութիւն կը ստեղծէ զաղութէն ներս:

Ի տես այս իսանդաւառ երեւոյթին, տեղւոյն Հայ Օգնութեան Միութիւնը կը նուիրէ իրեն ոսկեայ մետալ:

1959թ-ին հրաւիրուելով Հալէպ, ուսանողական 100 հոգիւնոց երգչախումբով կու տայ շատ տպաւորիչ համերգ մը, որմէ յետոյ վերադառնալով Պէյրութ, այս անգամ քաղաքի մեծագոյն UNESCO համերգասրահին մէջ կու տայ տարեկան մեծ համերգը: Ապա յարուկ ծրագրով հանդէս կու գայ Երջանկայիշարակ Չարեհ Ա.Կաթողիկոսի ներկայութեան Անթիլիասի Կաթողիկոսարանին մէջ, որմէ յետոյ կը ծրագրէ ուսումը շարունակել Երոսպայի մէջ: 1960-ին, Պէյրութի American University-ի Town

Hall-ին մէջ քուսած հրաժեշտի համերգէն ետք կ'անցնի գեղարուեստի աշխարհ նկատարող Ֆրանսուս, ուր կը յաճախէ Marseille-ի երաժշտականը:

Հոս եւս բախումը տրոփելը կ'ունենայ հանդիպելու Կոմիտաս Վարդապետի սաներէն, այս անգամ Վարդան Սարգսեանին, որ փարիքը յառաջացած ըլլալով եւ փեսնելով երիտասարդական աշխարհում լի, փառանդաւոր խմբավարը՝ Ռաֆֆիին, կը խնդրէ անկէ ղեկավարել 1934թ-ին իր հիմնած Armenia երգչախումբը:

Ռաֆֆիի ղեկավարութեամբ առաջին համերգը փեղի կ'ունենայ Marsele-ի opera-ի սրահին մէջ Վարդան Սարգսեանի ներկայութեան:

Յաջողութեամբ պատկուած համերգէն յետոյ Սարգսեան խանդավառուած ճառ մը կ'արտասանէ, գոր Ռաֆֆին սրբազան մասունքի նման պահած է:

Վարդան Սարգսեանի շունչին փակ, 1960-1965 թուականներին, խանդով լի Սվանեան պարապելով երգչախումբին հետ եւ հետեւելով վարպետին խորհուրդներուն, ցուցումներուն եւ ուսուցումներուն կը թրծուի Կոմիտասեան երաժշտական գեղագիտութեամբ ու ըստ այնմ ալ կը հասունանայ մեկնաբանողի իր կարողութիւնը:

Այս փարիներու գործունէութեան կարկիւր լայն քանակով համերգներ կու փայ Marseille-ի, Valance-ի, Lion-ի, Desin-ի, Paris-ի եւ Vien-ի մէջ ամենուրեք սրեղծելով մեծ ոգեւորութիւն: Այս շրջանին կը վարէ նաեւ Marseille-ի Prado-ի մայր եկեղեցոյ դպրատանի պաշտօնը:

1965թ-ին, ամերիկահայ համալսարանի խմբավարուի Տիկ. Սիրանուշ Տէր Մանուէլեան Պոսթըն կը հրաւիրէ Ռաֆֆին ղեկավարելու համար իր հիմնած «Ազգային Երգչախումբ»ը:

Մեծ ծրագրներով, յոյսերով եւ խանդավառութեամբ երբ Սվանեան Պոսթըն կը հասնի, ի՛նչ դժբախտութիւն, Տիկ. Տէր Մանուէլեան ինքնաշարժի արկածի գոհ դառնալով կը մահանայ:

Սակայն, Պոսթընի Մշակութային Միութեան վարչութիւնը այս փեսնելով կը հրաւիրէ Ռաֆֆիին ղեկավարելու Միութեան երգչախումբը, որուն մեներգչուի կ'ըլլայ Վարսէն Բէշիշեան, այժմ Սարգիսեան:

Յաջորդ փարին, 1966թ-ին կը ղեկավարէ Պոսթընի Բարեգործականի «Բնար» երգչախումբը:

1967թ-ին կը սրանչնէ փեղոյն Ս.Յակոբ եկեղեցոյ Մշակութային ու Երիտասարդական միութեան փեղծելի պաշտօնը: Հոս կը հիմնէ իր Սայեսթընով երգչախումբը:

1969թ-ին, Կոմիտաս Վարդապետի ծննդեան 100-ամեակի նշան համար Նիւ Եորքի Հայ Մշակութային Միութեան կողմէ կը հրաւիրուի ղեկավարելու համար անոր «Գուսան» երգչախումբը:

Մաէսթրօն այս պաշտօնով եւ պարտականութեամբ այլեւս Նիւ Եորք կը հաստատուի ու երկար փարիներ կը դառնայ ղեկավարը Մշակութային Միութեան, սպա Համազգայինի երգչախումբին:

1971թ-ին Lincoln Center-ի Alice Tully Hall-ին մէջ ղեկավարած հրաշալի համերգէն ետք, Ս.Լուսաւորիչ Մայր եկեղեցոյ սրահին մէջ աւանդութիւն դարձած ճաշկերոյթ-խրատիմանքի ընթացքին, յանկարծ օրուան առաջնորդը՝ Հոգեւոյն Հրանդ Արք. Խաչատրեանն ուրախութեամբ կը յայտարարէ Հրայր եւ Վահագն Յովնանեաններուն քսան հազար փողարի նուիրարութիւնը Ռաֆֆիին, շարունակելու համար իր երաժշտական բարձրագոյն ուսումը: Այս անակնկալը Ռաֆֆին կոչած է հրաշք:

Ան, երկու փարի յաճախելով աշխարհահռչակ Julliard երաժշտականը եւ հետեւելով professional studies-ի ղեկավարութեան դասընթացներուն, իր ատարական ղեկավարական գործը կ'ըլլայ Felix Mendelssohn-ի Violin Concerto-ն, soloist ունենալով համալսարանի ջութակահար Aida Kavafian:

Մինչեւ 2002թուականը Սվանեան կը ղեկավարէ ինչպէս Նիւ Եորքի, նաեւ Նիւ Ճրքոյի Համազգայինի եւ Նիւ Եորքի Իրանահայ Միութեան երգչախումբերը, փարեկան մեծ համերգներ հրամցելով զաղութիւն, որոնք փոսական օրերու կը վերածուէին:

Ճիշդ է, որ Իրանահայ Միութեան Կեդրոնը, իր ջերմ մթնոլորտով հայ փուն մըն է, հայոց հաւաքավայր է, սակայն փաստ փարիներէ աւելի շնորհիւ Մաէսթրոյի խանդավառ ու սնդադրում աշխատանքներուն ան դարձած էր նաեւ օջախ հայ մշակոյթի, հայ գեղարուեստի եւ հայ երաժշտութեան:

Սվանեանի ղեկավարութեան ասպարէզը միայն աշխարհիկ երաժշտութիւնը չէրաւ, ան ընկերացած ըլլալով նաեւ հայ սրբազան երաժշտութեան, նոյնքան եռանդով ու հետեւողականութեամբ, արհամարհելով զանազան փեսակի դժուարութիւններ, հաւատարմօրէն ծառայեց հայ եկեղեցիին եւ մինչեւ իր ֆիզիքական դժուարութիւնը, ուր որ գնաց, Աստուծոյ փառքին համար, իր ղեկավարութեամբը պայծառ պահեց Աստուծոյ փունը: Այսպէս:

1970թ-ին կը վարէ Նիւ Եորքի Ս.Լուսաւորիչ Մայր եկեղեցոյ դպրատանի պաշտօնը:

Յաջորդող փարիէն սկսեալ քսան երկար փարիներ շարունակաբար կը վարէ Ուէսթչէսթըրի, այժմու Ս.Գրիգոր Լուսաւորիչ նորակերպ եկեղեցոյ նորակազմ ծուխին դպրաց դասը:

Այս քսան փարիներուն ընթացքին, պատարագի օրերուն բնաւ Տէր Հօր առանչին կամ աւուզանական չթողուց: Նոյնիսկ ամենասաստիկ շինամարիկներուն Լոնկ Այլընփի մէկ ծայրէն մինչեւ Ուէսթչէսթըր, դժուարագոյն ճանապարհ, կը վարէր ինքնաշարժը եւ ճշրուած պահուն կը գրկէինք զինք եկեղեցոյ շապիկը հազած պարտաճանաչօրէն պատրաստ ղեկավարելու:

2002թ-էն մինչեւ կաթուածահարութիւնը Ռաֆֆին ղեկավարեց Ս. Սարգիս, այս գեղեցիկ եկեղեցոյ դպրաց դասը:

Եկեղեցոյ նախկին հովիւին՝ Հայր Անուշաւան Գանիւլեանին, այժմ Եպիսկոպոս, բժախնդրու-

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

թիւնն ու խսրապահանջութիւնը ուսուցողական դասեր եղած են Ռաֆֆիին, որոնց համար միևնչեւ օրս ան շնորհապարտ կը մնայ Սրբազան Հօր:

2002թ-ը Սվաճեաւիին համար կ'ըլլայ հանգրուանային փարսի մը:

Կեանքին մեծագոյն երազը կ'իրականանայ, որ էր հայրենիքի մէջ գործել:

Հայրենիքի փենչով ու կարօտով փոչորոդ Ռաֆֆիի հոգին, հայրենիքի շունչով ապրող ու գործող Ռաֆֆիին, առաջին իսկ հայրենիք այցելութեանը ընթացքին, երբ գրկաբացօրէն կ'ընդունուի երաժշտական շրջանակին կողմէ, մեծապէս կ'ոգեւորուի ու կեանքի նոր էջ մը կը բացուի իր առջեւ:

Արմատներ կը սկսին ներսուիլ հայրենիքի մէջ:

Ռաֆֆի համերգային եւ մարդասիրական աչքառու գործունէութիւն կը փակի Երեւանի մէջ, այսպէս-

2002թ-ին, Երեւանի Սենեկային երգչախումբերով կու փայ բարձրորակ մեծ համերգ մը նուիրուած իր վարպետին՝ Բարսեղ Կանաչեանին: Այդ ծրագրին մէջ կը կատարէ որպէս անդրանիկ ունկնդրութիւն Գրիգոր Փիլիպեանի «Իմ Հայաստան» մեներգ-խմբերգը:

Համերգի աւարտին մեծ արեղծագործող երաժիշտ Երուսրդ Միրզոյեան ուրախ ու զգացուած, հանրութեան դարձած, ի միջի այլոց կ'ըսէ. - «Այսպիսի Կանաչեանի երաժշտութիւն ես չէի լսած Հայաստանի մէջ»:

2003թ-ին, Երեւանի «Արար» երգչախումբով կու փայ մեծ համերգ մը Արամ Խաչատրեան Տուն-Թանգարանի դահլիճին մէջ, արժանանալով բարձրագոյն գնահատանքներու: Այս համերգին, որպէս անդրանիկ ունկնդրութիւն կը կատարէ Գրիգոր Փիլիպեանի «Ս. Էջմիածին» մեներգը յօրինուած Էջմիածնայ Տաճարին 1700-ամեակին առթիւ եւ չօնուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

2005-ին, երաժշտական հարուստ ծրագրով կու-փայ համերգ մը Երեւանի Կոմիտասի անուան Կամերային սրահին մէջ, նուիրուած դպրոցական իր սրտակից ընկերոջ՝ հոգելոյս Մեսրոպ Արք. Աճեանի յիշատակին:

Սվաճեան ունի շատ զգայուն եւ փափուկ երես մը կեանքի, որ ծանօթ չէ բոլորին:

Համեստութիւնը թող չվիրատրուի, երբ ըսեմ թէ՛ ան լուռ կերպով կ'օգնէ կարօտեալ երաժիշտներու:

Նորէն, շնորհիւ իր ջանքերուն նորոգուեցաւ Երեւանի Բարսեղ Կանաչեան երաժշտանոցի շէնքը ներսէն եւ դուրսէն:

Մաէսթրօ Սվաճեան երաժշտութեան ճամբով կամուրջ կը հաստատէ հայրենիքի եւ սփիւռքի միջեւ:

Շնորհիւ իր հայրենասիրական զաղափարներուն ու եռանդուն աշխատանքներուն կարողացաւ Նիւ Ծրքզիի Համազգայինի ճիգերով եւ միջոցներով երեք անգամ հայրենի երաժիշտ կատարողներ ու խումբեր համերգային շրջագայութեամբ Ամերի-

կա բերելով ոչ միայն անոնց նիւթապէս օգտակար ըլլալ, որուն այնքան կարիքը ունէին, այլ՝ հազարաւոր հայրենակարօտ հայ հոգիներու յագեցում փոռաւ եւ բախասան հանդիսացաւ:

2007թ-ի աշնան, Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի նախարարութիւնը, գնահատելով մաէսթրօ Սվաճեանին կատարած ծաւալուն գործունէութիւնը, արժանապէս պատուեց զինք բարձրագոյն շքանշանով՝ Պետական ոսկեայ մեդալով, որուն ներկայ էինք փրկիկնս՝ Պերճուհին ու ես:

2008թ-ի հոկտեմբերին սկիզբը, երաժշտական իր գործունէութեամբ ազգին մատուցած ծառայութեանց համար Համազգայինի Կերթնական Վարչութիւնը կը շնորհէ իրեն բարձրագոյն պատուանշանը: Որմէ մի քանի օր վերջ կը փետնեմ զինք Երեւանի մէջ:

Այսպիսով, մաէսթրօ Սվաճեանի փրկուած աշխատանքը, գեղեցիկի որոնումը, նորութեան փնտրութիւնը, փոթորկայոյց ու փակախիւ յագեցում չգրած հայրենասէր ու ազգասէր իր հոգին զինք կը փակի հայրենիք:

Հայաստան: Նո՛ր բարեկամներ, նո՛ր երագներ, նո՛ր գործակիցներ, նո՛ր ծրագրեր, նո՛ր ակնկալութիւններ, նո՛ր յոյսեր, նո՛ր յոյգեր ու նո՛ր անակնկալներ:

Ուրեմն, անցեալ հոկտեմբերի 10-ին, երբ մաէսթրոն փետայ ու մեզի եկաւ Երեւանի մէջ, անոր երջանկութիւնը հասած էր իր գէնիքին, որովհետեւ իրեն յանձնուած էր Վանաչորի (Կիրովական) վարժարաններէն միոյն երաժշտապետութեան պաշտօնն ու քաղաքապետին աշակցութիւնը կազմելու համար երիտասարդաց երգչախումբ մը:

Հոկտեմբեր 17-ին, Երեւանի Ազգային Գրադարանի մէջ փեղի ունեցած գիրքերու շնորհանդէսին կազմակերպուած Գրադարանի փնտրելութեան կողմէ, որուն Սվաճեան եւս հրաւիրուած էր, պաշտօնական բաժինէն ետք, ընդունելութեան ընթացքին լաւ ու գուարթ պահեր անցընելէ ետք բաժնուեցանք իրարմէ:

Երեք օր վերջ, երբ իրմէ չլսեցի, եւ իրեն հեռաչայնեցի, չկարողացաւ իօսիլ, ապա, իր գաւակէն՝ Քրիստէն մեծ յուզումով լսեցի ցնցիչ անակնկալը:

Պերճուհին ու ես անմիջապէս փութացինք հիւանդանոց: Անշուշտ պահը ծանր էր եւ մըթնոլորտը թանձր:

Այս իրավիճակին մէջ զիս զարմացնողը իր լաւարեստութիւնն ու գործի վերսկսելու հաստատականութիւնն էր:

Միեւնի մաէսթրօ, եթէ դուն իմ զիրցած Ռաֆֆին ես, որ ես, շնորհիւ քու զօրեղ հաւաքքիդ, քու պողպատեայ կամքիդ եւ մանաւանդ բոլորիս աղօթքներուն յաղթահարելով մարմնական դժուարութիւններդ պիտի կարողանաս անպայման փակախիւ հնչեցնել հայ երգը հայրենի քեներէն:

«Հայրերու Օր»ուան այս ուրախ առթիւ ի սրտէ կը շնորհատրեմ քեզ եւ կ'ըսեմ.

Վարձքդ կատար եւ պատիւը արժանատրին:

Երաժշտական ԴԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

Резюме

Очередной выпуск - 2 (37) 2010 - журнала "Музыкальная Армения" посвящен 75-летию хормейстера, композитора и музыковеда Григора Питечяна.

Кондак Его Святейшества Верховного Патриарха и Католикоса Всех Армян Гарегина II о награждении Григора Питечяна орденом Святого Нерсеса Шнорали. С.1,2

С.3

Монографический очерк музыковеда А.В.Геворгян "Преданный служитель армянского искусства" освещает жизненный и творческий путь Г.Питечяна. Представитель армянской общины США, хормейстер, композитор, музыковед, всю свою жизнь он преданно трудится на благо армянской культуры: многочисленные статьи аналитического и исторического характера, ценные труды, оригинальные сочинения и обработки, общественная деятельность. В статье также приводятся отрывки интервью с Г.Питечяном.

С.7

Статья кандидата искусствоведения, доцента ЕГК им.Комитаса А.О.Багдасарян представляет жанр рецензии. В статье рассматривается книга Г.Питечяна "Роль армянской революционной песни в истории Армянской музыки". Автором особо отмечена важная роль труда, в котором собраны воедино не только старые армянские революционные, но и патриотические песни. Некоторые из них записаны Г.Питечяном.

С.9

Следующая рецензия написана кандидатом искусствоведения, доцентом ЕГК им.Комитаса М.Р.Навоян. В статье рассмотрена книга Г.Питечяна "Является ли Григор Нарекаци автором шараканов?" М.Р.Навоян отмечает, что автор книги сперва подходит к теме глобально и только затем постепенно концентрирует факты, свои мысли и выводы вокруг интересующего его вопроса.

С.10

Следующая рецензия написана кандидатом искусствоведения, профессором Ереванского педагогического университета им.Х.Абовяна М.Т.Манукяном. В статье рассмотрена книга Г.Питечяна "Шаракан "Андзинк нвиреалк". Автор статьи подходит к теме глобально, повествовательным методом анализа излагает свои мысли и выводы.

С.11

Интервью доцента ЕГК им.Комитаса В.Х.Товмасына с Г.Питечяном. В интервью представитель армянской общины США, хормейстер, композитор и музыковед Г.Питечян рассказывает о начале своего творческого пути, о своей общественной и музыкальной деятельности, о своих научных трудах.

С.19

Статья музыковеда Г.Питечяна "Компакт-диск, выпущенный к 175-летию Национального госпиталя "Сурб Пркич" Константинополя" освещает историю госпиталя. В ней также дается рецензия на компакт-диск "Армянские композиторы Малой Азии", составленный Шааном Арцруни.

С.21

Подробная рецензия на книгу Н.К.Тагмизяна "Тигран Чухаджян" написана нью-йоркским музыковедом Г.Питечяном. В статье автор дает подробный анализ книги по главам.

С.32

Следующая статья нью-йоркского музыковеда Г.Питечяна посвящена Раффи Свачяну. В ней дан творческий портрет искусствоведа и хормейстера Р.Свачяна, приводятся факты его биографии, перечисляются музыкальные коллективы, которыми он руководил на протяжении жизни.

С.36

"Незабываемые воспоминания" - слово о Г.Питечяне его одноклассника, преподавателя Эчмиадзинской духовной семинарии Геворгяна, архиепископа Татева Саркисяна.

С.39

Документальная статья-расследование музыковеда Г.Питечяна "Гроб Комитаса не был "двухэтажным" посвящена 140-летию юбилею Комитаса, фактам его жизни, и посмертному возвращению на родину. Автор проводит подробное расследование, связанное с перезахоронением великого музыканта.

С.51

Следующая статья-очерк дирижера, исполнителя на шви, основателя и руководителя хоровых коллективов "Каркач" (Бейрут) и "Варанда" (Шуши) З.А.Кешишяна - воспоминания о выдающемся исполнителе на шви Илье Минасяне.

С.53

Документальная статья доктора филологических наук, ведущего сотрудника Института археологии и этнографии РА В.Г.Свазлян посвящена истории семьи Чугасян, представители которой спаслись во время Геноцида 1915 года и эмигрировали сначала в Сирию, а затем в США. Их потомки в 1994 году создали Ансамбль армянской классической, народной и ашугской музыки, с успехом концертирующий как в США, так и за их пределами.

С.58

Монографический очерк доцента ЕГК, дирижера и художественного руководителя ансамбля "Шаракан" Даниила Еражшита (Г.А.Даниелян) "Первые лауреаты-армяне международных конкурсов" посвящен широко известным музыкантам: фаготисту Ашоту Абаджяну, виолончелистке Медее Абрамян и скрипачу Жану Тер-Меркеряну.

С.64

Статья хормейстера, тариста, профессора ЕГК им.Комитаса О.А.Дарбиняна "Ованес Шираз" - воспоминания музыканта, связанные с гениальным поэтом.

С.65

Следующая статья хормейстера, тариста, профессора ЕГК им.Комитаса О.А.Дарбиняна "Ария Ашуга из оперы "Алмаст" А.Спендиаряна" аналитического характера. Автор проводит интересное исследование музыкального материала арии, иллюстрированное музыкальными примерами.

С.67

Биографический очерк доцента ЕГК им.Комитаса В.Х.Товмасына "Хормейстер Месроп Месропян" посвящен хормейстеру, основателю и бессменному руководителю женского вокального ансамбля "Цахкепундж", заведующему кафедрой хорового дирижирования Педагогического института им.Х.Абовяна, доценту М.Т.Месропяну. В статье подробно освещается творческий путь замечательного музы-

Տ.ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ

**Դասախոս,
Գևորգյան հոգևոր ճեմարան
Ա.Էջմիածին**

Գրիգոր Փիթեքյանի հեյր մեր ծանոթությունն սկսվել է ճիշտ 55 տարի առաջ, 1953 թվականին՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Դպրեվանքի մեջ, որտեղ հոգևոր ճեմարանն էր: Ինքը Եզրայուհի էր

Պետք է նաև նշեմ, որ բացի իր դասերին նվիրվածությունը, բացառիկ սեր ուներ երաժշտության հանդեպ: Երբ շեռնադրվեց և դարչավ կուսակրոն հոգևորական, ես էլ սարկավազ էի և գործակից էի: Իր առաջին պաշտոնը մարտկարարությունն էր, որովհետև Վեհափառը նկատեց, որ բավարար սնունդ չէր ստացել և երևակայեց, այդ մի քիչ դժվար պայմաններում ինքն այնքան էր ջանում լավ սնունդ տալ, որ Վեհափառը նույնիսկ պաշտոնը բարձրացրեց, որովհետև բավական առաջադեմ էր և շատ հոգացող: Բայց մեր հիմնական և հասարակական շահագրգռությունը երաժշտությունն էր: Մենք հաճախ էինք հանդիպում սիրողական խմբերում և մասնավոր՝ Յ.Բրամսի, Պ.Չայկովսկու, Լ.վ.Բեթհովենի սրեղծագործությունների շայնասպ

ԽՈՍՔ ԳՐԻԳՈՐ ՓԻԹԵՋՅԱՆԻ ՄԱՍԻՆ

եկել և իր երկու ընկերներով ուզում էին ծանոթանալ մեր հավաքի ու հոգևոր ժառանգությանը, ուսումնասիրության և միևնույն արեն սպասավորելու, որ այդ արժեքները սիրովեն և փարածվեն թե՛ նոր սերնդի և թե՛ մասնավոր ապագա սերնդի մեջ, հիմքեր սրեղծել արմարներին վերադառնալ: Այդ ժամանակ, ամբողջ սիյուրքահայության աշխատանքն էր հայաստանը մեր ժառանգության րեր կանգնելու, վճռական կամք և հայրենասիրական ոգով սերունդ դաստիարակել, նպաստելու համար Հայաստանի Ազատության, Անկախության և ինչու չէ, նաև՝ իր հոգևոր ժառանգության զարգացման և ձոխացման:

Դժբախտաբար մեր միջոցները քիչ էին, որովհետև ոչ պետք եղած գրքերը կային, ոչ Հայաստանի հեյր մնայուն կապը կար: Միևնույն սկսեց սիյուրքահայության համար հայրուկ շայնասիրունը և մեր երգերը, մեր հայագիտական ծանոթությունները կարողացանք խորացնել: Հետո, բարեբախտաբար, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի, մեր մասնագիտական գրքերը եկան և ձոխացան:

Պետք է նշել, որ Գրիգորը շատ նվիրվածության, շատ ծառայասիրության ոգի և մասնավոր սեր ուներ այս ամենի նկատմամբ:

Մեր միջև երկու կուրսի փոքրերություն կար և ընդհանրապես դժվար էր բարձր կուրսեցիների հեյր կապ հաստատելը, բայց շնորհիվ իր ընկերային բնավորության, ամեն բանի համար մարդու հասնելու իր պարաստականության, բայց մասնավոր դիմացիների նկատմամբ իր ունեցած մեծ սիրո, մենք սկսեցինք մրերիս կապ ունենալ, մասնավոր սեղանի թեմիսի, ինքը որոշ հաջողություն ուներ, մարզական կյանքին այնքան չէ մասնակցեք, բայց մեր ընկերային կյանքով սկսեց այդ բարեկամությունը, որ հեյրզհեյրեք զարգացավ, ձոխացավ, փոխադարձ հարստացումի առիթ հանդիսացավ մեզ համար:

նակները մեր խնայողություններով գնում էինք, նստում իր սենյակում, ինքը բավական լավ գործիք էր հայթայթել և կնարեկինք երաժշտության հայրուկ ունկնդրություն էինք անում, հրավիրելով նաև բոլոր նրանց, ովքեր երաժշտության հանդեպ բացառիկ սեր ունեին: Ժամանակը եկավ, Վեհափառի ուշադրությունն էլ գրավեց նրա երաժշտության նկատմամբ ունեցած բացառիկ հեյրաբքությունը և հայրնի դարչավ, Լիբանանի կոնսերվատորիայում ինքը ուսանի: Եվ դա էլ առիթ հանդիսացավ, որպեսզի մենք ավելի խորը գնահատելք մեր ունկնդրած երաժշտությունը: Սկսեցինք ավելի խոր ուսումնասիրել հայրնի երաժիշտների կյանքը: Նախկինում, որ դրանք լեզենդ էին մեզ համար, այժմ դարչան իրապես մեր սրտին խոսող, մեզ հեյր խոսող, մեզ կրթող և մեր երաժշտական հեյրաբքությունների մեջ մեզ առաջնորդող: Եվ հիշում եմ, որ շատ հաճախ, ինքը ուրախությունից ցարկոսում էր, երաժշտությամբ իր ներշնչանքն այնպիսի բարձրության էր հասնում, որ ինքն էր սկսում այդ երաժշտության բացառություններն ու վերլուծումները տալ, սպա գրքերը կարդալուց հետո զգում էինք, որ իր հասկացողությունն ու իր զգայնությունը ավելի զորավոր էին: Այդպես խորացան իր երաժշտական ուսումնասիրությունները և հեյրզհեյրեք կազմավորվեց, որպես երաժշտագետ: Ես ուրախ եմ, որ ինքը նվիրվեց, առաջին հերթին մեր հեյրափոխական երգերի ուսումնասիրությանը: Հողվածները տպագրելուց առաջ ինքը պետք է զգար, հասկանար դրանց ժամանակի ապրումներն ու զգացումները: Այդ երգերը՝ հայրենասիրական կրթություն, հայրենասիրական ոգու փոխանցում, դրանք առկա միջոցներն էին՝ թրքերեն երգեր, ֆիլմեր դիտող ու երգել սիրող հասարակության համար, որ շատ էր փարածված այդ փոքրների, միևնույն սիյուրքը հայաստա դարչավ բավական երկար ժամանակ պահանջվեց: Եվ այդ երգերը՝ թե՛ ոգի, թե՛ խոսք, թե՛ բառ փոխանցել է բոլորին: Եվ իր



Ուրարակիրներ Ավետիք Ավետիքեանը, Գրիգոր Փիտեճեանը դասընկերների հետ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ.Տ.Վազգէն Ա Կաթողիկոսի, Կ.Պոլսոյ Պատրիարք Տ.Գարեգին Արք. Խաչատուրեանի և Անթիլիասի Դպրեվանքի տեսուչ Դերենիկ Եպս. Փոլատեանի հետ, Եղուղուարդ Աբելեանը, Արտաշէս Քարակոփեանը և Վարդավառ Չարփանաջեանը, Դպրեվանք, 1956թ.



Կոմիտաս Վարդապետի 100-ամյակին համերգ, մեներգիչ Ռումինիայի օպերային քատրոնի աստղ Կարպիս Չոպեան, Նյու-Յորք, 1969թ.

երկար ուսումնասիրությունները վերջում ամփոփեց որոշ հատորի մեջ, բայց անշուշտ իր առաջին փորձերը, որպես կոնսերվատորիայի ուսանող կապարեց նաև դաշնավորելով մի շարք շարակալներ: Եվ որտե՞ղ պետք է փորձեր դրանք: Ամառը, երբ մենք բարձրանում էինք հանգստի Պիկֆայայի մեծ հանգստավայրում, Գրիգորն անմիջապես մի խումբ էր հավաքում, բոլորս երգելու համար, լավ փրամադրությամբ պատրաստ էինք, որովհետև մեր ամբողջ կուրսը երգում էր: Հանգստի օրերին հավաքվում էինք ու ինքն էլ սկսում էր իր փորձարկումները և բոլորս մեր ազատ ժամանակն իրեն պետք է փայլեց, բայց դա շատ սիրով էինք անում, րեսնելով իր նվիրվածությունը: Եվ այդ շարակալների փորձերը րանն էինք անում և հետո գալիս նստում ու սկսում էինք երգել, երբեմն էլ վերլուծում էինք, այսպես այսպես պետք է, այնպես այնպես, որովհետև ինքը շատ լավ էր զգում ամեն ինչ: Ինքն աստիճանաբար ավելի ու ավելի էր ներշնչվում և

հորինեց իր առաջին բազմաշայն երգը՝ «Խեղճուկ, գեղճուկ, ո՞ր կերթաս» աշնանային փրամադրությամբ մեղեդիով: Այնպես, ծառերի վրա նստած մեզ սովորեցնում էր նման շատ երգեր: Մի օր էլ Չարեհ Վեհափառը նկատեց ու հարցրեց, թե այս ի՞նչ երանում այսպես: Ասացինք, որ Գրիգոր Վարդապետի հորինած երգն ենք սովորում, Գրիգոր Փիթեճյանը մեզ հետ երգեր է փորձում. եկավ ինքն էլ ունկնդրեց ու սկսեց ուրախանալ, որ նման փորձեր է արվում այդ դժվարին պայմաններում: Եվ մեզ էլ քաջալերեց, որ մի երեկո պաշտոնական համերգ կազմակերպենք, որ ինքը գա և ներկա լինի: Եվ միաբանությամբ առաջարկեց կազմակերպել այդ շեռնարկը: Դա Գրիգորին մեծապես քաջալերեց: Ես հիշում եմ այդ համերգը, թե ինչպիսի ոգևորությամբ էինք կատարում: Այժմյան իմաստով, մի քիչ խեղճուկ է թվում, թե արժե՞ արդյոք սրա համար Կաթողիկոսին հրավիրել լսելու, ինքը Գրիգորն էլ քաջվում էր, նեղվում էր, որ շատ փոքր կազմով երգ-

Երաժշտական ԴԱԳՄԱՍՏԱՆ 2(37)2010

չախումբ է ներկայացնում. դա էլ իր համեստությունից էր բխում: Դա էլ առիթ հանդիսացավ, որ ինքը Նյու Յորք մեկնի և ծառայի այնպեղ, որովհետև րեսանք, որ ինքը վարդապետների մեջ խոստումնայից է հարկապես երաժշտության բնագավառում. մեկ երկու վարդապետ ունեիք, որ մասնագիրանում էին այդ բնագավառում, բայց իր նման արդյունավետություն, իր նման նվիրվածություն նրանք չունեին: Իհարկե, որոշ չափով դասավանդում էին, մասնագիրությանը բավարարում էին, բայց Գրիգորի մոտ սրեղծագործական արդյունավետությունն ու եռանդը շատ լավ րպավորություն սրեղծեց բոլորիս մոտ: Եվ որքան կարողացանք, փորձեցինք իրեն գորավիզ լինել, գիրեք եթե մեր հոգևոր հասարակությունից հեռանալու է, ուրիշ մեկը պետք է իր պաշտոնը կատարի, որ նա կարողանա գնալ և ծառայել: Կամավորները շատ էին, բայց կարևոր էր իր գործը երգչահամբեր կազմելու ասպարեզում և նաև դրան զուգընթաց իր աշխատանքը րանել և միաժամանակ կրթության գործը րանել: Ուրախ եմ, որ ինքն առիթն ունեցավ հարստացրեց իր երաժշտական կրթության պաշարը, հասավ իր նպատակին, և թե՛ որպես իմբավար, և թե՛ մանավանդ իրեն երաժիշտ, շատ հարգվեց իր շրջապատում, նույնիսկ Նյու Յորքի խարապահանջության և բժախնդրության մեջ: Ահա այսպես մենք բաժանվեցինք, դժբախտաբար մոտիկ չէինք ֆիզիկապես, որ կարողանայինք միմյանց այցելել, բայց թղթակցում էինք, այդ բարեկամությունը մնաց: Եվ շատ հաճախ կիսվում էր ինչ հետ իր անելիքների մասին: Ծար լուրջ սկսեց ուսումնասիրություններ անել մեր շարականների մասին՝ «Անչիք նվիրյալք»ը, «Հոփիսիմյանց կույսեր»ը, հետո նաև իր համերգների ժամանակ հայ երաժշտության, ծագման, պարմության իր ամբողջ գիրությունը և մանավանդ կարևոր դերակատարություն ունեցող անչնավորությունների, անշուշտ, Կոմիտաս Վարդապետի և մյուսների կյանքն ու գործունեությունը վեր հանեց: Ծար էինք սիրում Գրիգոր Սյունիին, հետո մեզ ուսուցիչ էր Համբարչում Բերբերյանը: Փիթեջանի կրթության գործում մեծ դեր ունի Ծահան Բերբերյանը, որովհետև բացառիկ արվեստաբան Ծահանը, նաև երաժիշտ էր: Մասնավորապես նրա հոգևոր իմբերգերը մեզ համար իրապես հոգևոր և արվեստի ասրումի րեսակերից շատ մեծ ներշնչանքի առիթ էին: Երբեք չենք մոռանար, Համբարչում Բերբերյանը մեզ սուլֆեջո էր սովորեցնում, հետո իր սրեղծագործություններին ծանոթացնում և այլև, դրանով զարգացնելով մեր երաժշտական ճաշակը: Բայց Ծահան Բերբերյանը ուրիշ էր: Նա մեզ րվել է շատ ավելին՝ ամեն մի բառի, ամեն մի շեշտադրության. դասական արվեստի պարմություն էր անցնում հոգևոր ճեմարանում, Պլատոնի, Արիստոտելի հետ նաև աշակերտությանը ասմունքել, նույնիսկ քայլել էր սովորեցնում, նաև Դանիել Վարուժանի «Լույսի խաղեր»ը, այնպիսի դասական բառերով, «Սափորը»: Մի քանի առիթով երթ ենք սարքել դեպի լույսին գնալու այդ քափորի կազմակերպելը: Ծահանի՝ մեզ հետ պար-

րասարած բոլոր բեմադրություններին ու հանդեսներին Գրիգորի հետ մենք միշտ ներկա էինք և շատ ուշադիր լսում էինք նրան: Երեսակայեցեք, Ծահան Բերբերյանն ինչ կանգնեցրեց, այն ժամանակ իմ անունը Խաժակ էր, ասաց. «Խաժակ, քայլիք», ինքը և Պարոն Գևորգ Գանրահարեանը, որ լավ երաժշտության նկարմամբ մեծ խանդավառություն ուներ, կանգնել դիրում էր: Հետո Պարոն Գևորգին հարցրեցի այս կատարածի նշանակության մասին, ասաց, որ. «Պարոն Ծահան Բերբերյանը քո քայլելուն սիրահարվել է», մեր շարժումների, քայլելու համաչափության, կեցվածքին էր ուշադրություն դարչնում, ոչ մի ավելորդ բան: Գնացինք իր մոտ, սկսեց քայլերի մասին դասախոսություն կարդալ և վերջում ասաց, որ ուզում է, որ մենք այսպես շնորհալի լինենք միևնույն վերջ և ներքին անչնավորությունն արտահայտելը ու պահպանելը միևնույն վերջ: Այս բոլորը այնքան է ազդել մեր սերնդի վրա, որ չեք կարող պարկերացնել: Եվ այն բժախնդրությունը, որ րվեց մեզ և այն հարարությունը և այն հարար րպարը, որ Գրիգոր Փիթեջանն ունի, այդ սերնդից է մեզ գալիս, որոնք պահապան էին մեր արժեքներին, բայց մեր ժամանակ նրանց ճոխացման, զարգացման, բացահայտման կերպերն էին ցույց րալիս: Եվ ուրախ եմ, որ Գրիգորը արդարացրել է այդ ամենը երաժշտության ասպարեզում: Իր վաստակն այնպիսին է, որ պետք է ճանաչվի, պետք է գնահատվի իր նվիրվածության համար, իր սրացած բոլոր պարգևները՝ թե՛ Վեհափառի շքանշանը, թե՛ մյուս պարգևները արժանի են նրան, որովհետև մոտիկից եմ ճանաչում, որ դրանց ակնկալության համար չի արել, այլ մի բան պահելու, մի բանով հարստացնելու, իր կուրակածն ուրիշին րալու, իր սիրուց բխած կոչումն է, որ ինքն իրեն նվիրաբերել է, այն առաքելությունն է, որին լծվել է:

Ես ուզում եմ նրան շնորհավորել իր հաջողությունների համար և մաղթում եմ, որ այդ իր ունեցած քաղցրությունը, ունեցած սերը նվիրի երաժշտությանը ասպալում ևս, որպեսզի նոր հաջողություններ ունենա:

Մեր դասարիարակների շնորհիվ էր, որ այսպիսին եղավ մեր կյանքը: Մեր ունեցած պարարավորությունները, որ փորչում էինք անպայման մի բան պահել պահպանել, որովհետև սիյուռքի հոգեբանությունն այն է, որ Հայաստանը Սովետական ռեժիմի րակ շատ բան կարող էր կորցնել, և կորցրեց, որովհետև ինքը չէր որոշում իր ճակատագիրը: Եվ մենք էլ վախենում էինք, որ եթե մենք չպահենք, Հայաստանից մի բան կպակասի: Փառք Ասրծո, այսօր այդ րագնասը չունենք, որովհետև այլևս Հայաստանն ինքը պետք է որոշի իր ճակատագիրը, բայց նախապես չունենք: Եվ մենք կարծում էինք, որքան մենք չպահենք, ամեն ինչ անհայտության մեջ կկորչի այդ ժառանգությունը:

Գրի առավ (Սղագրեց)
Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ՝
ՎԱԼԵՆՏԻՆ ԹՈՎՍՄԱՅԱՆԸ

երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍԻ ՓԻՏԵՃԵԱՆ

Երաժշտագետ,
Նյու-Յորք

Երևան հրատարակչուհու «Ազգ» օրաթերթի յունուար 31, 2007թ., թիւ 17 (3669)-ի էջ 6-ին վրայ «Միևս Չերագի անհին Երևան փոխադրում է» խորագրով հեղափոխական յօդուած մը ստորագրած է Գերեհիկ Գեորգեան:

Տրուած ըլլալով, որ Միևս Չերագի այս դէպքը կապուած կը տեսնենք Կոմիտաս Վարդապետի անհինին Երևան փոխադրութեան հետ, որպէս երաժշտագետի, այս հարցի կապակցութեամբ իմ

թիւն հայոց» բարեգործական կազմակերպութիւնը: 1886թ-ին նշանակուած է նորաբաց Ազգային Կերտնական վարժարանի տնօրէն: 1889թ-ին, իրաւափելով հեղափոխումներէ, Չերագ կը հասարարուի Լուսին, ուր կը հրատարակէ «Լ'Արմէնի» գրական-քաղաքական թերթը՝ հայ մշակոյթը օտար ազգերուն ներկայացնելու և Երուսալի մէջ բարեկապար հասարակական կարծիք ստեղծելու նպատակով: 1890թ-ին Լուսինի Փիլիպ Գոլէճի մէջ հիմնած ու ղեկավարած է Հայերէնի ամպիոնը: Նոյն թուականին ալ տեղափոխուած է Փարիզ՝ շարունակելով «Լ'Արմէնի» թերթի հրատարակութիւնը: Այստեղ ևս ալ կը շարունակէ իր գրական գործունէութիւնը: Ուշագրաւ է իր հրատարակած «Թէ ինչ շահեցանք Պէրլիկի վեհաժողովին» աշխատութիւնը, որ կը բարգմանուի նաև ֆրանսերէնի: Չերագ ֆրանսերէնի բարգմանած է Պետրոս Գորեանի, Ռափայէլ Պարկանեանի, Խորէն Գալֆայեանի ու այլ բանաստեղծներու ընտրիք երկերը՝ «Հայ բանաստեղծներ» խորագրով: Անգնահատելի են հայ և ընդհանրապէս նաև այլ ժողովուրդներու մարտուցած իր ծառայութիւնները, որոնց համար Վէնէզուէլլայի կառավարութեան կողմէ պարգևատրուած է «Ազատարար Պոլիվիարի խաչ»-ով: Պարգևատրուած է նաև պարսկական «Առիծի ու արևի սպայութեան աստիճան» շքանշանով:

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ի Ն
դագաղը երկյարկանի չէ եղած

անձնական պրպարումներու կարարելէ ետքը, այսու, Կոմիտաս Վարդապետի 140-ամեակին առթիւ, կու գամ իմ ալ համեստ լուման չգելու Կոմիտասագիտութեան գանձանակին մէջ:

Նախքան Կոմիտաս Վարդապետի մասին խօսիլ, մեր մտքերուն մէջ վերաբարմացնելու համար Միևս Չերագի դէմքը, փոխանակ ես ևս իմ կարգիս յարուկ կերպով ուսումնասիրելու և ներկայացնելու անոր կենսագրական գիծերը, այս աշխատանքիս համար բաւ համարեցի Գերեհիկ Գեորգեանի ներկայացուցած կենսագրական նօթերը հրամցնելով ընթերցողին, որոնք գրեթէ ամբողջական վերարտադրութիւնն են «Հայկական Սովետական հանրագիտարան»-ի 9-րդ հատրթին, 11-րդ և 12-րդ էջերով տրուած Կ.Մամիկոնեանի «Չերագ Միևս Գրիգորի»-ի նուիրում գրութեան:

Միևս Չերագ «Ծնած է 1852թ-ին, Պոլսոյ մէջ: Բանաստեղծ, հասարակական գործիչ, մանկավարժ: Ծնողները Պոլիս գաղթած են Ալեհի Չերագ գիւղէն: Սկզբնական կրթութիւնը ստացած է Խասգիւղի Ներսէսեան վարժարանին մէջ: Տիրապետած է յունարէնի, անգլիերէնի, ֆրանսերէնի, թրքերէնի: Երկար տարիներ գրականութեան պատրմութիւն և լեզուներ դասաւանդած է Պոլսոյ զանազան վարժարաններուն մէջ: 1878թ-ին Հայոց պատրուիակութեան մաս կազմելով (Մկրտիչ Արք. Խրիմեան, Ստեփան Փափազեան, Խորէն Գալֆայեան), իբրև քարտուղար և բարգմանիչ Չերագ մասնակցած է Պէրլիկի վեհաժողովին, ուր պիտի ընկալուէր նաև հայկական հարցը: Չերագ Խրիմեան Հայրիկի հետ այցելած էր եվրոպական շարք մը երկիրներ, դիւանագիտական ճանապարհով հայկական հարցը լուծելու նպատակով: 1880թ-ին Արիփար Արիփարեանի հետ ղեկավարած է Պոլսոյ «Միացեալ ընկերու-

րը» խորագրով: Անգնահատելի են հայ և ընդհանրապէս նաև այլ ժողովուրդներու մարտուցած իր ծառայութիւնները, որոնց համար Վէնէզուէլլայի կառավարութեան կողմէ պարգևատրուած է «Ազատարար Պոլիվիարի խաչ»-ով: Պարգևատրուած է նաև պարսկական «Առիծի ու արևի սպայութեան աստիճան» շքանշանով:

Ուրուագծային այս ծաւթութեանէն ետք յօդուածագիրը սպառած ու վերջացուցած ըլլալով հանրագիտարանի ընծայած տեղեկութիւնը Միևս Չերագի մասին, կ'անցնի իր մտքերն ու գիտելիքները փոխանցելու ընթերցողին:

Բայց, իմ կողմէս կ'ուզեմ անլցնել սա կարեւոր կէտը, ցոյց տալու համար անոր ունեցած սէրը հանդէպ Խորհրդային Հայաստանին ևս:

Տիկ. Բիւրակն Չերագ «Հայրենիքի Չայն, 4, 2 օգոստոս, N32 (106) թիւին մէջ Միևս Չերագին նուիրում իր յօդուածին մէջ կ'ըսէ. - «Մարտիւն 1926 թուականին արտասանած մի ճառի մէջ Չերագը յիշեցրեց սփիւռքի հայութեանը, որ կրակից ու անբից փրկուել է հայկական մի կտոր հող, որը և ամբողջ հայութեան յոյսի հանգրուանը պիտի լինի: Տեղահանութիւնն ու ջարդը, - Ասում էր Չերագը - անապատի ու գերեզմանատան փոխեցին: Տանկահայաստանէն սակայն յարութեան մոխիրներուն մէջէն Ռուսահայաստանը ծնաւ իբր փիւնիկ: Արարտեան աշխարհին մէջ էր ցեղին փառքի օրրանը. այժմ էլ հոն է մեր մխիթարութեան աղբիւրը. հոն մեր յոյսերուն խարիսխը»: - Ապա. տիկ. Չերագ շարունակելով կը գրէ. - «Չերագը իր յոբելեանից ստացած գումարները և ունեցած ամբողջ խնայողութիւնը նուիրաբերում է երիտասարդ Խորհրդային Հայաստանին՝ այնտեղ դպրոց կառուցելու համար (այդ միջոցներով կառուցուեց Նուբարաշէնի (Սովետաշէնի) դպրոցը):

ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական ԳԱՅԱՍՏԱՆ 2(37)2010



Կոմիտաս, Կ.Պոլիս, 1914թ.

Ապա կոչ է անում սփիւռքի հայ ժողովրդին ծառայել հայրենիքին և հայորդիներին, քանի որ, յայտարարում է Չերազը, «Չկայ հաճոյք, որ հաւասարուի հայրենիքին ծառայելու հաճոյքին»: Սրորագրուած՝ Բիւրակն Անդրեասեան:

Ի դէպ ըսեմ որ, րիկ Չերազ կառավարութեան կողմէ չհետապնդուելու համար իր մակաւնունէն հրաժարեցաւ ու ապրեցաւ մօրը աղջկութեան մակա-

ւնունով՝ Անդրեասեան կոչուելով: Քիչ անդին կը յրակահանայ թէ՛ ինչու պէտք էր փոխել անունը:

Գերենիկ Գէորգեան րալէ յետոյ Միւսաս Չերազի կենսագրական նօթերը կը շարունակէ յօդուածը այսպէս. - «Միւսաս Չերազ 1928թ-ին մահացաւ Փարիզ և թաղուեցաւ այն գերեզմանարան մէջ, ուր և 1935թ-ին, իր շիրմաքմբի հարեանութեամբ թաղուեցաւ նաև Կոմիտաս Վարդապետը»:

Այս փոքրիկ պարբերութիւնով ընթերցողին կը հրամցուին երկու սիւսալ րեղեկութիւններ:

1. - Ծիշդ է. Միւսաս Չերազ մահացաւ Փարիզ և թաղուեցաւ Փարիզ: Բայց ոչ 1928թ-ին: Ինչ մեղքս պահեմ, ես ալ կը կարծէի թէ՛ ան մահացած էր 1927թ-ին:

Գիրէի որ, Հայասրանի մէջ Չերազ գերդասարանի շառաւիղէն ապրողներ կան:

Անցեալ րարի, երբ Հայասրան էի, ազգականներէս միոյն, որ պարմաքան ու արխիւային գիրագօտող (nesearcher) է, քայց անկէ վեր ան քարեհոգի և միշտ օգրակար ըլլալու պարտասար առաքիւնութեան րէր անչ մըն է, հարցուցի թէ՛ կը փնրենմ Չերազի գերդասարանէն ապրողներ: Անշուշտ, ես ծանօթ եմ ըսաւ: Ժամադրութիւն մը կարգադրելով զացիւք:

Ինծի համար անհուն ուրախութիւն էր ծանօթանալ այնքան կիրթ ու ազնիւ, անկեղծ ու հարազատ զգացումներով հիրընկալ, սրտաքաց գրուցակից, համալսարանի հայերէն լեզուի դասախօս՝ րիկ Բիւրակն Չերազին, որ դուարն է Միւսաս Չերազի կրտսեր եղբօր՝ մեծ հայրենաստը անչ, արդի հայ մարզաշխարհի առաջին Եւրոպայի մարմնակրթանքի համալսարաններէ շրջանաւարտ մարզիկներէն, ողիմպիականի ախոյեան, Պոլսոյ ու ապա Հայասրանի Ա Հանրապետութեան շրջանի և յետոյ Խորհրդային շրջանին սկաուրակաւ շարժման՝ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներէն, ֆուրպոլային խումբե-

րու հիմնարկու, հազարաւոր որբերու ինամարար և սկաուրակապէր Վահան Չերազի:

Նախքան հեռանալս Վահան Չերազի անունէն անհրաժեշտ կը նկարենմ հերեհալը ըսելու:

Ինչպէս րեսանք «Հայրենիքի Չայն»-ին մէջ մեզ հերաքրքրող յօդուածին սրորագրութիւնը «Բիւրակն Անդրեասեան» էր:

Ինչո՞ւ Անդրեասեան և ոչ Չերազ:

Վահան Չերազ, իր ազգաստը գործունէութիւններով, իր քազմալեզուեան կարողութիւններով, իր դեկավարի հանգամանքով, Մանշի լողամրցումի երկրորդ ախոյեանութեամբ, երիւրասարդներու մրարիպար դառնալով, Հայասրանի ամբողջ րարածքին ժողովուրդին յարգանքն ու սէրը վայելելով դարչաւ օրուան իշխանութեան աչքի փուշ:

Հակառակ որ, Վահան Չերազ կուսակցական-դաշնակցական չէր, զինք գրպարտելով որպէս այդպիսին, 1927թ-ին Թիֆլիս կանչուելով Պերիա անչամբ սպանեց զինք:

Տիկ Բիւրակն Չերազ թող շարունակէ այժմ. - «Ախր, մօրս տարան: 1937թ-ին էր: Ասելով թէ աքսրեցին: Ոչ թէ աքսրեցին, այլ՝ (յուզուեցաւ պահ մը) գնդակահարեցին Երևանի քանտում: Որովհետև մայրս համարձակեր էր լինել հօրս կինը:

Տիկ Չերազ գնդակահարումի իր հերթէն խուսափելու համար, ինչպէս քացատրեցի թիչ առաջ, կոչուեցաւ Անդրեասեան: Իսկ հիմա կը գործածէ նաև Չերազ:

Երբ տիկ Բիւրակն Չերազին հարցուցի թէ՛ Միւսաս Չերազ 1927թ-ի՞ն մահացած է: Պատասխանը եղաւ. - «Չէ, 1927թ-ին չէ: Միւսաս Չերազ մահացաւ 1929թ-ին: Էդ շատ լաւ գիտեմ, որովհետև իմ ծննդեան առթիւ նա հեռագիր է տուել հօրս, որ իմ անունը դնեն ոչ թէ Բիւրակն, այլ Ազնիւ: Բայց, արդէն իմ անունը հայրս դրած է եղել: Ունեմ հօրս օրագիրը իմ ծննդեան առթիւ: Ես ունեմ ամսաթիւերով գրուած այլ կարևոր թուականներ էլ»:

Ուրեմն, այս վաւերական աղբիւրին համաչայն Միւսաս Չերազ մահացած է 1929թ-ին:

Ծիշդ է որ, Կոմիտաս Վարդապետ 1935թ-ին ֆիզիքապէս ևս մահացաւ: Աւելի ճշգրիտ ըլլալու համար 1935թ-ի հոկտեմբեր 21-ի, երկուշաքթի առաւօրեան ժամը 6:00-ին, Վիլ Ժուիֆի բուժարանին մէջ:

Ի դէպ այս անելցնեմ որ, վարդապետին մահուն քուն պարմաքը “Post traumatic Stress Disorder”-ը, այսինքն «Յետ վնասուածքային ճնշման խանգարում»-ը չէր. այլ՝ ուրքի փթամարին մէջ փուշ մը մրած էր, որ անկարևոր նկարուելով և շուրով չդարմանուելուն պարմաքաւ թարախտրեցաւ, քարողութիւններ յառաջ եկան և արիւնը թունաւորուելով մահացաւ*: Կոմիտաս Վարդապետ, իր կեանքի դժուարութիւններուն առնչութեամբ զանազան առիթներով արարայայրած դժգոհութիւններէն և յարկապէս ալ՝ ապրիլ 5, 1909թ-ին Մարթէոս Բ. Կոնսարանդնուպոլսեցի Ամենայն Հայոց Կաթողի-

Երածշտակաւ ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

* Այս առթիւ տոյն փակագիծով ուղղեմ նաև այլ երկու կէտեր, որոնք միշտ անորոշութեան մէջ ձգած են Կոմիտաս Վարդապետով զբաղողները:

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

կոսին (1908-1910) ուղղած իր նամակէն, գոր կը դնեմ այստեղ. «Եթէ հաճոյ է վեհիդ ինձ չկորցնել, այլ գտնել, արտասուելով աղերսում եմ՝ արձակէք ինձ Ս.Էջմիածնայ միաբանութեան ուխտից և նշանակէք Սևանայ մենաստանի մենակեաց: Քսան տարի կորցրի, գոնէ մնացած տարիները շահեցնեմ և անդորրութեամբ գրի առնեմ ուսումնասիրութիւններիս պտուղները՝ իբր առաել կարևոր ծառայութիւն հայ տառապեալ սուրբ եկեղեցւոյ և գիտութեան» (1.), ինչպէս նաև երբ շար ու շար անգամներ ստորագրութիւններուն չընկերացնելով «Միաբան վանուցն Ս.Էջմիածնի»-ն, առիթ րուած են այն սիսալ ու անհիսն եկեղեցիներուն ու եզրակացութիւններուն թէ՛ Կոմիտաս Վարդապետ բողած էր Էջմիածնայ միաբանութիւնն ու ազար կեանք կը վարէր: Ըսածս հասարարելու համար բերեմ հետեւեալ երկու օրինակները:

Ա. օրինակ. -



Բ. օրինակ.

- Վեներաբիկի Ա.Ղազարու րպարանէն, 1936թին լոյս րեսած երաժիշտ հայր Ղեկնղ Տայեանի (Միքեարեան ուխտէն) «Կոմիտաս Վարդապետ» (Ուսումնասիրական րեսութիւն), գրքին մէջ բերուած Կոմիտաս Վարդապետի 1909, 12 Ձ, Ս.Էջմիածնէն ուղարկած նամակին ծանօթագրութիւններէն մէկը, որ հետեւեալն է. «Այս անգամ միմիայն իր (Կոմիտաս Վարդապետ) անունը ստորագրած է, որով հետեւ սկսեալ նոյն րարոյ սեպարեմբերէն՝ քաշուած է Էջմիածնի միաբանութեան»: Այս սիսալ է*: Անկախ ասոնցմէ, իրեն մօրիկ կամ մրերիմ բարեկամներուն և ծանօթներուն ուղղած նամակներուն րակ կը ստորագրէր միայն Կոմիտաս:

Սովետական շրջանին էր, որ ստորագրութեան կրրեցին ու հանեցին «Վարդապետ» մասը դարձնելով գայն միայն Կոմիտաս:

Դժբախտաբար, այս յերիրածոյ չեը ընդհանրանալով Կոմիտաս Վարդապետը վերածուեցաւ Կոմիտասի:

Ըիշղ է. Կոմիտաս Վարդապետ ունէր իրեն յա-

րուկ դժուարութիւններ, բայց որեւէ արեւ ան շարչակուեցաւ ոչ Էջմիածնայ Միաբանութեան և ոչ ալ իր կուսակրօն հոգևորականի կարգէն:

Ան հասարացեալ և ուխտեալ հոգևորական մըն էր, որ իր հիւանդութեան երկար րարիներուն իսկ, միևնչ իր մաիր, եկեղեցականի սև զգեստը (էկեարիկ) կախուած պահեց բուժարաններու մէջ իրեն յարկացուած սենեակներուն դռներուն ետեւը:

Այս իրողութեան լրաագոյն ապացոյցը Խորէն Ա.Սորաղբեկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցաակցական հեռագիրն է, Կոմիտաս Վարդապետի վախճանման առթիւ, ուղարկած Փարիզի Վրամշապուհ Արք. Քիպարեանին: Կը բերեմ հեռագրին լրասապարձէր:



«Վրամշապուհ սրբազան

Միաբանութեան հետ միասին ողբում եմ Մայր Աթոռի վասարակաւոր միաբան, հայ ժողովրդի վշտի և ուրախութեան երգիչ, մեր սիրելի Կոմիտաս Վարդապետի մաիր: (ընդգծումները Գ.Փ.ի):

Խորէն Կաթողիկոս»:



Հագուագիտ նկար մը առնուած վերոյիշեալ Հ.Ղ.Տայեանի գրքէն. -Նկարիչ Յ.Աճեմեան, կոմպոզիտոր Գ.Ալեմշահ և Հ.Խաչատուր Վրթանեսեան ողբ. Կոմիտաս Վ-ի մարմնոյն քով

2. - Կոմիտաս Վարդապետ չէ բաղուած Փարիզ, Միևնայ Չերագի շիրմաբնին հարևանութեամբ»:

Հետեւեալ պաշտօնական նամակը, որուն ստորագրութիւնը անընթեռնելի է, կու գայ իմացնելու թէ՛ ծրագրուած է Կոմիտաս Վարդապետին մարմինը Հայասարան փոխադրել և հոն բաղել: Մեզ հետարբորող մասը միայն կը մէջբերեմ. -

* Այստեղ առ ի տեղեկութիւն ըսեմ, նաև, որ Կոմիտաս Վարդապետ երբեմն Գեորգեան է ստորագրած, փոխանակ՝ Սողոմոնեանի: Երկու բացատրութիւն կարելի է տալ ասոր: Առաջինը այն է թէ՛ 1881-ին, երբ 12 տարեկան որբուկ Սողոմոն Սողոմոնեան Էջմիածին բերուած և Գեորգ Գ Վեհափառի խնամքին յանձնուած է, Կոմիտաս Վարդապետ ինքզինը վեհափառին որդեգիր գաւակը համարելով երբեմն «Գեորգեան» մականունով ստորագրած է անունը, ինչպէս վերի Ա. օրինակը: Իսկ երկրորդ բացատրութիւնը այն է թէ՛ իր հօր անունը ըլլալով Գեորգ, երբեմն «Գեորգեան» է ստորագրած:

Ամենապարի S.S.Խորեն Սրբազնակապար Կաթողիկոս Ամենայն Հայոց ի Ս.Էջմիածին.

«Սրտի մորմոքումով տեղեկացայ հայ մամուլից, աշխարհահռչակ մեծ երգիչ և երաժշտագետ S.Կոմիտաս Վրդ. Սողոմոնեանի կսկծալի մահը, որ տեղի ունեցած է ի Պարիզում, հոկտեմբերի 21-ի երկուշաբթի օր: Մարմինը գնառուցաւ, յուղարկը 27 հոկտեմբերին. պիտի նախագահէ Կթղ. նուիրակը, պիտի պատարագէ S.Գարեգին Խաչատուրեան եպիսկոպոսը: Ներկայ պիտի լինին Վաւաճապոն, Մամբրէ և Ինճէեան Սրբազանները: Մարմինը պիտի փոխադրուի ի Հայաստան» (2.):

Այս իսկ պարմառաւ Վարդապետին դագաղը Փարիզի մէջ գերեզման չտարուեցաւ ու հողին չյանձնուեցաւ: Այլ՝ ի պահ դրուեցաւ եկեղեցոյ նկուղին մէջ, շուրջով Հայաստան ուղարկելու նպատակով:

1936թ-ին, Ֆրանսայէն Հայաստան կապարուած ներգաղթը բարեպարեհ առիթ եղաւ Կոմիտաս Վարդապետին մարմինը Հայաստան փոխադրելու: Ու այս ալ աւելցնեն, որ հանգուցեալ Վարդապետին թաղման արարողութիւնը ամբողջութեամբ չկատարուեցաւ: Անոր վերջին բաժինը վերապահուեցաւ Էջմիածնի մէջ, միաբանութեան կողմէ կատարուելու: Այս մասին աւելի ուշ կը խօսին:

Այժմ շարունակենք կարդալ Դերենիկ Գեորգեանի յօդուածը. «Եւ հիմա յայտնի կը դառնայ, որ Կոմիտասի աճիւնը Երևան տեղափոխելու ժամանակ գաղտնաբար թերուած է նաև Միևսա Չերազի աճիւնը»:

Ձգայացունց լուր: Հակառակ արդէն իսկ տիկ. Բիրակն Չերազի տուած տեղեկութեան և լուսաբանութեան, անգամ մը ևս երբ սկսայ հարցումս ընել.

-Կ'ըստի թէ՛ գաղտնաբար Միևսա Չերազի աճիւնը Հայաստան..., - նախադասութիւնս չաւարտած ըսաւ.

-Չէ, գաղտնաբար չբերեցին: Մենք թաղեցինք: Իսկ ես, որս հետ տարել, թաղել ենք իմ ազգականներին հետ միասին: Նուագախումբ էլ կար. մի փոքրիկ նուագախումբ:

Ինչպէս կը տեսնենք, այլևս տարակուսանք վեր է Միևսա Չերազի աճիւնին «գաղտնաբար», որ կը նշանակէ անօրէն կերպով, Հայաստան փոխադրուիլը:

Եթէ երբեք այս է իրողութիւնը, որ այլևս վճիպ ջորի նման յարակ է, արդէն իսկ տրամաբանականօրէն Կոմիտաս Վարդապետի դագաղին երկարականի ըլլալուն առեղծուածը ինքնին կը չքանայ:

Ապա, յօդուածագիրը չափազանց հեղափոխական տեղեկութիւններով շարունակելէ յետոյ թէ՛ ինչպէս չեռք չգած է սոյն տեղեկութիւնը, ահարկու ռումբի մը նման կը պայթի հետեւեալ հոգեցունց լուրը.

- Վարդապետին դագաղը եղած է երկարականի, վերեր՝ Կոմիտաս, ներքեր՝ Միևսա Չերազ:

Իր կարևորութեանը համար մէջբերեմ յօդուածին յիշեալ բաժինը կարենալ հետեւելու համար ըսածներուս:

- Այդ մասին տեղեկացայ բարեկամներէս մէ-

կու՝ հանգուցեալ Սաշա (Ալեքսանդր) Վիրաթի Աւլանեանի մեքենագիր յուշագրութենէն, զոր ինծի յանձնեց իր քոյրը՝ Ասիա, կեսնքէ հեռանալէն մէկ երկու ամիս առաջ:

Սաշան, որպէս քաղաքական բանարարեալ կը բռնադատուի 1937թ-ին: Յուշամատենէն կը տեղեկանամ, որ ան կը չեքրակալուի որպէս չարեհացական: Ղափանի Ողջի գիւղին մէջ աշխարհելու ժամանակ պաշտօնակից դասարտներէն մէկուն կը յայտնէ Չարենցի «Պարգաւ» բանաստեղծութեան տողերուն երկրորդ տառերով գրուած աղբարարութիւն գաղտնիքը: Դասարտի մարտնչութեամբ ալ կը չեքրակալեն 18-ամեայ մանկավարժը, կը դատարարուին 8 տարուան կալանքի: Բանտին մէջ ան կը մտերմանայ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Լէմուէլ Մարտիանին ու փրոֆեսոր Լիւրվիկ Դէմիրճեանին: Վերջինս ալ Աւլանեանին կը պարմէ, որ ինքը մասնակցած է Կոմիտասի աճիւնը Փարիզէն Երևան տեղափոխելու արարողութիւններուն, և որ դագաղը եղած է երկարականի, վերեր՝ Կոմիտաս, ներքեր՝ Միևսա Չերազ»

Միևսա Չերազի յետ մահու պարմութեան անձանօթ մը կարդալով հայկական Սովետական հանրագիտարանին մէջ Չերազի մասին գրուածը, այն տպաւորութիւնն ու յարակ կարծիքը պիտի ունենայ թէ՛ ան մահացած և թաղուած է Փարիզ և ուր ալ կը մնայ մինչև օրս:

Ճիշդ է. Միևսա Չերազի աճիւնը ևս Կոմիտաս Վարդապետի աճիւնին նման 1936թ-ին Ֆրանսայէն Հայաստան, շուրջ 1800 ներգաղթողներ փոխադրող Միևսա շոգեկանով հայրենիք կը փոխադրուէր: Սակայն, ոչ գաղտնաբար և ոչ ալ Կոմիտաս վարդապետի «Երկարականի դագաղի» մէջ անոր մարմնին տակը պառկած կամ պահուած:

Նախ, ինչպէս վերը խօսեցայ, երբ 1935թ-ին Կոմիտաս Վարդապետի գնառուած մարմինը դագաղին մէջ հանգչեցուցին, անկասկած դագաղը գնողներուն և պարասխանարու անչեքուն մտքերէն երկվայրկեան մը իսկ չէ անցած Միևսա Չերազի աճիւնը նոյն դագաղով գաղտնաբար հայրենիք փոխադրելու գաղտնաբար: Առաւել, բոլոր նկարներուն մէջ յարակ կերպով կը երևի դագաղի բնական չափի կառուցումը ըլլալը: Պէտք է յիշել նաև որ, եկեղեցոյ մէջ թաղման արարողութիւններէն յետոյ, դագաղը վերջնականապէս փակուեցաւ և կղպուեցաւ:

Այժմ հիշենք տիկ. Բիրակն Չերազի խօսքը. «Ես պիտի խօսեմ Միևսա Չերազի մասին, թէ՛ ինչ եղաւ նրա աճիւնի հետ:

Ուրեմն, Կոմիտասի աճիւնի հետ բերեցին: Էդ ժամանակ նաև ներգաղթեցին Հայաստան մայրիկիս հորաքոյրը իր ընտանիքով և նրանց տեղաւորեցին Նուպարաշէն: Հէնց Նուպարաշէնում էլ աճիւնը տուեցին մեզ և էնտեղ թաղում կազմակերպեցինք էն դպրոցի բակում, որ իր դրամով էր կառուցուել: Նուագախմբով և այլն Միևսա Չերազի աճիւնը հողին յանձնեցինք: Դա երեսունվեց թիւն էր:

Բայց, դժբախտաբար, երեսունօթ թուին սկսուեցին էդ Ստալինեան ահաբեկումները և էն ժամանակ բաւական տոգետ մարդիկ, հիմա էլ, հասնում էին

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

իշխանութեան: Նշանակեցին կոլխոզի նախագահ մի տգէտ մարդու, որը Մինաս Չերազին համարելով դաշնակցական և թէ դաշնակցական օրկանի աղբորուխատ (այլասէր), ինչ գործ ունի էստեղ ասելով գերեզմանից հանում, տանում, ինչ որ տեղ կորցնում են աճիւնը:

Հա, Նուպարաշէնում իմ ընտանիքիս անդամները ինձ պատմեցին և բոլոր նուպարաշէնցիները էլ բանը գիտեն:

Երբոր, Ստալինի մեռելուց յետոյ անդրադարձանք էլ հարցին, ուզեցինք գտնել աճիւնը, բայց արդէն ուշ էր: Մանածագործուածքներու (textile) գործարան են կառուցել: Մինաս Չերազի աճիւնը մնացել է նրա տակ:

Հօրեղբայրս, երբոր 1968թ-ին Պոլիսէն մեզի այցելութեան եկաւ, նորից անդրադարձաւ դրան: Դիմումներ գրեց, դէս ու դէն գնաց և գնաց Պոլիսի Մարմարա թերթում հրատարակեց իր յօդուածը, որ «Փնտրել եմ եղբօրս Մինաս Չերազի աճիւնը և Հայաստանում հնարատր չեղաւ գտնել զայն»:

Ուրեմն, ցարդ րեասնք թէ՛ որքան ճիշդ և որքան սխալ րեդեկտրիսներ րրուած էին հանրութեան մեր անմահանուն մեծերուն մասին:

Սակայն, Կոմիտաս Վարդապետին մարմինը Հայաստան փոխադրելու և հայրենի հողին մէջ թաղելու հարցը այնքան ալ հեզասահ կերպով չընթացաւ:

Ինչպէս վերը բսի, որոշուեցաւ 1936թ-ին Հայաստան ներգաղթողներուն հետ դրկել Կոմիտաս Վարդապետին դագաղը:

Այս մասին ամենավերջին արտայայտուողը եղած է Խաչիկ Բաղիկեան, Հայաստանի «Ազգ» թերթին 26 սեպտեմբեր 2009թ-ի թիւին մէջ «Կոմիտասի աճիւնը Փարիզից Երևան է փոխադրում Աղասի Խանջեանի շնորհիւ» վերաբերեալ յօդուածով մը:

Այս յօդուածին և նիւթին մասին ևս մի քանի նշմարներով ամբողջացուցած պիտի ըլլամ սոյն գրութիւնս:

Անմիջապէս ըսեմ, որ Խաչիկ Բաղիկեան իր յօդուածին առաջին պարբերութեան մէջ կ'ըսէ. - «Սոդոմոն Գէորգի Սողոմոնեանը Ամենայն Հայոց Կաթողիկոս Խրիմեան Հայրիկի շեռամբ 1895թ-ի փետրուարի 26-ին շեռնադրում է Վարդապետ՝ անուանակոչուելով 7-րդ դարի կաթողիկոս, շնորհալի բանաստեղծ, անուանի գիրնակաւ ու հրաշալի շայն ունեցող Կոմիտասի անունով:

1895թ-ի փետրուար 26-ին, Կոմիտաս Վարդապետ, Վաղարշապատի Ա.Ասրուածածին եկեղեցուց մէջ ոչ թէ Խրիմեան Հայրիկի կողմէ կը շեռնադրուի վարդապետ, այլ՝ Մեսրոպ Արք. Սմբատեանի: Իսկ, Կոմիտաս անունը ոչ թէ այդ օրը կը սրանայ, այլ՝ արդէն իսկ սրացած էր 1894թ-ի սեպտեմբեր 11-ին կուսակրօն քահանայ (աբեղայ) շեռնադրութեան ժամանակ: Այո, Խրիմեան Հայրիկի փափաքով, բայց ոչ անոր շեռամբ:

Քիչ մը անդին, Խաչիկ Բաղիկեանի գրութեան մէջ կը կարդանք. «(Կոմիտաս Վարդապետի) դագաղը հոկտեմբեր 27-ին դրում է Փարիզի Ա.Յով-

հաննէ Մկրտիչ եկեղեցու մուտքի առաջ, կարարուն է հոգեհանգստի շքեղ արարողութիւն»:

Ա.Յովհաննէս Մկրտիչ եկեղեցուց մուտքին առաջ չէ կարարուած հոգեհանգստի շքեղ արարողութիւն:

Կոմիտաս Վարդապետ օժեալ կրօնատր մըն էր: Հայց. (Հայաստանեայց.-**խմբ**) եկեղեցին կրօնատրներուն համար «կարգ թաղման հոգևորակաւաց» անունով յարուկ արարողակաւ կարգ մը ունի, և ըստ այս կարգին կարարուեցաւ հանգուցեալ վարդապետին թաղման արարողութիւնը հոկտեմբեր 27-ին:

Թաղման կարգի այս արարողութիւնը ոչ եկեղեցիէն դուրս և ոչ ալ եկեղեցուց դռան առջև րեդի կ'ունենայ:

Ննջեցեալին դագաղը յարուկ աղօթքներով, սաղմոսներով, շարականներով ու անարարական ընթերցումներով եկեղեցի բերում և դէմքը դէպի արևելք դարձած, արեանին մէջ րեդատրուած կ'ըլլայ:

Յարուկ պարարագ կը մարուցուի:

«Ողջոյն»ի պահուն պարարագը կ'ընդմիջուի թաղման կարգի արարողութեամբ, դագաղը բեմ կը բարձրացուի, Ա. միւռնով կ'օժուի հանգուցեալին ճակարկ ու աջը և Ս.Աւետարան մը կը դրուի անոր կտրծքին վրայ: Այնքան յուզիչ հրաժարակաւ «Ողջոյն»ի երգեցողութենէն ետք, եկեղեցականները այդ օրուան ողջոյնը առնելով հանգուցեալին աջն ու Ս.Աւետարանը համբուրելով, կ'իջնեն բեմէն վար, պարարագը կը շարունակուի, յետոյ դագաղն ալ բեմէն վար կը բերուի և կը րեդատրուի արեանին մէջ:

Պարարագի վերջատրութեան արարողութեամբ դագաղը կ'առաջնորդուի եկեղեցիէն դուրս:

Այսպիսով, թաղման կարգի եկեղեցուց բաժինը կ'աւարտի: Ասկէ անդին կը մնայ ննջեցեալը հողին յանձնելու և գերեզմանը կնքելու արարողութիւնը, որ Կոմիտաս Վարդապետի պարագային, այս վերջին բաժինը վերապահուեցաւ Ա.Էջմիածնի մէջ, անոր Միաբանութեան կողմէ կարարուելու համար:

Ուրեմն, միայն դամբանականները խօսելու համար, օրուան պարասիսանարու մարմինը նկարի առնելով եկեղեցուց փոքր ըլլալու յանգամանքը, որոշած էր եկեղեցուց դռան առջև կարարել դամբանակաւ ելոյթները:

Որպէս կենդանի վկայութիւն բերեմ այդ օրուայ Փարիզի ՀՕԿ-ի (քիչ յետոյ կը խօսիմ այս կազմակերպութեան մասին) Կեդրոնակաւ վարչութեան վարիչ քարտուղար՝ Տօքթ. Հայկ Գալճեանի գրի առած յուշերէն, որոնք ցարդ շեռագիր վիճակի մէջ կը մնան Հայաստանի Ազգային Արխիւին թիւ 449 ֆոնդին մէջ:

«Եկեղեցակաւ արարողութեանց աւարտումէն յետոյ, դուրս հանուեցաւ դագաղը և գերեղուեցաւ եկեղեցիի դռան առջև, որպէսզի ժամերէ ի վեր սպասող ծովածաւալ բազմութիւնն ալ կարենայ մասնակից դառնալ այս հանդիսութիւններուն, որոնք պիտի սկսէին դամբանականներով:

Առաջին խօսողը եղաւ պրն. Արշակ Չօպանեան

Երաժշտակամ ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

«Կոմիտասեան Յանձնախումբ»-ին կողմէ: Յեկոյ իօսք առին երկու օրսր հիացողներ, մին՝ Ամենքէ Կազդուէն, նախագահ Ֆրանսայի երաժշտական ընկերութեան, իսկ միւսը՝ Գուրդ Սարս (գերմանացի միջազգային երաժշտարանական (միզգիքլօժի) ընկերութեան կարկառուն ղէմքերէն:

Միտքարեան միաբանութեան կողմէ խօսեցաւ Հայր Սահակ Վրդ. Տէր Մովսէսեան. եկեղեցիի վարչութեան կողմէ՝ Յ. Գալլպճեան. ՀՕԿ-ի կեդրոնական վարչութեան կողմէ՝ վարիչ քարտուղար Կոթթ. Հ. Գալճեան. Կոմիտասեան սաներու կողմէ՝ խօսեցաւ Կոմիտասի աշակերտներէն Հ. Սէմէրճեան. Վասպուրականի Հայր. Միութեան կողմէ՝ Տիգրան Չիքունի, «Յառաջ» թերթի կողմէ՝ Շ. Միաբեան, «Ապագայ» թերթի կողմէ՝ Հրաչ-Երուանդ. իսկ վերջին խօսողը եղաւ վարդապետի ծննդավայրի՝ Քէօթահիոյ հայր. (հայրենակցական.- **խմբ.**) միութեան ներկայացուցիչը, որուն սնունը չեմ յիշեր»:

Շարունակենք կարդալ Խաչիկ Բաղիկեանի յօդուածը. -«Եւ ահա գալիս է յարմար առիթը՝ 1936թ-ի մայիսի 9-ին, Ֆրանսայից Հայաստան մշտական բնակութեան նպատակով ներգաղթող 1800 հայերով բեռնատրուած շոգեմարը՝ Կոմիտասին ինամոդ յանձնաժողովի նախագահ, փարիզաբնակ Դանուշ Շահվերդեանի ջանքերով ու հսկողութեամբ, Հայաստան է փոխադրում նաև Կոմիտասի անհիւր:

Դա իրականացում է Հայաստանի Կենտրոնի քարտուղար, մեծ հայրենասէր, հայ ժողովրդի արժանի գաւաի, ծագումով վանեցի, Գէորգեան ճեմարանում երկու տարի սովորած Աղասի Խանջեանի շնորհիւ»:

Հարկ է այսպէս յերադարձ ակնարկով մը խօսիլ Ֆրանսայէն Հայաստան ներգաղթի կազմակերպութեան մասին:

Ներգաղթի հիմնական կազմակերպութիւնը ամէն տեղ ՀՕԿ-ն էր եղած: Բայց ո՞վ էր կամ ի՞նչ էր ՀՕԿ-ը:

Հայաստանի առաջին հանրապետութեան քապալումէն յետոյ, 1921թ-ի սեպտեմբեր 29-ին, Խորհրդային Հայաստանին օգնութեան համար, Հայաստանի ժողովրդական կոմիսարներու խորհուրդը որոշեց հասարակել «Հայաստանի օգնութեան կոմիտէ»-ն, ՀՕԿ-ը, որուն կեդրոնական վարչութեան առաջին նախագահը ընտրուեցաւ Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեան:

Նոյն օրը Յովհաննէս Թումանեանի, Լէօի և Արամայիս Երզնկեանի ստորագրութիւններով ՀՕԿ-ի առաջին կոչը ուղղուեցաւ ամբողջ հայութեան Խորհրդային Հայաստանին օգնելու խնդրանքով: Ահա թէ ինչ կ'ըսուէր. -«Աշխարհի ամէն կողմը ցրուած հայ ժողովուրդ, լսիր, քեզ է կանչում Հայաստանի Օգնութեան Կոմիտէն: Լսի՛ր քեզ կանչող հայրենիքի շայնը և շրտապիւր օգնութեան ամէն բանով, ինչով կարող ես»:

Հերզիտըտէ այս կազմակերպութիւնը արդասահմանի հայաշար գաղութներուն մէջ իր մասնաճիւղերը ունեցաւ, որոնք ոչ միայն դարձան Հայաստանի կառավարութեան և ժողովրդին օգնող կազմակերպութիւն, այլ՝ Դաշնակցութեան ղէմ լուրջ պայքար տանող մեծ կազմակերպութիւն:

Ահա թէ ինչպէս Կենտրոնի քարտուղար, Հայաստանի կառավարիչ Աղասի Խանջեան կը ներկայացնէր ՀՕԿ-ը.

«Սովետական Հայաստանի և Սովետական Միութեան ղէմ ուղղուած դաշնակցների այդ աշխատանքին հակադրում է մեր աշխատանքը (Հայաստանի Օգնութեան Կոմիտէների միջոցով)՝ արդասահմանի հայերի լայն զանգուածներից դաշնակցներից մեկուսացնելու նպատակով և Խորհրդային Հա-



Ողբացեալ Կոմիտաս վարդապետի թաղման արարողութիւնը: Պատարագիչն է Գարեգին Եպս. Խաչատուրեան: Ս. Հովհաննէս Մկրտիչ եկեղեցի, հոկտեմբերի 27, Փարիզ, 1935թ.

Երաժշտական ԴԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

յասարանի ազդեցութիւնը նրանց վրայ տարածելու համար»:

Խ.Բաղդիկեանի յիշած «Կոմիտասին ինամոռ յանձնաժողովի նախագահ, փարիզաբնակ Դանուշ Շահվերտեան»-ը, ներգաղթը կազմակերպելու համար Հայաստանէն դրկուած լիազօր ներկայացուցիչն էր և ոչ թէ ներկայացուած փարիզաբնակ հայը:

Ներգաղթողներու ճամբորդութեան քղթած-րարները Խորհրդային դեսպանատուն փակողն ու դեսպան Փոթյունքիին հետ յարաբերողն ու գործողն էր Կոթք. Հայկ Գալճեան: (Կարևոր պարտականութիւն, Սովետի համար վարահելի գործակից):

Տօքթ. Հայկ Գալճեան կ'ըսէ. -«Աւելորդ է ըսել որ, այդ օրերուն և մինչև ներգաղթի կարասանին մեկնումը մեր գրասենեակը, կամ ուրիշ խօսքով Ֆրանսայի ՀՕԿ-ի ամբողջ մեքենան, իր շրջանային և մասնաճիւղային լայն ցանցերովը՝ միշտ լարուած վիճակի մէջ մնաց ընկ. Շահվերտեանի տրամադրութեան տակ»:

«Կար նաև դիւանագիրական ճակատի աշխատանքներու հոգը: Այս ճակատի կազմութեան մէջ կը մտնէին Ֆրանսական կառավարութեան երեք ներկայացուցիչները. արտ.(արտաքին.-**խմբ.**) գործոց, ներքին գործոց և ֆինանսներու նախարարութիւնները, Ազգերու դաշնակցութեան կից գործող Նանտենեան կեդր.(կեդրոնական.-**խմբ.**) օֆիսի ներկայացուցիչը, Խորհրդային Միութեան դեսպանը, Խորհրդային Հայաստանի լիազօրը (Գ.Շահվերտեան), Հ.Բ.Ը.Միութեան ներկայացուցիչները (Վ.Մալճեան և Լևոն Կէրտան), Գաղթականաց կեդրոնական գրասենեակը (Ա.Չօպանեան) և ՀՕԿ-ի կեդրոնական վարչութիւնը (վարիչ քարտուղար Կոթք. Հ.Գալճեան և նախկին նախագահ Կոթք. Ե.Միլևանեան):

Ներգաղթի կեդր.(կեդրոնական.-**խմբ.**) կոմիտէն ալ իր կարգին շարքական նիւտեր կը գումարէր Բարեգործականի գրասենեակին մէջ, նախագահութեամբ Չարեհ Պէյ Նուպարի..

Հայաստանի ժողովրդական կոմիտար և ժողով-միտարին կից գործող ներգաղթի կոմիտէի նախագահ Արսէն Եսայեան, 1935թ-ին հոկտեմբերին կը նշանակուի ՀՕԿ-ի գլխաւոր վարչութեան նախագահ (Երևանի մէջ):

Արշակ Չօպանեան ներգաղթէն 11 օր առաջ, Փարիզէն ապրիլ 20, 1936թ-ին Էջմիածնայ Գէորգ Արք. Չորեքչեանին գրած նամակին մէջ, ի միջի այլոց կ'ըսէ. - «Բաւական ժամանակ զոհեցի (սիրով) պրն. Շահվերտեանին օգնելու համար ներգաղթի գործին մէջ: Հիմա ամէն ինչ հոգացուած է և մայիս 9-ին Մարտէլէն մեծ նաւ մը կը մեկնի դէպի Պարթում, 1800-ի հասնող գաղթականներով բեռնաւորուած: Անկէ յետոյ տեղ մը պիտի առանձնանամ (եթէ երբեք չգեւն զիս հանգիստ) ու պիտի ջանամ աւարտել Քուչակեան տաղերու աշխատանքս»:

1935թ-ի հոկտեմբեր 22-ին, Կոմիտաս Վարդապետի ինամակալ մարմնին, ինչպէս նաև ֆրանսահայ այլ կազմակերպութիւններուն առաջարկն ու խնդրանքը Վարդապետին մարմինը Հայաստան փոխադրելու, երբ կը ներկայացնեն Դանուշ Շահվերտեանին, վերջինս կը արիպտի Հայաստանի Կենտրոնի քարտուղարին՝ Աղասի Խանջեանին ինացնել այդ:

Ա.Խանջեան ալ իր կարգին, հետևեալ յոյժ կարևոր հեռագիրը կը դրկէ Լ.Բերիային, անոր հասնութիւնը ստանալու համար: Բայց միաժամանակ ալ, շոգեմալի մեկնումի նախօրեակին, ՀՕԿ-ի միջոցաւ հեռագիրով մը կ'իմացնէ Գ.Շահվերտեանին «առ այժմ յետաձգել այդ գործը»:



Ողբացեալ Կոմիտաս վարդապետի դագաղը եկեղեցիէն դուրս բերուած պահուն: Ս.Հովհաննէս Մկրտիչ եկեղեցի, հոկտեմբերի 27, Փարիզ, 1935թ.

Անշուշտ հեռագրին լուսապարճերը ռուսերե-
նով է: Պարմարան և հերազոտող ազգականս սի-
րով հայերենի բարգմանելով, Սովետական շրջա-
նին անհեռնմիտի արխիվներու մէջ պահուած այս
չափազանց արժէքաւոր հեռագիրը կը ներկայաց-
նեն հանրութեան:



ՀԿ (Բ) Պ ԱԿ ԿԿ, ընկ. Լ.Բերիային 22 հոկտեմ-
բեր 1935թ-ին, Փարիզում, երկարատե հիվանդու-
թիւնից յետոյ, վախճանունեց հայ կոմսոգիտոր Կոմի-
տասը (Սողոմոն Սողոմոնեանը):

Ֆրանսիայի գաղութում մեզ մօտ կանգնած հայ
հասարակական կազմակերպութիւնները եւ հիւանդ
երգահանի խնամակալութեան Հասարակական կո-
միտէին, ներգաղթի գործերով Փարիզում գրնուող
ընկ. Դ.Շահվերդեանի միջոցով, դիմել են խնդրելով

թույլատրել մահացած երգահանի դին յուղարկաւոր-
ելով նպատակով փոխադրել Հայաստան: Մեր պա-
րասիանին սպասելու պարմառով երգահանի վեր-
ջնական բաղումը Ֆրանսիայում րեդի չի ունեցել:

Նշանատր հայ երգահան Կոմիտասը ծնունդ է
1869թ-ի Կուրիկայում, սովորել է Էջմիածնի ակադե-
միայում, 1890թ-ին աւարել է ակադեմիան եւ սրա-
ցել է հոգեւոր աստիճան: Գործուղուել է Երուսա-
կաւաւանի կրթութիւնը աւարելու համար եւ 20-
25 տարիների ընթացքում անընդհար զբաղուել է
երգահանութեամբ եւ երաժշտական աշխատանքով
(ուղղումը մերն է՝ գործունեութեամբ.-խմբ):

1910թ-ից Էջմիածնի ռեակցիոն արարների կող-
մից հալածանքների հետեւանքով նա լքեց Էջմիածն-
ը եւ իր գործունեութիւնը փոխադրեց Կ.Պոլիս:

1915թ-ին Կոմիտասը ծանր հիւանդացաւ եւ հե-
ռացաւ ամեն րեասկ աշխատանքից ընդհուպ միևնչե-
կեանքի վերջը:

Հակասական է Կոմիտասի ասանդը հայ մշակոյ-
թի բնագաւառում: Ըստ էութեան, նա ազգային երգի
վրայ աշխատած առաջին հայ երգահանն է: Երկար
տարիների ընթացքում նա հաւաքել, մշակել եւ պրո-
պագանդել է հայ ազգային երգը: Նրա երգերը հիմա
եւս լայնօրէն րարածուած են եւ մեծ սէր են վայելում
Հայաստանի աշխարատորութեան մէջ:

Արրասահմանում, արարքեր երկրներում ապ-
րում են միևնչե 800 հազար հայեր: Նրանց հիմնա-
կան մեծամասնութիւնը դուրս է եկել Թուրքիայից,
փախչելով հիմնականում համաշխարհային ինպե-
րիալիտական պարերազմի իրադարձութիւնների
հետ կապում:

Հայ-սպիտակգուարդիականների մի խումբ՝
դաշնակները, Հայաստանի խորհրդայնացումից յե-
տոյ, իրենց հիմնական խնդիրն են համարում ար-
րասահմանեան գաղթօջախների հայերի կազմա-
կերպումը եւ իրենց ազդեցութեան րարածումը
նրանց մէջ:

Բոլոր երկրներում ուր կան հայեր, դաշնակներն
ունեն իրենց կուսակցական կազմակերպութիւննե-
րը, հասարակական կազմակերպութիւնները եւ
իրենց լայն մամուլը: Սովետական Հայաստանի եւ
Սովետական Միութեան դէմ ուղղուած դաշնակների
այդ աշխատանքին հակադրում է մեր աշխատանքը
(Հայաստանի օգնութեան կոմիտէների միջոցով՝
արրասահմանի հայերի լայն գանգուածներից դաշ-
նակներին մեկուսացնելու նպատակով եւ Խորհրդա-
յին Հայաստանի ազդեցութիւնը նրանց վրայ րարա-
ծելու համար:

Այդ բնագաւառում մեր աշխատանքն ունի
յայտնի յաջողութիւններ: Այդ յաջողութիւնների ամ-
րապնդման համար նպատակաշարմար է օգրագոր-
ծել մեր րեասկէրից հնարատր եւ թույլատրելի կա-
պի միջոցները եւ արրասահմանի հայերի լայն գան-
գուածների վրայ ազդեցութիւնը:

Դրա հետ կապում Կոմիտասի խնդրի վերա-
բերեալ մեր մերժումը կլինի աննպատակաշարմար
եւ դաշնակների կողմից կարող է օգրագործուել
Խորհրդային Հայաստանի դէմ իրենց պայքարում:

Ահա թէ ինչու, քննարկելով այս հարցը, Հայաս-

երածժողովական ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

տանի Կ(բ)Պ Կենտրոնի բիրոս 20/11-36 թ. ընդունեց հետևեալ որոշումը. «Ի պարասխասն Կոմիտասի խնամող կոմիտեի խնդրանքի, հնարատր համարել թոյլարել Փարիզում վախճանում երգահան Կոմիտասի դին փոխադրել՝ Երեսանում յուղարկատրելու համար. կազմակերպելով դա Խորհրդային Երգահանների միության գծով: Դեռ հասարարման ՀԿ(բ)Պ ԱԿ Կոմիտեում»:

Համաշայն Կոմունիստական (բոլշեիկեան) Պարտիայի Կենտրոնի այս հարցի վերաբերեալ 1934 եւ 1935 թուականների, որոշումների, այսօր՝ 10/V-36 թուականին, հաղորդում սրացուեց, որ Մարտիից դուրս է եկել Ֆրանսիայից Հայաստան մշտական բնակութեան տեղափոխուող շուրջ 1800 հայներգաղթողներով նաւը: Ընկ. Շահվերդեանը յայտնեց նաեւ, որ այդ նաւով Հայաստան է ուղարկուել Կոմիտասի դին, չնայած նախ մեկնումի նախօրէին մեկը ՀՕԿ-ի միջոցով նրան հեռագրել էինք առայժմ յետազգել այդ գործը: Նաւը Բաթումիում կլինի այս րարուայ մայիսի 17-19-ը:

Ստեղծուած պայմաններում հարցի միակ Նպարակայարմար լուծումն է հանդիսանում թոյլարել Երեսանում Կոմիտասի յուղարկատրութեան կազմակերպումը Հայաստանի Խորհրդային երգահանների միութեան գծով:

Հարցի լուծման ընթացքում խնդրում եմ հաշուի առնել նաեւ որ Կոմիտասը երբեք չի եղել դաշնակ կամ դաշնակներին մերերիւմ, համարում է մշակոյթի դեմոկրատ գործիչ եւ մեծ հեղինակութիւն է վայելում Հայաստանի Խորհրդային մրատրականութեան մէջ:

Հայաստանի Կոմունիստական բ(ոլշեիկեան) Պարտիայի Կենտրոնի քարտուղար (Խանջեան)» (3.)

Հապաւումներ.

Կ(բ)Պ = Կոմունիստական բ(ոլշեիկեան) Պարտիա

ՀԿ(բ)Պ ԱԿ ԿԿ = Համամիութեանական Կոմունիստական (բոլշեիկեան) Պարտիայի Անդրկովկասեան կազմակերպութեան կենտրոնական կոմիտե:

Կը շարունակեմ:

Մարտէյի մէջ ամէն ինչը ծրագրուածին համաշայն չափազանց կանոնատրութեամբ եւ մեծ կարգապահութեամբ կը կարարուի:

Մայիսի 9-ին, Սանայա շոգեանը լեցում շուրջ 1800 հայրենասէրներով, մէջը ըլլալով Կոմիտաս Վարդայպերի եւ Մինաս Չերագի աճիւնները, պարասար է շարժելու:

Երբ, միշդ կէսօրին, շոգեանին ուժեղ եւ բանք սուլիչով մեկնումի առաջին ազդանշանը կը րրուի, Դանուշ Շահվերդեանի խնդրանքով ՀՕԿ-ի ներկայացուցիչը՝ րօքք. Հ.Գալճեան մեծ յուզումով կը յայրնէ իր շնորհակալութիւններն ու բարեմաղթութիւնները բոլորին, որմէ յետոյ շոգեանը երկարարեւ սուլել է երբ կամրջակը եր կը քաշէ:

Յանկարծ բիւր բերաններով երգում Ա.Այվազեանին «Ծաղկիր ազար իմ հայրենիք»-ը, Ֆրանսական «Ազգային քայլերգ»-ը եւ «Միջազգայնական»-ը սրեղծելով աննկարագրելի ոգևորութե-

ան, յուզումի, ուրախութեան եւ միաժամանակ բաժանումի առթած րիւրութեան զգացումներով լեցում հոգեվիճակ մը, հարիւրատր կարմիր դրօշակներ ծածակելով շոգեանին վրայ, դանդաղօրէն կը հեռանար ան քարափէն, շրջապարում հարիւրատր մակոյկներով, որոնք լեցում էին հայրենակարօր հայրողիներով քիչ մը աւելի վայելելու համար երջանիկ հայրենադարչներուն մօրիկութիւնը:

«Մարտէյէն Փարիզ վերադարչի ճամբուն վրայ, կ'ըսէ րօքք. Գալճեան, ընկ. Շահվերդեանը եւ ես երկու օր մնացիք Լիոն»:

Ուրեմն, ինչպէս կը տեսնենք, Ա.Խանջեանի ՀՕԿ-ի միջոցա Ֆրանսա ուղարկած հեռագիրը ուշ հասած ըլլալով, արդէն իսկ շոգեանը հեռացած էր Ֆրանսայէն Կոմիտաս Վարդայպերի աճիւնով:

Այսրեղ, իր կարեորութեանը համար, իմ ներկայացուցածիս որպէս այլ րարբերակ, բերեմ Խ.Բաղիկեանի յօդուածին մէջ յիշում Հայաստանի Սովետական գրողների միութեան քարտուղար, «Գրական թերթ»-ի խմբագիր (1930-1936) Վահրամ Ալազանի այրիին՝ հետևեալ յուշը.

«Մի օր, գիշերուայ ուշ ժամի, Հայաստանի Կենտրոնի քարտուղար Ա.Խանջեանը Ալազանին իր մօտ կանչեց: Մի ժամից նա տուն վերադարձաւ եւ պատմեց հետևեալը. «Փարիզում վախճանուել է մեր պայծառ Կոմիտասը: Նրան խնամող յանձնաժողովը դիմել է ընկեր Խանջեանին, որ նա ընդունի Կոմիտասի դագաղը եւ Երեսանում կազմակերպի թաղման արարողութիւնը: Իհարկէ, Ադասին տալիս է իր համաձայնութիւնը: Սակայն Բերիայի երևանեան գործակալները այդ մասին հաղորդում են նրան: Միւ օրը Բերիան հեռախօսով կապում է Ադասու հետ եւ ասում.

- Ադասի, լսել եմ, որ Փարիզից ինչ-որ հոգևորական, ինչ-որ տէրտէր ես բերում Երեսանում թաղելու համար, ես կտրականապէս արգելում եմ. հեռագիր, թող չուղարկեն, մենք հոգևորականներին թաղելու համար գումարներ չունենք:

Այս դէպքից Խանջեանը անսահման յուզուել ու վրդուել է, անպատեհ է համարել ինքը հեռագիր տայ, խնդրել է, որ Ալազանը (ամուսինը) հեռագիր տայ:

-Ես ցաւով նրա խնդրանքը կատարեցի, բայց տայ Աստուած, որ հեռագիրը ուշ տեղ հասնի, եւ Կոմիտասի դին ետ չուղարկեն, ասել է Ալազանն ու ատելացրել. - խեղճ Ադասի, դու տեսնում ես, Մարօ ցան, թէ ինչպիսի պայմաններում է աշխատում այդ պայծառ մարդը:

Աստծո յաջողութեամբ, այդպէս էլ լինում է: Յաջողօրը Ալազանը Կենտրոն է գնում՝ իմանալու հեռագրի պատասխանի մասին: Խանջեանն ուրախուրախ նրան ցոյց է տուել հեռագրի պատասխանը՝ «Նաւը երեք օր է դուրս է եկել եւ գտնում է Միջերկրական ծովում. այն Բաթումիում կը լինի մայիսի 17-19-ին: Ետ դարձնել չենք կարող» (ստորագրում) Կոմիտասին խնամող յանձնաժողով:

Իսկ, երրորդ րարբերակը կը նկարեմ Արշակ Չօպանեանին Գէորգ Արք. Չորեքեանին գրած նամակին «Յեր գրութեան առաջին պարբերութիւնը»,

նոր կը կարդանք. «Մեր ողբացեալ Կոմիտաս Վարդապետի մարմնոյն Հայաստան փոխադրութեան և հայ հողին մէջ հանգչելուն մասին մեր փափաքը պիտի կարարուի. ես այդ մասին գրեր էի պրև. Ա.Խանջեանին և խօսեցայ ինչ պրև. Շահվերտեանին: Այս վերջինէն ինացայ - ինչպէս և Ռուբէն Թերլեմեզեանի մէկ նամակէն - թէ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը որոշած է արտօնել մեծ երաժշտի մարմնոյն Հայաստան փոխադրութիւնը և թէ ան պիտի հանգչի «Պանթէոն»-ին մէջ, մեծ հայերու հանգարավայրը:

Լ.Բերիային դրկուած Ա.Խանջեանի հեռագրի երրորդ բաժնի 6-րդ պարբերութենէն յայտնի կ'ըլլայ որ, Արշակ Չօպանեանին նամակը գրուած Ա.Խանջեանին բառականխի կանոնի է եղած, քանի որ այդ հարցը Հայաստանի Կ(ք)Պ Կենտրոնի բիւրօն 20-2-1936թ-ին քննարկած և հետևեալ որոշումը առած է. «Ի պարսիստան Կոմիտասին խնամող կոմիտէի խնդրանքի, հնարաւոր համարել, թոյլարել Փարիզում վախճանուած երգահան Կոմիտասի դին փոխադրել՝ Երեւանում յուղարկաւորելու համար, կազմակերպելով դա Խորհրդային երգահանների միութեան գծով: Դնել հասարակական ՀԿ (ք) Պ ԱԿ կոմիտէում»:

Ճիշդ էր, որ Ա.Խանջեան վանեցի հասարացեալ համայնավար մըն էր. սակայն, միաժամանակ ալ՝ վանեցի անկործան արմարներով ու ազգային գօրեղ զիրակցութեան տէր հայ մը:

Որքան կարելի էր, Խանջեան այդ երկու հակադիր գաղափարախօսութիւններու համերաշխ ներդաշնակութեամբ մը վարեց ու առաջ տարաւ իր յոյժ պարսիստանաւորու պաշտօնը: Գործելակերպ մը, ազգային շահերու հետապնդման եղանակ մը, որ ուշ կամ կանուխ պիտի բախէր համայնավարութեան մայր երակին:

Աղասի Խանջեանի պարագային ընդհարումը աւելի կանուխ պիտի պարսիստան քան՝ ուշ:

1935թ-ին Խանջեան պարսիստան էր Խորհրդային Միութեան Լէնինի բարձրագոյն շքանշանով:

Ա.Խանջեան ոգիով ու սրտով կը փափաքէր իրականացնել Կոմիտաս Վարդապետի աճիւնին Հայաստան փոխադրումը:

Տակաւին մնալով Ա.Խանջեանին հետ, Միևս Չերազի աճիւնին Հայաստան փոխադրութեան հետ կապ ունեցող հետեւեալ դրուագը ներկայացնեն, գոր տիկ. Բիրսակն Չերազ պարսիստան էր. «Ես մի բան գիտեմ, որ մայրս Խանջեանի հետ շատ լաւ յարաբերութիւններ է ունեցել: Նոյնիսկ հանդիպել ենք երբ, որ Գիւմրու տրամադրիկ թատրոնը եկել էր Էստեղ (Երևան) հիւրախաղերի: Մենք էլ եկանք, որովհետև մայրս նաև աշխատել է Գիւմրիի թատրոնում որպէս հուշարար: Ես էլ մօրս հետ եկայ Երևան: (Չերազենք Գիւմրի կը բնակէին):

Բեմադրութեան օրը ռուսական թատրոնի եղտեղ, յատուկ, մայրս հանդիպեց Խանջեանին: Յատուկ նա էլ մօտեցաւ և մօրս հետ խօսեց: Կարծեմ էլի էդ թուերի մօտ էր: Յետոյ, մի մոռացէք որ, Աճեմեանների ընտանիքի հետ Խանջեանը մօտ է եղել. դրանք բոլորը վանեցիներ են: Աճեմեան Սկրտիչը եղել է

հօրս ամուսնութեան կնքահայրը: Էջմիածնում են ամուսնացել, և իմ կնքահայրը նա'ն»:

Այս րրուած ծաւօթութեամբ յարակ կը դառնայ թէ՛ ինչո՞ւ հարց չէ եղած Միևս Չերազի աճիւնին Հայաստան փոխադրութիւնն ու ըստ կարգին, իր հարազատներուն կողմէ կանոնաւոր կերպով թաղուիլը, այդ ալ իր բարերարութեամբ կառուցուած դպրոցին բակին մէջ:

Արշակ Չօպանեանին նամակով արտայայտուած տեղեկութիւնը, որ երրորդ տարբերակ կոչուած էի, կը շարունակուի և կը վերջանայ իրաւ ազգային, պարզ ու բարի մարդու ըղջանքով, որ կարծէք ծաւօթ չըլլալով համայնավար վարչական մեքենային, Երևանի ՀՕԿ-ի կեդրոնական վարչութեան նախագահէն կը խնդրէ, որ Կոմիտաս Վարդապետի դագաղը նախքան Երեւան հասնիլը Էջմիածին տարուի, միաբանութեան կողմէ ամբողջացուի թաղման կարգը ու ապա յանձնուի կառավարութեան:

Ահաւասիկ Չօպանեանի նամակին այս բաժինը. «Ասիկա (Կոմիտաս Վարդապետին մարմնին Հայաստան փոխադրութիւնը) ամենամեծ հաճոյքը պիտի պատճառէ արտասահմանի հայոց: Այստեղ մեր եկեղեցոյ մէջ թաղման հանդիսաւոր արարողութիւնը կատարուեցաւ արդէն անցեալ տարի, անկից ի վեր, մարմինը՝ գմբուտած՝ եկեղեցոյն նկուղին մէջ կը հանգչէր, կան դեռ՝ իր վերջնական հանգստավայրը գետեղուելէ առաջ՝ հուսկ աղօթքներ, որ պէտք է առնուին: Այսօր գրեցի ընկեր Արսէն Եսայեանին այդ մասին. խնդրեցի, որ կառավարութիւնը թոյլ տայ, որ դագաղը Էջմիածնի կայարանը վար իջեցուի (շոգեկառքէն), և Մայր Աթոռի միաբանութիւնը հոն պատուիրակութիւն մը դրկելով կատարէ այնտեղ հարկ եղած արարողութիւնը և կամ դագաղը փոխադրուի Էջմիածին, Մայր տաճարին մէջ կատարուի արարողութիւնը և յետոյ ինքն իսկ տանի դագաղը յանձնի կառավարութեան» (4.):

Ա.Խանջեան տրեղծուած այս ծանր կացութիւնը լուծելու համար, Վարդապետին աճիւնին Երևան թաղման ամբողջական պարսիստանաւորութիւնը կը յանձնէ «Հայաստանի Խորհրդային Երգահանների Միութեան»:

Խանջեան, որ ինչպէս տեսանք, մեծ ճիգ թափեց այս գործին յաջողութեանը համար, դժբախտաբար, ինք չկարողացաւ ներկայ ըլլալ անոր, որովհետև յանկարծ սրիպուած էր այդ օրերուն քաղաքէն քացակայի:

Եթէ երբեք քացակայութեան պարսիստանը խարագոյն հրահանգ մը չըլլար, շար վարսահաբար Խանջեան իր ժողովուրդին հետ պիտի մասնակցէր թաղումին:

Խաչիկ Բաղիկեանի յօդուածին մէջ այս մասին նշուածը, գոր սրորն կը մէջբերեն, ճիշդ և րրամաբանակալն է. «Միւս օրը Ալազան գնում է Կենտրոն ու իր համերկրացի Խանջեանին (երկուսն էլ ծնուել են Վանում) պատմում երեկուայ խայտառակ արարքի մասին: Խանջեանն անսահման յուզուել է ու Ալազանին ասել, որ կարևոր գործով քաղաքից քացակայելու է (գուցէ Բերիան էր կանչել) և խնդրում է, որ մեծ շուքով թաղեն պայծառ Կոմիտասին»:

Երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

Այսպիսով, Ախանջեանը չկարողացավ իր յարգանքը արտայայտել նման հազարատր հայորդիներու, որոնք երկու օր, իրենց գլուխը խոնարհած անցան հանճարի դագաղին առջևէն:

«Հայասրանի Խորհրդային Երգահաններին Միութիւն»-ը նախընթացը չունեցող, մեծաշուք կերպով կը կարարէ Կոմիտաս Վարդապետին յուղարկաւորութիւնը:

Պաթումի նաւահանգիստէն ներգաղթողները փոխադրող շոգեկաշքը սուրալով կը հասնի Երևան, (անցնելով Էջմիածնի կայարանը կը հասնի Երևանի այժմեան Սասունցի Դաւիթ կայարանը), ուր բազմահազար ժողովուրդը դիմաւորութեան եկած էր: Կոմիտաս Վարդապետին դագաղը կը յանձնուի «Խորհրդային Երգահաններու Միութեան» ներկայացուցիչներուն: Նախօրօք պատրաստուած ծրագրին համաձայն ծովածաւալ բազմութեամբ Վարդապետին դագաղը ուսամբարչ կը տանին Արովեան փողոցին սկիզբը գրկուող թիւ 1 շէնքը, որ այժմու «Առևճ Բարացանեան» կամ «Համերգային փոքր դահլիճ»-ն է (այդ օրուայ կուլտուրայի տան արահը):

Այստեղ մի քանի քարմնեղի և գագրելի դէպքեր պատահած են Չեկայի գործակալներու կողմէ: Այս մասին հեղինակատր վկայութիւններ և փաստեր չունենալով չեմ կրնար ըսի-ըսաները ներկայացնել հանրութեան: Իսկ, անոնք որոնք այս կէտրին մասին ունին վատերական վկայութիւններ կամ շօշափելի ապացոյցներ կ'արժէ արտայայտուիլ այլևս:

Ինչպէս նկատեցիք, ազնիւ բանասէրին՝ Արշակ Զօպանեանին բարի բաղձանքներն ու արտասահմանի հայերուն յայտնած փափաքն ու խնդրանքը դարձան «չայն բարբառոյ յանապարհ»:

Խորքին մէջ, հարցը այն չէ թէ՛ Կոմիտաս Վարդապետին դագաղը Ա.Էջմիածնի տարուեցաւ կամ ոչ: Այլ՝ ցաւալին ու վշտալին այն է, որ խեղճ Վարդապետին թաղման կարգը կհասար մնացած էր. զայն չաւարտած զինք հողին յանձնեցին:

Այո, համայնավար մտածողութեան համար այս երևոյթը անիմաստ ու անարժէք կը նկատուի, և վտարահարաւ ալ կարգ մը րգէտ կամ անգիրակ հայերու համար ևս տարբերութիւն չ'ընէր այս հարցը: Սակայն, հայ քրիստոնեային համար ննջեցեալի մը թաղման արարողութիւնը կհասար թողլով զայն հողին յանձնելը ցաւալի ու անընդունելի արարք է:

Եկեղեցակաւօրէն մեղք գործել է:

Այսօր, տասներկու տարի է, որ տապալած է համայնավարական վարչակարգը: Փափաքելի է և ցանկալի, որ անմահանուն Կոմիտաս Վարդապետի այս 140-ամեակին առթիւ, Էջմիածնայ միաբնակութիւնը, համազգային տարրողութեամբ, յարուկ ուրիշ արգնացութեամբ մը երթայ «Պանթէոն», կհասար մնացած Կոմիտաս Վարդապետի թաղման կարգին արարողութիւնը մեծվայելչութեամբ ամբողջացնէ և գերեզմանը կնքէ:

Հայ քրիստոնեային համար որպէս խղճի պարտականութիւն և հոգիի անդորրութիւն Կոմիտաս Վարդապետի թաղման արարողութեան ամբողջացումն ու գերեզմանին կնքումը բացարձակ անհրաժեշտութիւն է:

Կոմիտաս Վարդապետի դագաղը տեսութեան համար երկու օր մնալէ յետոյ կուլտուրայի տան արահը, մեծ պարկառուքով և շուքով կը տարուի «Պանթէոն», ուր համբաւատր դէմքեր, ինչպէս Մանուկ Արեղեան, Աւերիք Իսահակեան, Դերենիկ Դեմիրճեան, Հրաչեա Աճառեան, Փանոս Թերլեմեզեան և Վարդապետին սաներէն դամբանակալներ խօսելէ ետք, ինչպէս նաև մէջ ընդ մէջ Կոմիտասեան երգչախմբային գործեր կատարուելէ, որոնցմէ մին էր «Անչրե եկաւ շաղալէն»ը, յետոյ, լացող երկնքի անչրևային արցունքներուն տակ, մեծ երգչուհի՝ Հայկանուշ Դանիէլեան, Վարդապետին «Չիկարեա» երգին կատարումով հողին կը յանձնուի Վարդապետին յոգնաբեկ անիւնը:

Պատմութիւնը, սակայն, այսքանով չի վերջանար: Ծարունակներ:

Փարիզի ժողովուրդը անտեղեակ այս բոլոր իրադարձութիւններէն, մեծ ոգետրութեամբ իր երախտագիտական զգացումները կը յայտնէ ներգաղթի գործով զբաղողներուն, կազմակերպելով շքեղ ճաշկերոյթ մը:

Ահա թէ՛ ինչ կը գրէ ՀՕԿ-ի վարչութեան նախագահ, րօքք. Գալմեան.

«Զանի մը օր ետք, պաշտօնական ընդունելութիւն մը և ճաշկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ ֆրանսացի և օտար անչնաւորութիւններու՝ որոնք իրենց գործօն մասնակցութիւնը բերած էին ներգաղթի կազմակերպման աշխատանքներուն: Այս ընդունելութիւնը տեղի ունեցաւ իր ցանկութեանը վրայ, հայ



Տիար Սիւնա Չերազ (1852, Կ.Պոլիս-1929, Փարիզ)



Սկաւտապետ Վահան Չերազ (... - 1927, Երևան)

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010



Երեւանում է ապրում Վահան Չերազի դուստրը տիկին Բիբիան Անդրեասեան - Չերազը

Կարմիր Խաչի նախագահ Կորթ Պ.Բոլոլեանի բնակարանին մէջ, մեծավայելու շքեղութեամբ մը: Հրաւիրուած էին ֆրանսացի Արտաքին, Ներքին և Ֆինանսական նախարարները, Փարիզի Սով. դեսպանութեան պետը, Խորհրդային Հայաստանի ներգաղթի լիազօր ներկայացուցիչ Դանուշ Ծահվերտեան, Ազգերու դաշնակցութեան կից գործող Նանսէնեան կեդր. (կեդրոնական.-**խմբ.**) գրասենեակի նախագահը, հայ գաղթականաց կեդր. (կեդրոնական.-**խմբ.**) յանձնաժողովի նախագահը, ինչպէս նաև Հ.Բ.Ը.Միութեան կեդրոնական և ֆրանսայի ՀՕԿ-ի կեդրոնական վարչութեան ղեկավարները:

Այս ցանկը ուզեցի ղևել այսպէս ջոյց փառու համար կատարուած գործին փարողութիւնը:

Դանուշ Ծահվերտեան գործերը յաջողութեամբ աւարտած ըլլալով մեծ գոհունակութեամբ Յուլիսի վերջաւորութեան կը վերադառնայ Հայաստան:

Խօսքը կրկին փամ Կորթ. Գալմեանին. «Ընկեր Ծահվերտեանը Փարիզէն մեկնեցաւ Յուլիսի վերջերը: Անոր մեկնումէն շաբաթ մը վերջ հասած «Խորհրդ. Հայաստան» պաշտօնաթերթին մէջ յուզումով ու զարմանքով կարդացիք Ա.Խանջեանի «անձնապատկեր» անակնկալ ու փարօրինակ լուրը և մանաւանդ այդ լուրին ընկերացող իմաստ անվայել ու վարկաբեկիչ խորհրդածութիւնները՝ Ա.Խանջեանի նման անբասիր ու անձնագոհ Մարքսիստ-լենինիստ յեղափոխական փեսայի մը հասցէին: Արտակարգ նիստի մը հրաւիրեցի ՀՕԿ-ի կեդր. (կեդրոնական.-**խմբ.**) վարչութիւնը՝ խորհրդակցելու համար սրեղծուած այս ծանրակշիռ կացութեան մասին: Յէր խորհրդակցութեան՝ որոշեցիք հեռագիր մը փալ և լրացուցիչ փեղեկութիւններ ուզել ՀՕԿ-ի գլխ. (գլխաւոր.-**խմբ.**) վարչութենէն:

Մեր հեռագիրը և զայն հասարակող պաշտօնական նամակը անպատասխան մնացին»:

Ներգաղթէն յետոյ և Կոմիտաս Վարդապետի անիւնը թաղելէ ետք, շատ չանցած, Լ.Բերիս, Ա.Խանջեանին կրկին անգամ ժողովի համար Թի.Ֆիլիս կը կանչէ:

Խանջեան երբ 1936թ-ի, Յուլիս 4-ին (ըստ՝ ՀՄՀ հայրոր 5, էջ 13, Ա.Մնացականյանի հողվածի հուլիսի 9-ին) ժողովարեղին կը հասնի, Բերիս անոր թիկնապահին՝ Վանյային (Յովհաննէս) շէնքէն դուրս կը դրկէ. որմէ ետք արրճանակով Խանջեանին գլխուն կը կրակէ ու սենեակէն դուրս կ'ելլէ: Ա.Խանջեան փեղն ու փեղը կը մահանայ:

Այս էր եղած նողկալի դէպքը, որ սկիզբը պէտքական չեւտրումով որպէս «անձնապատկեր» յայտարարուեցաւ. սակայն շուրջով երևան ելաւ «սպաննուած» ըլլալու ճշմարտութիւնը:

Տօքթ. Գալմեան ծանօթագրութեամբ մը կ'ըսէ. թէն շատ անլի ու. «Հարկ պիտի ըլլար քառորդ դար սպասել՝ պաշտօնապէս իրագրել ըլլալու համար ճշմարտութեան: Արդարև, 1961թ-ին էր, որ Սովետա-

կան Միութեան Կենտրոնի առաջին քարտուղար Խրոյշչէվ, 22-րդ համագումարին մէջ կը յայտարարէր թէ Հայաստանի կոմկուսի Ա քարտուղար Ա.Խանջեան սպաննուած էր հակայեղափոխական և արհմարքու լուրես, վրացի Պերիայի շեռամբ»:

Գիշո այդ օրերուն կը փոխուէր նաև Երևանի ՀՕԿ-ի նախագահը:

«Նոր նախագահը՝ կ'ըսէ Գալմեան, ընկ. Մանուչարեան հագուադէպօրէն կը պատասխանէր մեր նամակներուն: Նոյնը կրնամ ըսել նաև ընկ. Տիգրան Չալէի համար, որ այդ օրերուն կը պահէր փակալին Գլխ. (Գլխաւոր.-**խմբ.**) վարչութեան քարտուղարի պաշտօնը: Իրմէ արացուած ամենավերջին նամակը կը կրէր 7 մարտ 1937թ-ուականը: Անկէ յետոյ բացարձակ լռութիւն: Բասնէկ փարի ետք, իբրև թորիսք հայրենիք այցելութեան միայն պիտի իմանայի թէ բանրի մէջ կացիկահար մեռցուած է (այսին 1938թ-ին) հայաստանց ճիւղ Պերիայի հայ գործակալներու շեռամբ»:

Դանուշ Ծահվերտեանին նամակագրութիւնն ալ արեւնէ մը վերջ կը դադրի: Վերջին գրած նամակը կը կրէ 8 փետր. 1937 թուականը:

Տօքթ. Գալմեան կ'ըսէ. «Դարձեալ 1958թ-ին միայն պիտի փեղեկանայի թէ Երևանի բանրին մէջ մեռած էր, չկրնալով ղեկավարելու և ենթակայ եղած իոշտանգումներուն»:

Գալմեանի այս փեղեկութիւնը թերի ու պակասաւոր է, ինչպէս նաև անճիշդ:

Կոմիտաս Վարդապետի մարմինը առանց պէտքական վերին արտօնութեան Փարիզէն Հայաստան դրկուելուն համար, Դանուշ Ծահվերտեանի սրացած պարիժին մասին անլի սարոյց ու ամբողջական փեղեկութիւնը կը գրկենք Գալի.Ֆորնիոյ «Նոր Կեանք»-ի փետրուար 22, 2007թ-ին մէջ, Ա.Կանիէլեանի ներկայացուցած «Կոմիտասի Երևան թաղումին մասին փաստաթուղթ մը» անուն յողուածի վերջաւորութեան, այսպէս.

«Չնայած Կոմիտասի յողարկաւորութիւնը թոյլարրուեցաւ, վերոնշեալ հեռագրի (կ'անկարկուի Խանջեանի այն հեռագրին գոր դրկած էր Լ.Բերիս-յին) պարճառով 1937թ-ին Դանուշ Ծահվերտեանի ընկրանիքը և եղբայրները շերբակալուեցին և զնդակահարուեցին»:

Հայ երաժշտութեան Արարատին, հանճարեղ Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-ամեակին աթիւ, յուսամ այս համեստ ուսումնասիրութեամբս Վարդապետին աճիւնը հայրենի հողին մէջ թաղելու համար մայիս 9, 1936-ին Փարիզէն Հայաստան փոխադրութեան և թաղման առեղծուածին վրայ կարողացայ լոյսի նշոյլ մը ձգելով յստակացնել և ճշմարտութեան մօտեցնելով հաստատօրէն ըսել թէ՝ Կոմիտաս Վարդապետին դազաղը երկարկանի չէ եղած, և զայն առանց բարձրագոյն արտօնութեան Հայաստան դրկողը՝ Դանուշ Ծահվերտեան անպատիժ չէ մնացած:

Ծ Ա Ն Օ Թ Ա Վ Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

- 1.Կոմիտաս, Յիցիլիա Բրուտեան, Հայաստանի հրատարակչութիւն, Երևան, 1969:
2.Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնդ 409, ցուցակ 1:
3.Հայաստանի ազգային արխիւ. ֆոնդ 1, ցուցակ 16. գործ 71, թթ. 38-39:
4.Հայաստանի ազգային արխիւ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 5495:

Երաժշտական ԴԱԳՍԱՍԱՆ 2(37)2010

**ՋԱՔԱՐ ԱՐՍԵՆԻ
ՔԵՇԻՇԵԱՆ**

*Գիրիժոր, շվիսահար,
Քեյրուքի «Կարկաչ» և Շուշիի «Վարանդա»
երգչախմբերի հիմնադիր, գեղարվեստական
ղեկավար*

Քեյրուք, «Ազդակ», մարտի 3, 2010թ.

Երկար փարիկներու ասանդութեան համաշայն, ամէն ամառ դեպի Շուշի ճամբուս վրայ անպայմանօրէն կ'այցելէի իրեն. կը գեկուցէի փարուսն մը սրեղծագործական թե կարարողական կեանքիս մասին. կը լսէի խորհուրդները. կը դիտէի գոհունակ ժպիտը. կը վայելէի համով ու զուարթ կարակները եւ կը բաժնուէի յաջորդ փարիկ կրկին հանդիպելու փրամադրութեամբ:

Այս փարի աշդպէս չեղաւ սակայն: Իր փոխառէն հեռաշայնին թոռնիկը պարասիսանելով՝ գուժեց

արուեստի նկարմամբ ոչ միայն մարդոց, այլեւ լրատուական միջոցներուն մօտը հեղաքրքրութեան անկումին պարմառով...

Առաջին անգամ շուրիկ նուագը լսած եմ Կիպրոսի հայկական ռաբիոժամէն: «Կարաիկ», «Հովիտի կանչ», «Սոխակներ», հայկական ժողովրդական երգերու եւ պարեղանակներու շարքեր յաճախ կը շայնասփռուէին անկե: Առաջին հեռակայ ծանօթութիւնս էր շուրիկն հետ:

Յետոյ, պարանկերութեանս փարիկներուն, երբ ընդանօր առաջին անգամ ըլլալով Հայաստան այցելած էիւր, համերգի մը ընթացքին մարդ մը այնքան կախարդական վարպետութեամբ նուագեց, որ յախշրակութեամբ լսելէ ետք զայն, փափաքեցայ նուագարանը ունենալ ու նուագել: Աարտիկն քուլիսներու ետին ծանօթանալով վարպետին՝ ինդրեցիկը շուրի մը ունենալ: Միտով օժտեց զիս շուրիով մը եւ քանի մը ցուցմունք ալ տուաւ:

Տարիներ անցան:

Ընդունուեցայ Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի ժողովրդական երաժշտութեան բաժնի իբրեւ ուսանող: Ամպիոնի վարիչ,

Ականաւոր շուրիահար ԻԼԻԱ ՄԻՆԱՍԵԱՆԻՆ խօսք յիշատակի եւ երախտիքի

մահը Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր արուեստագէտ, Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի, Երեւանի հայկական մանկավարժական համալսարանի եւ քանի մը երաժշտական դպրոցներու դասախօս, ութսուներկու երկիրներու մեծ հայկական երաժշտութիւնը շուրիի իր մեծ վարպետութեամբ փարածած փրոֆեսոր Իլիա Մինասեանի մահը, որուն, ինչպէս ցատով անդրադարձայ, անտեղեակ մնացած էր հայրենի երաժշտական աշխարհը, արժէքներու փակնուփայտութեան այս ժամանակահատուածին մէջ իրաւ

նշանաւոր երաժշտական Խաչատուր Աւետիսեան Իլիա Մինասեանը նշանակեց իբրեւ մասնագիտութեանս՝ շուրիի ուսուցիչ: Տուաւ հեռաշայնին թիւր: Հեռաշայնեցի եւ յաջորդ օրուայ համար ժամադրուեցանք:

Դասարանին առջեւ նոր երագներով ու ոգևորութեամբ սրտապրտի կը սպասէի ուսուցչիս: Չարմանքս եւ ուրախութիւնս մեծ եղաւ, երբ դասարանին մօտեցաւ այն մարդը, որ քանի մը փարի առաջ իր նուագով գրաւած էր հոգիս ու սիրով հայթայթած էր շուրի մը, որ ճակատագրական եղաւ ինձի համար, եւ

Վիլյամ Մարոյան,
Իլյա Մինասյան



Ս Փ Յ Ո Ւ Ն Ք - Ք Ե Յ Ր Ո Ւ Թ

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

որ, ինչպես յետոյ պարզեցի. Կիպրոսի ռաբիոժամէն հաղորդուող շուրի երաժշտութեան հրաշալի կատարողն էր նաև...

Այնուհետև, հիւնգ փարիներու վրայ երկարող դասապահերու շրջայ մը կազմեցինք միասին՝ լի մասնագիտական գիտելիքներով, խորհուրդներով եւ հայ ժողովրդական երաժշտութեան շուրջ գրոյցներով, որոնք կը համեմուէին արուեստագէտի իր քննական կեանքէն դրուագներով ու այլ երաժիշկներու հետ փարքեր երկիրներու մէջ իր ծառայած համերգային բազմահարուստ փորձառութիւններուն փոխանցումով, որոնք հետաքրքրական եւ ուսանելի էին:

Բայց մանաւանդ, Հայաստանի արևմտական, քաղաքական, կենցաղային դժուար փարիներուն, երբ ցուրտի եւ փոխադրամիջոցի բացակայութեան պայմաններով երկար ամիսներ երաժշտանցը կը փակէր իր դռները, ան, ի շարս քանի մը այլ դասախօսներու, անշահախնդիր կերպով իր սեփական յարկէն ներս կը հիւրընկալէր իր ուսանողները, որպէսզի անոնք գերծ չմնան մասնագիտական յարաճուն վերելք եւ դոյզն իսկ չափով չըրուծեն:

Ուրեմն, յափտեմութեան անցած է հայկական երաժշտութեան կատարողական արուեստի յայտնի եւ սիրուած երախարարներէն մէկը՝ իր երբիս ձգելով նկատարելի վաստակ մը եւ ժառանգութիւն մը:

Քանի մը փարիներ առաջ համերգի մը աւարտին փարեց մարդ մը շնորհատրելով զիս՝ հարցուց.
- Ժամանակիկի Թաթուլ Ալթունեանի երգի - պարի համոյթին հետ Եդիս Միւսսեան (Եդիսն Բիւսային հայերէն փարքերակն է) անունով շուրիսար մը եկած էր Լիբանան, արդեօք ծանօթ ես: Կ'ապրի՞ դեռ:

- Այո՛, կ'ապրի՛, պարասիսանեցի հպարտանքով, ուսուցիչս է:

Հիմա այ եթէ նոյն մարդը կամ ուրիշ մը նոյն հարցումը հարցնէ ինծի՝ պիտի պարասիսանեմ նոյն հպարտանքով.

- Այո՛, կ'ապրի՛ դեռ: Ան կ'ապրի բազմահարիւր իր ուսանողներուն, հայրենիքի թէ բազմաթիւ երկիրներու բազմահազար իր երկրպագուներուն, ժամանակակից իր գործընկերներուն յիշողութեան եւ հայրենի չայնասիտի «Ոսկէ ֆոնի»-ի մէջ պահպանուող հրաշալի իր չայնագրութիւններուն մէջ:

(տես կազմին)

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

... Ռաֆիկենց տուն (այն ժամանակ՝ գեղարուեստի ֆոնտի տնօրէն Ռաֆայէլ Մանուկեան) երեկոյեան մի ուշ ժամի հրաւիրուած էին բանաստեղծ Վահագն Դաւթեանը, լրագրող Ղարիբ Գայրապետեանը, նկարիչ Գեորգի Սիրաւեանը, բանաստեղծ Ռազմիկ Դաւոյեանը:

Գայրապետեան ճոխ սեղան էր, բոլորի տրամադրութիւնները՝ լաւ: Թամաղայի տեղում Ուիլիըմ Սարոյեան էր, որ անընդհատ բեղերն էր ուղղում եւ ամէն ինչի վրայ գարմացած հայեացք գցում.

- Մեր քոնեակը հոյակապ է...
- Մեր ձուկը անմման է...
- Մեր կանաչին համեղ է...
- Ամենալաւը մեր ժողովուրդն է, շատ կը սիրեմ...

Մեր մտաւորականները աշխոյժ գրոյցի էին բռնուել Սարոյեանի հետ, խմուն էին նրա կենացը, բարձր գնահա-

տուն նրա գրական տաղանդը: Գեորգի Սիրաւեանը, որ նստած էր կողքիս, անընդհատ նկարում էր Սարոյեանին: Յետոյ իր գծանկարը նուիրեց Վարպետին ու գովասանքներ ստացաւ: Ամենաաշխոյժը Վահագն Դաւթեանն էր, որ միջամտում էր բոլոր խօսակցութիւններին, իր կարծիքը բարձրաձայնում եւ մեր պատմութեան, եւ արուեստի, եւ գրականութեան երեւոյթների մասին: Ղարիբ Գայրապետեանը պատրաստուում էր յօդուած գրել Սարոյեանի մասին եւ անընդհատ հետաքրքրուում էր նրա կեանքի մանրամասներով, նրա ստեղծած հերոսների ճակատագրով: Ռաֆիկը պատմում էր, թէ ինչպէս է կողքել ոտքը եւ ինչպէս է վարժուել յենակներին:

Եւ այս ամէնը անբռնազբօս, կատակային մթնոլորտում:

Երբ բաւական կենացներ էինք խմել, Սարոյեանը դիմեց ինձ (ես նստած էի նրա կողքին).

- Ինչի՞ չես խօսում, մանչս, ասելու բան չունե՞ս:
- Ես նուագում եմ...
- Էի, նուագիր, տեսնե՞ք...

Ես հանեցի շուին եւ մօտեցրի շուրթերիս: Սենեակը լցուեց ժողովրդական մեղեդիներով: Սկզբում «Ծիրանի ծառ»-ն էր:

- Կոմիտասը երգի Աստուածն է: Տես, ո՞նց է գրել «Ծիրանի ծառ»-ը... ինչքան վիշտ կայ մէջը, ինչքան ափսոսանք:

Յետոյ հնչեց «Շողեր ջան»-ը, «Սոխակը», «Քելէ, ցուլեր»-ը:

Սարոյեանը քիչ կախել էր գլուխը, աչքերը կիսափակ լուծ էր: Ի՞նչ էր կատարում մեծ գրողի հոգում, ո՞վ գիտէ... Բոլորը լուռ էին, չցանկանալով խանգարել նրա մտորումները:

- Խմենք մեր ժողովրդի կենացը, որ այսպիսի երաժշտութիւն ունի, - ասաց Սարոյեանը, - ինչքան էլ որ տխուր է, բայց շատ կեանք կայ մէջը: Մենք կեանքի ժողովուրդ ենք:

Յետոյ յիշեց մօրը Թագուհի Սարոյեանին.

- Թագուհին պալատում նստողը չէր, Թագուհին կենացում ապրողն է, որ իրեն թագուհու մման էր պահում:

Ուրախ խնձոյքը շարունակուում էր: Սարոյեանը կատակում էր, խօսում, պատասխանում ներկաների հարցերին: Ամբողջ երեկոյ, սակայն, Սարոյեանին առանձնապէս գերել էր մեր «Տըլէ եաման»-ը:

- Ազգի պատմութիւն է այս երգը, իմ հօր ու մօր պատմութիւնը... Գլա տես ինչ է ասում՝ «Տըլէ եաման, մեր տուն, ձեր տուն»... մեր մասին է:

Երեկոյի ընթացքում մի քանի անգամ խնդրեց՝ կրկնեմ «Տըլէ եաման»-ը:

- Շատ աղուոր է, շատ աղուոր, - ասաց, - դուն էլ «Տըլէ եամանի» ասպետ ես:

Շատ ուշ էր, որ մենք թողեցինք խանցեան փողոցի վրայ գտնուող Ռաֆիկի հիւրընկալ օճախը: Ես ամբողջ երեկոյի ընթացքում շարունակում էի նուագել, եւ Վարպետը յատկապէս առանձնացրեց Դիմիկուի «Խոռո ստակկատո» գործը:

Արդէն ոտքի վրայ էինք, հրաժեշտ էինք տալիս տանտերերին:

- Մանչս, մի հատ էլ «Ծիրանի ծառ»-ը, - ասաց Սարոյեանը:

Գնց միջանցքում եւ նորից հնչեցրեց անմման Կոմիտասի մեղեդին: Սարոյեանը խոնաւացած աչքերով բացեց դուռը.

- Ես իմ ծիրանի ծառը տարայ...

Եւ դանդաղ իջաւ աստիճաններով ներքեւ: Ես նրան էի նուիրել իմ ձեռքի ծիրանի փողը, իմ փոքրիկ շուին...

ԻԼԻԱ ՄԻՆԱՍԵԱՆ

Հայաստանի վաստակաւոր արտիստ, միջազգային մրցոյթների դափնեկիր, փրոֆեսոր «Հայաստանի Գանրապետութիւն», 26.07.2008

երաժշտական շԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

**ՎԵՐԺԻՆԵ ԳԱՌՆԻԿԻ
ՍՎԱԶԼՅԱՆ**

**Բանասիրական գիտությունների դոկտոր,
Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող**

2008 թ. Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի (UCLA) պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանի կողմից հրավիրված էի մասնակցելու «Մուսս Լեռ, Քեսապ, Դյորթ Յոլ» միջազգային գիտաժողովին: Ինչպես նախորդ այցելություններին ժամանակ, այս անգամ ևս շարունակեցի գրի առնել ժողովրդական բանահյուսության փարսերույթ նյութեր, որոնք ամփոփվելու են «Ամերիկահայոց բա-

ռնչացումը: Այդ ռազմավարությունն ամբողջությամբ գործադրվեց 1915-1923 թթ. ընթացքում:

Բնաջնջման այդ արյունարբու, անմարդկային և կանխամրաված ծրագիրն իրագործվեց իշխող երկիրորքերի, նրանց կամակալարների և քրդերի կողմից, որոնց հրահրել էին Թուրքիայի հայերի դեմ:

Կիրակի երեկո էր: Ընդհանրապես անդամներից շարերը և ես եկեղեցուց փրկվեցին վերադարձել: Ծառում էինք և գրուցում միմյանց հետ, երբ մեր դարպասն ուժգին բախեցին: Ես գնացի դարպասը բացելու: Հանկարծ թուրք զինվորներն ինչ մի կողմ հրեցին և ներխուժեցին մեր փրկում: Նրանք ասացին մեզ. «Դուք բոլորը պարտավոր եք հենց հիմա մեկնել Սվազից: Ձեզ հետ վերցրե՛ք ամենամանրամասն իրերն ու ունեցվածքը: Ձեզ վերաբնակեցնելու ենք մի այլ շրջանում, որպեսզի ապահովված լինեք

ՎԱՎԵՐՈՒՄ ԳՐՈՒԹՅՈՒՆ

**« Հ Ա Յ Կ Ա Կ Ա Կ Ն Օ Ս Կ Ա Ր »
ՉՈՒԳԱՍԶՅԱՆ ԱՆՍԱՄԲԼԻՆ**

նավոր ավանդությունը» իմ ժողովածուի մեջ:

Այս անգամ ես հնարավորություն ունեցա հյուրընկալվել Նյու-Յորքի Մերթոնյուիլիքեն օպերայի աշխարհահռչակ երգչուհի Լիլի Չուգասյանի փոխմիջ Ֆրեզկոյում բնակվող և սրեղծագործող հայկական ժողովրդական գործիքների անսամբլի ղեկավար Տեր և Տիլին Չոն և Բարբարա Չուգասյանների օջախում: Նրանք ինչ ծանոթացրեցին փեղի հայաշունչ փեսարժան վայրերին և հայ համայնքի ուշագրավ ներկայացուցիչների հետ:

Չոն և Բարբարա Չուգասյաններն իրենց կյանքը նվիրել են հայկական ժողովրդական հնագույն երգերի հայտնաբերմանն ու փարսածանրը՝ նպարակ ունենալով օրաքաղցող նոր սերունդներին հայկական երգի միջոցով հայ պահել:

Գաղափար փայլու համար Չուգասյան ընդհանրապես արմատների մասին՝ բարգմանաբար մեջբերենք մի հարված Չոնի մոր՝ Արշալույս Թինգուրյան-Չուգասյանի (ծնված 1906թ., Մերասրիս) անգլերենով գրած հուշից, որը խանդաղաբար քննարկում էր ծնողասեր որդին և այն փրամադրեց ինչ, որպեսզի ամբողջական փեսքով գեղեցիկ առաջիկայում փարքեր լեզուներով լույս փեսնող «Հայոց ցեղասպանություն. Ականաբես վերապրողների վկայություններ» սրվար ժողովածուիս մեջ.

«...Երբ Օսմանյան Թուրքիայի վերջին սուլթանը գահընկեց եղավ, իշխանության գլուխ անցավ վնասարար, անհանդուրժող և մոլեռանդ մահմեդական երիտթուրքերի հեղափոխական կուսակցությունը, որը ժողով գումարեց Հունաստանի Սալոնիկ քաղաքում: Այնպես որ նրանք ծրագրեցին Թուրքիայում ապրող բոլոր հայերի ու քրիստոնյաների ամբողջական և համակարգված փեղահանումն ու

ներխուժող ռուսների հարչակումներից»:

Տևից մեկնելու ժամանակ, թուրքերն իրենց հետ փարան հորս, հորեղբորս և ընդհանրապես բոլոր չափահաս փրամարդկանց: Նրանց առանձին շարքով կանգնեցրին փողոցում, որպեսզի Սվազից դուրս գալու համար արդեն շարք էին կանգնել նաև այլ հայ փրամարդիկ: Ծաբաթներ անց մենք փեղեկացանք, որ թուրք զինվորներն ու քրդերը Սվազի բոլոր հայ փրամարդկանց քայելով դուրս էին բերել քաղաքի ծայրամաս և բոլորին սպանել:

Մնացել էինք մենք. մայրս՝ Մարիամը և նրա յոթ զավակները, ներառյալ ես, հորաքույրներս՝ Էմմա և Միրանուշ Չուգասյանները ու վերջինիս դուստրը՝ Վերգինեն և մորեղբայրս՝ Հովսեփ Չուգասյանը:

Տանը մնացածներս, ինչքան որ կարող էինք, հավաքեցինք մեր ամենամանրամասն իրերն ու զարդեղենները և շալակեցինք մեր ուսերի կամ մեջքի վրա: Մենք կողպեցինք դարպասը, և կանայք սկսեցին լաց լինել, երբ ընդմիջար հեռանում էինք մեր փրկից: Մենք շարք կանգնեցինք փողոցում մեր քաղամասի մյուս խեղճ կանանց, աղջիկների ու մարդաշ փրկների հետ միասին: Չինվորները սկսեցին մեզ քայելով դուրս բերել Սվազից: Քայլեցինք դեպի հարավ՝ դեպի Դեր Չորի անապարը: Նախքան անապար հասնելը, վայրագ ու դիվային թուրք զինվորները, որոնք ուղեկցում էին մեզ, բռնի հախչարակեցին մեր ամբողջ ունեցվածքը՝ թողնելով միայն մեր հագի շորերով: Աքսորի ճանապարհին զինվորները մեզ հայիոյում էին, հրում ու ուրքերով հարվածում: Մեզ նախապում էին ասելով՝ «խոզեր» և «գյավորներ»: Նրանց ամենին չէր անհանգստացնում, թե որքան ենք մենք փրանջվում: Այնքան փրաք էր, և ես այնքան ծարավ էի: Նրանք

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

Ժ ա մ ա ն ա կ , մ ա ր դ ի կ , ճ ա կ ա տ ա գ ր ե ր . . .

մեզ անընդհատ առաջ էին բռնում: Մենք քայլում էինք ու քայլում ... ուրքերս այրվում էին և ամբողջ մարմինս արևից վառված էր: Աղջիկներ ու տղաներ, տարիկներ ու պապիկներ, մայրեր, մորաքույրեր ու քեռիներ մահանում էին անապատում ծարավից ու սովից, արևահարությունից և այն անմարդկային վերաբերմունքից, որին ենթարկվում էինք բռնի տեղահանության ժամանակ: Դեր Չորի անապատով քայլում էինք անդադար: Իմ եղբայրներն ու քույրերը, որոնք ինչնից փոքր էին, չէին կարող տոկալ նման չարչարանքին: Նրանց մարմինները չափազանց փոքր էին այդ տեսիլի տառապանքը տանելու համար: Մայրիկն անվերջ աղերսում էր, որ զինվորները ջուր տան իր երեխաներին, բայց անհոգի թուրք զինվորները արհամարհում էին նրա խնդրանքը: Նրանք ծաղրում էին նրան և զազարելի թուրքերեն հայտնաբերում էին նրան «գյալու՛ր»: Այսպիսով, մեկ առ մեկ, իմ եղբայրներից ու քույրերից հիկզը մահացան ծարավից, սովից և արևահարությունից: Ինչ համար այնքան ցավալի էր ակնհայտ լինել այդ ողբերգական իրադարձություններին: Ես ինչ այնքան անզոր ու տխուր էի զգում: Թուլացած ու վշտաբեկ մայրիկս սրիպված էր իր շեռքերով թաղել իր հիկզ մայրդաշ զավակներին անապատի ավազների մեջ: Թուրք զինվորները և քրդերն առաջ էին շարժվում առանց փոքր ինչ խոճահարություն: Հաճախ մենք սրիպված էինք մեռածներին թողնել ճամփեզրին ու առաջ շարժվել: Չինվորները մեզ հետ վարվում էին ինչպես կենդանիների հետ կվարվեին և նույնիսկ՝ ավելի վատ: Չինվորները շարքերից առանձնացրեցին մեր կին ազգակիցներից, երիտասարդ պարանիներից և աղջիկներից մի քանիսին: Գիշերը թուրքերն ու քրդերը նրանց բռնաբարեցին այնպիսի վայրագությամբ, որ նրանցից շարքերը մահացան, իսկ ողջ մնացած աղջիկներին թողեցին ճամփեզրին մահամերձ վիճակում: Եվ դա կրկնվում էր նորից ու նորից: Ես չեմ կարող նկարագրել իմ գերդասարանի մյուս կանանց դժբախտ և տեսիլի վիճակը, որոնք

մեզ հետ միասին անցան Դեր Չորի տառապալից անապատի: Նրանցից շարքերին ես այլևս չտեսա: Քրդերից ոմանք իրենց բնակավայրերն ու տները տարան նաև հայ կանանց և երիտասարդ տղաներին: Մենք նրանց նույնպես այլևս չտեսանք: Մեր երթի ընթացքում ես տեսա, թե ինչպես թուրք զինվորները կտրում էին հայերի գլուխները, որպես կրոնական հալածանք կամ՝ պարզապես որպես ժամանց: Չիավոր թուրք զինվորներից ոմանք թքում էին մեր վրա կամ սրերով ու հրացաններով սպանում էին մեզից որևէ մեկին՝ ըստ ցանկության: Երբեմն մի ամբողջ խումբ հայերի շարքից հեռացնում էին, տանում, այսպես՝ անզորներն սպանում մեր աչքերի առաջ: Ակնհայտ էր եղել անբարոյական ու չարամիտ թուրք զինվորների ու քրդերի կողմից Դեր Չորի անապատ շարժվող բոլոր հայերի նկատմամբ իրագործվող բազում այլ դաժան ու զազանաբարտ արարքների և անիրավացի պարիթների, որոնք այնքան ցավալի էին ու անթիվ, որ անհնար է բոլորը հիշատակել:

Մեկ այլ միջոց, որը կիրառվում էր թուրք զինվորների կողմից մեզ ավելի դժբախտացնելու համար դա այն էր, որ Դեր Չորի անապատում մի քանի օր մնալուց հետո մեզ՝ վերապրողներին, բաժանեցին մեր հարազատներից: Ինչ հեռացրին իմ մայրիկից և կանգնեցրին մեկ այլ խումբ հայ արքայականների շարքում: Աղերսեցի թուրք զինվորներին, որ ինչ չբաժանեն իմ մորից, սակայն իմ սրտամտիկ աղաչանքները հաշվի չառան: Եղբորս՝ Հմայակին, ես բաժանեցին ինչանից ու մեր մորից: Մեր մյուս ազգականներին, մորաքրոջս՝ Էլմաս Չուգասզյանին, նրա դստեր գարմուռուն՝ Վերգինեին, իմ քեռի՝ Հովսեփին և մյուս մորաքրոջս՝ Սիրանուշին, կանգնեցրեցին առանձին շարքերում: Բոլորի ընտանիքները նման չեղով բաժան-բաժան արեցին: Այժմ նույնիսկ իրար կողքի լինելու սիրտիսը չունեմ: Դեռ ողջ էինք, բայց այնքան մեկնակ, վախեցած ու դժբախտ...

Չեմ կարող ասել, թե ինչ և մյուս հայ վերապրողների համար քանի օր ու գիշեր տևեց Դեր Չորի



Մարիակ Չուգասզյան



Արշալույս Թինգորյան -
Չուգասզյան

փառավազների վրայով քայլելը: Դա հավիտենականություն էր քվում: Վերջնական հասանք Սիրիայի սահմանը և այնպեղից գնացիկը Հալեպ: Մենք՝ վերապրողներս, չէինք կարող ավարտին հասցնել մեր փառապալից ճանապարհորդությունն ականապարտում, եթե Ասրծո առաջնորդող շեռքը չլիներ, որը մեզ ուղարկեց նաև «Մերձավոր Արևելքի Նպաստամատուցի» բարեսիրտ աշխատակիցներին: Դա մի ամերիկյան բարեգործական կազմակերպություն էր, որն օգնում էր 1915թ. Հայոց ցեղասպանությունից փրկված հայ արքայազներին: «Մերձավոր Արևելքի Նպաստամատուցի» օրհնված աշխատակիցները վերցրեցին ինչ ու անապարտից դուրս եկող մյուս հայերին և փարան իրենց վրանները: Մեզ փվեցին ջուր, ուրելիք և հանգափանալու փեղ: Մենք այնքա՛ն, այնքա՛ն երախարապարտ էինք նրանց: Միևն աշծմ էլ զարմացած եմ, թե ինչպես փանյակ հագարավոր մյուս դծբախար հայերի նման ես ևս չմահացա անապարտում:

Հալեպում ինչ փեղավորեցին որքանոցում: Բավական հուզված վիճակում էի: Հանախակի ուծեղ և ահասարսուռ մոչավանջներ էի ունենում՝ հիշելով այն փառապալներն ու չարչարանները, որոնց միջով անցել էինք մեր փարագրություն օրերին: Փա՛ռք էի փալիս Ասրծուն ինչ ուծ ու փոկուություն փալու, թուրքերի այդ զագանաբարտ արարքներից փրկվելու ու միևն Սիրիա հասնելու համար:

Ամիսներ անց, մի օր մի հարուստ սիրիացի արաբ եկավ մեր որքանոց և մեր փուօրենի հեպ համաշայնվեց ինչ ու մի քանի ուրիշ հայ փղաներ աղջիկներ գնելու մասին: Մենք պեպք է իր փանն աշխարեիկը որպես ծառայողներ: Նա արդար էր վարվում բոլոր երեխաների հեպ և ոչ մեկիս չէր վիճարավորում կամ չարաշահում: Մակայն ևս բոլորիցս պահանջում էր եռանդուն աշխատանք: Ես նորից ու նորից փառք էի փալիս Ասրծուն, որ վերջապես ունեի մի մաքուր անկողին և հանապագօրյա ուրելիք: Տարիներ շարունակ ես աշխարեցի այդ ընրանիքում որպես ծառայող: Իմ պարտականություններից մեկն էր նաև գնալ մուրակա ջրհորը և ջուր լցնել մի մեծ կավե սափորի մեջ ու բերել փուն: Մի օր, երբ ջուր էի քաշում ջրհորից փեսա մի ծեր, հոգնափանջ կնոջ, որը պարառուրված ու զգզված շորեր էր հագել և հանգում էր ջրհորի մուր: Նա կապել էր մի պարառած գլխաշոր, որը ծածկում էր նրա գուրին ու դեմքի մի մասը: Ըստ արաբ աղջիկների սովորության, իմ դեմքը ծածկված էր մի հաստ բոլով, որի վրայից միայն իմ աչքերն էին երևում: Երբ ես կռացա ջուր քաշելու համար, ուղիղ նայեցի այդ խեղճ, հոգնաբեկ ճանապարհորդի մասամբ ծածկված դեմքին. նրա դեմքն ինչ ծանոթ չքվաց: Չգիտեի, թե նա ով է: Հաջորդ օրը ես նորից փեսա նրան նույն ջրհորի մուր: Երրորդ օրը նորից գնացի ջուր բերելու: Երբ ես կռացա ջուր քաշելու, այդ ծեր կինը դողդոցուն շայնով ինչ ասաց. «Արշալու՛յս, այդ դու՞ ես»: Կուծը շեռքիցս ընկավ: Ամբողջ մարմնովս գնցվեցի: Ո՞վ էր այդ կինը, որ գիտեր իմ անունը: Ապշած հայացքով նայեցի նրա դեմքին: Չայնը ծա-

նոթ էր, քայց ոչ իր դեմքը: Պասանչվեցի: Ծեր կինը նորից ասաց. «Արշալու՛յս, այդ դու՞ ես, աղջի՛կս»: Դա իմ մա՛լրն էր: Նրա գեղեցիկ դեմքը խիստ փոկվել էր: Տարիների գրկանքներից ու փառապալներներից դեմքի մաշկը կոշտացել էր, այնքան հյուծված էր ու նիհարած: Այդ պահին պարաախանեցի. «Մայրի՛կ, այդ դու՞ ես: Չե՛մ հավարում, որ դու ես»: Մենք իրար մուրեցանք շարապ ու փարվեցիկը իրար՝ լաց լիկելով, համբուրելով և հեկեկալով գրկախառն: Չէի կարող նույնիսկ երագել, որ մայրս ողջ էր ու ինչ գրկում էր:

Ես մորս՝ Մարիամին, ասացի. - Ինչպե՞ս իմացար, որ այդ ես եմ:

Նա պարաախանեց. - Երբ ես նայեցի քո աչքերին, ինչ որ քան զգացի..., քայց՝ չգիտեմ ինչ: Ես պեպք է իմանայի, թե դու ո՞վ ես:

Նորից գոհություն փվեցի Ասրծուն, որ իմ սիրելի մայրը փրկվել էր մահից և նորից իմ կողքին էր: Դա մի անհավարալի հրա՛շք էր մեր երկուսի համար: Բայց մայրիկն այնքան ծեր էր երևում, հոգնած ու հիվանդ: Հեպագայում ես հասկացա, որ մայրիկիս հյուծված փեսքը հեպեանք էր 1915 թվականից ի վեր իր ապրած թախառական կյանքի, կրած ցավերի ու փառապալներին: Նա փարել էր անասելի փորշություններ՝ Սվազից բռնի փեղահանվելուց հեպո: Նա ոչ միայն փրկվել էր մահվան ճիրաններից, այլև փարիկներ շարունակ թախառել էր Սիրիայի անապարներում և քաղաքներում անընդհար փնրելով իմ եղբորը՝ Հմայակին, քեռի Հովսեփին, ընրանիքի մյուս անդամներին և ինչ:

Մորս հարցրի, թե ինչպես էր փեղեկացել իմ ողջ լիկելու մասին: Նա պարամեց, որ Սվազի մեր հարեաններից մեկն ինչ փեսել էր մյուս հայ երեխաների հեպ Դեր Չորի անապարից ողջ դուրս գալիս: Մակայն հարեանը չգիտեր իմ գնացած ուղղությունը և նույնիսկ՝ թե ես Սիրիայում էի, թե՛ ոչ: Բայց, քանի որ ևս գիտեր իմ ողջ լիկելու մասին, շարունակել էր իր որոնումներն ինչ ու ընրանիքի մյուս անդամներին գրկելու նպարակով: Մայրս ասաց, որ քագմիցս գնացել էր «Կարմիր խաչի» գրասենյակ փեսնելու, թե մեր անունները կա՞ն վերապրողներից ցուցակում: Դծբախարաբար մեր անունները չկային: Միևն մայրս հասել էր Հալեպի որքանոց, ես արդեն գնացել էի աշխարելու իմ սիրիացի փիրոջ մուր:

Մայրս ինչ ասաց. «Արշալու՛յս, ես որոշել էի միևն իմ կյանքի վերջը քեզ փնրել, եթե նույնիսկ այդ որոնումների ճանապարհին ես մեռնեի»: Մայրիկիս այդ իմաստալից խոսքերն ազդեցին ինչ վրա միևն հոգուս խորքը: Ես այնքան հուզված էի լսելով նրա սիրո ու նվիրվածության մասին: Նա նույնպես գոհություն հայրնեց Ասրծուն ինչ ողջ ու առողջ գրկելու համար: Դա մեր երկուսի համար էլ ամենահուզիչ, երջանիկ և անհավարալի օրն էր...»:

Սիրիացի բարի արաբ փերը Մարիամին ևս պարաախան է փալիս իր փանը, որպեղ նա կագորուրվում, վերականգնում է ուծերը և նույնիսկ իր խելա-

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

9 ի



Ջոն և Բարբարա Չուգասյաններ, 2000թ.

խորհուրդներով սկսում է օգնել արաբ տիրոջ առևտրական գործերին: Որոշ ժամանակ անց Մարիամը կարողանում է համոզել արաբ տիրոջը, որ տիրկազնով ազատ արձակի իր աղջկան՝ Արշալույսին: Այնուհետև, Ամերիկայում ապրող նրանց հարազատների նյութական աջակցությամբ մայր ու աղջիկ հասնում են Նյու-Յորք:

Արշալույսն այնպեղ ամուսնանում է Մանասե

Չուգասյանի հետ, ունենում են չորս զավակ, ընդ որում նաև՝ Ջոնը: Մանկուց արվեստի նկատմամբ սերն ու աշխատասիրությունը երիտասարդ Ջոնի առաջ բացում են նոր հեռանկարներ: Ավարտելով և կատարելագործելով իր ուսումը, Ջոնը մասնագիտանում է երաժշտության և էթնիկ ուսումնասիրությունների ասպարեզներում: Նա երկար տարիներ դասախոսում է Լաս Վեգասի (Նևադայի նահանգ) և այլ համալսարաններում, ինչպես նաև որպես երաժշտ-դերասան հանդես է գալիս բազմաթիվ ֆիլմերում:

Մակայն Ջոն Չուգասյանի համար բախորտոջ եղավ, երբ նա իր կյանքը կապեց համիդյան ջարդերից մազապուրծ մշեցի գաղթական գերդաստանի երրորդ սերնդի ներկայացուցիչ Բարբարայի հետ: Բարբարան ոչ միայն հմայիչ արտաքին և գեղեցիկ չայն ուներ, այլև՝ հայկական ոգի և ազգային մտածելակերպ:

Նրանք շեռք-շեռքի փլած սկսում են հայ գաղթականների շրջանում և տարբեր երկրներում, նույնիսկ պատմական Հայաստանի տարածքում որոնել հին հայկական, ավանդական երգեր ու պարերգեր, որոնք Ջոնը մասնագիտորեն մշակում և գործիքավորում է:

1994թ. Ջոն Չուգասյանը (Էլ փոստ՝ <chook3@gnis.net>, Կայք՝ www.chookasian.com) որոշում է կազմակերպել հայ դասական, ժողովրդական և աշուղական երաժշտությանը նվիրված անսամբլ: Մեկ տասնյակից ավելի մասնագետ երաժիշտների հրավիրում է իր խումբը բազմաթիվ ելույթներ է ունենում Կալիֆոռնիայի և ԱՄՆ-ի տարբեր նահանգներում՝ մշտապես հիացմունք



Չուգասյան անսամբլ

երաժշտական ՂԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

առաջացնելով հայկական հարուստ և գունագեղ երգարվեստի նկարմամբ:

1999թ. Հայաստանի Հանրապետության Նախագահը «Մեկ ազգ, մեկ մշակույթ» ծրագրի շրջանակներում, առաջին անգամ նախապարվությունը Չուգասյան անսամբլին փառով, նրանց հրավիրում է Հայաստան: Մեկ ամիս շարունակ նրանք բարեգործական համերգային շրջագայությամբ հանդես են գալիս Հայաստանի փարբեր քաղաքներում և գյուղերում, ինչպես նաև Արցախում՝ խանդավառության այլք բարձրացնելով ամենուրեք: Նրանք իրենց եզրափակիչ համերգն ունենում են Երևանի Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, որտեղ խմբի ղեկավար Ջոն և Բարբարա Չուգասյանը և կլառնետ, խմբի անդամները հնարավորություն են ունենում ժողովրդական ինքնատիպ գործիքներով հանդես գալ նաև մենակատարումներով, իսկ անսամբլի մեներգչուհի Բարբարա Չուգասյանն իր հմայիչ շայնով ու հայաշունչ կատարողականով հիացնում է բոլորին:


Հայաստանի Հանրապետության Նախագահը, բարձր գնահատելով նրանց բազմամյա վաստակը հայ ժողովրդական երգարվեստի պահպանման,

փարածման և այն օտարներին ներկայացնելու գործում նրանց անդու ջանքերը, Ջոն և Բարբարա Չուգասյան անսամբլին շնորհել է «Ոսկե Հուշամեդալ» և «Պարվոզիր»:

Իսկ վերջերս, նրանց թողարկած թվով չորրորդ՝ «Ուղեորություն դեպի Հայաստան» բազմաթվանդակ և հայաշունչ խրատայիկը Ամերիկայի էթնիկ փոքրամասնությունների փառատրոնի եզրափակիչ փուլում արժանացել է առաջին անգամ հայերին շնորհվող «Հայկական Օսկար» բարձր պարգևին: Այդ արդեն օտարների գնահատականն էր իրենց ամբողջ կյանքը հայկական ժողովրդական երգարվեստին նվիրաբերած Ջոն և Բարբարա Չուգասյաններին և նրանց անսամբլի անդամներին:

Այնպես որ, հայ ժողովրդի փառանդը շարունակում է առկայծել Սփյուռքում՝ Հայոց ցեղասպանությունից վերապրածների ժառանգների հոգիներում, և հայ երգը հիացնում է աշխարհին...

(Կեն Կազմին)



Ջոն և Բարբարա Չուգասյաններ, Հայկական Օսկար (Armenian Oscar) - 2009թ.

Երաժշտական ԴԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

**Դ Ա Ն Ի Ե Լ Ե Ր Ա Ժ Ի Շ Տ
(Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Շ Ա Վ Ի Ր Ի
Դ Ա Ն Ի Ե Լ Յ Ա Ն)**

**Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ,
«Շարական» անսամբլի գեղարվեստական
ղեկավար և դիրիժոր**

*Ժամանակին մի բանասերեղձ գրել է՝
Խաղաղության կոնգրեսն էր մեծ
Պրագայում այն գեղեցիկ...*

Պրահան իրոք գեղեցիկ է, ոչ միայն ճարտարապետությամբ, պարմական կոթողներով, այլև հոգևոր կյանքի հարուստ ավանդույթներով: Միայն երաժշտական արվեստում կատարված մեծագործությունները բավական են, որպեսզի Պրահան համարվի աշխարհի խոշոր մշակութային կենտրոններից մեկը:

վարորներ, ջութակահարներ՝ Յոզեֆ Մլադիկը, Ֆրանչիչեկ Օնդրժիչեկը, Ֆերդինանդ Լաուրբ, և հարկապես Յան Կուբելիկը: Ի թիվս այլ դժվար գործերի, Նիկիտոյ Պազանիևիից հետո, Յան Կուբելիկը առաջինն սկսեց կատարել անհնար համարվող նրա կապրիսները:

Ոչ պակաս բուռն էր Պրահայի երաժշտական կյանքը 20-րդ դարում: Պրահայի օպերային թատրոնը ծաղկում ապրեց դիրիժորներ Ալեքսանդր Յենիևսկու, Օրակար Օստրժիլի, Վալդավ Տալիխի, Ջորջ Մելլի, Օրակար Յերեմիաշի օրոք: Միմֆոնիկ երաժշտության բնագավառում լայն գործունեություն էին ծավալել նաև դիրիժորներ Կարել Անչերլը, Վալդավ Սմերաչեկը: Իրականացան Լեոշ Յանաչեկի, Բոգուսլավ Մարտինովի օպերաների պրեմիերաները. կատարվեցին Ալբան Բերգի «Վոցեկ» օպերան, Առևտրի Շյոնբերգի «Սպասում» մոնոդրաման, Սերգեյ Պրոկոֆևի, Արամ Խաչատրյանի բալետները և այլն:

Երկրորդ աշխարհամարտից հետո մեծ համբավ չեռք բերեց 1946թ-ին հիմնադրված «Պրահայի գարուն» փառատոնը, որի շրջանակներում տեղի

Միջազգային մրցույթների հայազգի առաջին դափնեկիրները

Անգերագնահատելի է չեխ կոմպոզիտորների ներդրումը եվրոպական դասական երաժշտության շնավորման և զարգացման ասպարեզում: Հայրնի Մանեսայանյան դպրոցի ներկայացուցիչներ՝ Յան Վալդավ, Կարել և Անտոնին Սրամիցները, մեծապես նպաստել են դասական սիմֆոնիա երաժշտաչևի բյուրեղացմանը, սիմֆոնիկ նվագախմբի՝ որպես կատարողական կառույցի հիմնադրմանը:

Նշենք նաև Բեթհովենի բարեկամ, 60 սիմֆոնիայի հեղինակ Վոյտեխ Յիրովիցին, Յոզեֆ Միլիպլեչեկին, որին Մոցարտն անվանել է «աստվածային չեխ»: Այս և մյուս մեծերի նվաճումները հնարավորություն ընձեռեցին Բեդրժիխ Սմերանային ազգային հենքի վրա հիմնադրելու չեխական դասական երաժշտության, իսկ Անտոնին Դվորժակին՝ կերպելու ազգային սիմֆոնիկ դպրոցները:

18-19-րդ դարերում Պրահան, ինչպես նաև Վիեննան, Բեռլինը, Փարիզը, կատարողական արվեստի աշխույժ կենտրոններից էին: Այստեղ են կայացել Վիվալդիի մի շարք օպերաների և Մոցարտի «Դոն Ժուան» և «Տիրոսի գթասրտությունը» օպերաների պրեմիերաները՝ հեղինակի ղեկավարությամբ: Պրահայի անունն է կրում Մոցարտի Ռե-մաժոր սիմֆոնիան:

Պրահայում հյուրախաղերով հասնում են ելել Բեթհովենը, Պազանիևին, Բեռլիոզը, Լիստը, Վագները, Չայկովսկին, Սեն-Սանսը և ուրիշներ:

Կատարողական բարձր վարպետությամբ աչքի էին ընկնում Պրահայի կոնսերվատորիայի շրջանա-

էին ունենում երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթներ: Ընդ որում, հաղթողները, սովորաբար, ելույթ էին ունենում նաև մրցույթին հաջորդող բոլոր փառատոնում:

Հեղինակավոր հանձնաժողովի կազմում են եղել Դավիթ Օյսարախը, Մարիալավ Ռուսրոպովիչը, Լև Օբորինը և ուրիշներ: Այս մրցույթների դափնեկիր կոչման են արժանացել թավջութակահարներ Դանիլ Ծաֆրանը, Մարիալավ Ռուսրոպովիչը, Յոզեֆ Խուրսոն, Ալեքսանդր Վեչրոմովը, Վերա Սոուլուպովան, Սրեֆանիա Վոյտովիչը և ուրիշներ: Թե՛ մրցույթներին, թե՛ փառատոններին մասնակցել են նաև մեր հայրենակիցները:

Այժմ անդրադառնանք մեր դափնեկիրներից երեքին՝ Աշոտ Աբաջյանին (1922, Ալեքսանդրապոլ-1957, Կիև), Մեդեա Աբրահամյանին (1932, Երևան) և Ժան Տեր-Մերկերյանին (1936, Մարսել):

Ֆագոտահար Աշոտ Աբաջյանը միջազգային մրցույթի հայազգի առաջին դափնեկիրն է: Այս պարվավոր կոչումը նրան շնորհվեց 1953թ-ին, Անտոնին Ռայխայի անվան մրցույթում:

Նախ մի քանի խոսք Ա.Ռայխայի մասին: Կոմպոզիտորը ծնվել է 1770թ-ին, Պրահայում: Որպես ֆլեյտահար, 18 տարեկանից նվագել է Բոննի սիմֆոնիկ նվագախմբում, որտեղ այլ էր նվագում նաև Բեթհովենը:

Իսկ Համբուրգում, Ռայխան դաշնամուր է դասավանդել: 1808թ-ից մինչև կյանքի վերջը՝ 1836թ-ը

Կատարողական արվեստ

ապրել է Փարիզում, դասավանդել կոնսերվատորիայում: Ռայխայի սաներից էին Բեռլինը, Լիսյոնը, Գուլոնը, Ֆրանկը: Ահա թե ում անունն է կրում հիշյալ պարասիանսարու մրցույթը:

Ի դեպ, նշենք, որ դաիկների կոչման արժանացան նաև չեխ երաժիշտները՝ ֆլեյտահար՝ Ֆրանկիչեկ Չեխը, և կլաններսահարուհի Բոժենա Կուրբուցովան:

ԱՇՈՏ ԱՔԱՋՅԱՆ

Աշոտ Աքաջյանի մասին որոշ տեղեկություններ ենք քաղել (1. էջ 214, 243) տեղեկագրքից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, ֆագոտահար Գարի Մայիլյանի «Փառոց Երևան» շեռագիր աշխատությունից, (այժմ հրատարակված.-խմբ 2. էջ ..) ժամանակի մամուլից, Բեռլինի (1951թ.) ու Պրահայի (1953թ.) փառատոների և մրցույթի բուկլետներից, որոնք պրամատորել է պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը:

Ա.Աքաջյանը ծնվել է 1922թ-ին, Ալեքսանդրապոլում: 1946-1948թվականներին սովորել է Երևանի պետական կոնսերվատորիայում: Ա.Աքաջյանը ֆագոտահար Անդրանիկ Գալստյանի լավագույն սանն էր: Ուսմանը զուգահեռ երիտասարդ երաժիշտը աշխատում էր Ա.Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնի նվագախմբում: Հավատարիմ սանը, հեղինակում ուսուցչին՝ Ա.Գալստյանին, նույնպես տեղափոխվեց Մոսկվա, ուսումը շարունակելու Պ.Չայկովսկու անվ. կոնսերվատորիայում, անվանի մանկավարժ Իվան Կոստյանի դասարանում և ավարտեց այն 1952թ-ին:

Մոսկվայում էլ ֆագոտահարը ուսումնանը զուգակցում էր աշխատանքը, նվագելով Մարգարիտ ֆիլիսարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբում: 1953-1957թ-ի Ա.Աքաջյանն աշխատել է Կրեմլի Շեչենկոյի անվ. օպերայի և բալետի թատրոնի նվագախմբում, իսկ վերջին երեք տարիներին՝ դասավանդել է Կրեմլի կոնսերվատորիայում:

Առաջին քայլերը միջազգային ասպարեզում նա սկսել է 1949թ-ին, Բուդապեշտից, որտեղ Երիտասարդության համաշխարհային փառատոնում արժանացավ դաիկների կոչման (3-րդ մրցանակ): Իսկ 1951թ-ին Բեռլինի համաշխարհային փառատոնում նվաճեց 1-ին մրցանակ:

Աքաջյանի վերելքի զագաթնակետը Պրահայի հիշյալ մրցույթի պսակը՝ Վադլավ Սմերտակի դեկլարացիոն սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ ֆագոտահարի կատարած չեխ կոմպոզիտորի Անտոն Կոժեռնիկ Կոնցերտն էր:

Յավորք, Աքաջյանը ընդամենը 35 տարի ապրեց:

Կարելի է ասել, որ ֆագոտը Աքաջյանների տոհմիկ գործիքն է: Ֆագոտահարներ էին նաև Խարկովի Արվեստի ինստիտուտի պրոֆեսոր Գարի Աքաջյանը և Հայֆայի «Կոլ Իսրայել» կամերային նվագախմբի մենակատար Էդվարդ Աքաջյանը: Պրոֆեսիոնալ ֆագոտահարներ են նաև նրա կնոջ ազգականները: Այս երևույթը, թերևս, կարելի է բացատրել Ա.Աքաջյանի հմայիչ անչի և առինքնող



Աշոտ Աքաջյան

արվեստի գործը ազդեցությամբ:

Երաժշտական յուրաքանչյուր մրցույթ, փառատոն, ինքնին սիրո և խաղաղության հաղթանակ է: Այդպիսին է և «Պրահայի գարուն» փառատոնը: Պարասիանսն չէ, որ Ա.Ռայխայի անվան հիշյալ մրցույթի ավարտին Պրահայի ռադիոյի սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը Վադլավ Սմերտակի դեկլարացիոն կատարեց Բեթհովենի 9-րդ Սիմֆոնիան, որը խաղաղության և եղբայրության կոչ է համայն մարդկությանը. «Գրկախառնվեք, միլիոններ...»:

1950թ-ին, Գանուշ Վիհանի անվ. թավջութակահարների 1-ին մրցույթի հաղթողներ էին Մսրիսլավ Ռոստրոպովիչը և Դանիլի Շաֆրանը՝ երկուսն էլ արժանացան 1-ին մրցանակի: Հինգ տարի անց, նույն մրցույթում, 2-րդ տեղը գրավեցին Ռոստրոպովիչի սանուհի Մեդեա Աբրահամյանը և Տալյանա Պրիյունկոն:

Գանուշ Վիհանի անվ. մրցույթը հեղաշարժում վերանվանվեց Անտոնին Դվորժակի անունով:

Չեխ թավջութակահար Գ.Վիհանը ծնվել է 1855թ-ին, Պրահայում: Ավարտել է տեղի կոնսերվատորիան, որից հետո՝ տակավին 18 տարեկան, արդեն Չալցերոզի «Մոցարտումի» պրոֆեսոր էր: Աշխատել է նաև Բեռլինի, Չանդերսհաուզենի պալատական կապելլաներում: 1888թ-ից Պրահայի կոնսերվատորիայի պրոֆեսոր էր: 1891թ-ին հիմնել է հայրնի «Չեխական կվարտետը»:

Գ.Վիհանի արվեստը բարձր է գնահատել Ա.Դվորժակը, նվիրելով նրան թավջութակի հանրահայտ կոնցերտը և «Ռոնդո»:

Երաժշտական ԴԱՅՄՍՍՍԱՆ 2(37)2010

ՄԵՂԵԱ ԱՐԲԱՀԱՅԱՆ

Հերարդարձ հայացք գցելով Մեղեա Աբրահամյանի անցած սրեղծագործական ուղուն, նկատում ենք, որ պատահական ոչինչ չի եղել, այլ նախահանամության շունչն է թևածել վերելքի ամբողջ ընթացքում: Մի առիթով Ռոմանոս Մելիքյանը, լսելով եռամյա Մեղեայի թոթովանքը, հորդորեց ծնողներին երեխային երաժշտական կրթության տալ: Այսպես էլ եղավ, աղջնակին տարան Երևանի Չայկովսկու անվ. երաժշտական դպրոց: Իսկ անվանի դիրիժոր Կոնստանդին Սարաջյանը, տեսնելով Մեղեայի մարմնի գեղեցկությունը և յուրահարկությունը խորհուրդ տվեց ընտրել թավջութակը: Արդյոք Սարաջյանը կարո՞ղ էր երևակայել, որ տարիներ անց, հայրնի դիրիժոր Տիբոր Վարզան պիտի բացակասեր. «Մեղեա, դուք ծնված եք թավջութակ նվագելու համար»:

Երևանի կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանողուհի էր, երբ նա մեկնեց Բուխարեստ մասնակցելու Երիտասարդության համաշխարհային փառատոնին: Մոսկվայում, նախնական փուլի ելույթից հետո, Մեղեային մտրեցավ Մստիսլավ Ռոստրոպովիչը, զվեց հեռախոսի համարը և պահանջեց Բուխարեստից վերադառնալուն պես զանգահարել և ավելացրեց. «Դուք պետք է սովորեք իմ դասարանում»: Այդպես էլ եղավ: 1953թ-ից Մեղեան ուսումը շարունակեց Մոսկվայի կոնսերվատորիայում:

Ռոստրոպովիչը որոշեց, որ իր սանուհին պետք է գնա իր հետքերով, այսինքն նույնպես մասնակցի Պրահայի մրցույթին, միջազգային աս-

պարեզ դուրս գա: Այդպես էլ եղավ: Մեղեան արժանացավ դափնեկրի կոչման: Բավական բարձր ծրագիր էր: Չեխ ժամանակակից կոմպոզիտոր Ռժիբրկի Կոնցերտը, Մաքս Ռեգերի ֆուգան՝ երրորդ Սյուիտից, Դվորժակի Կոնցերտը և այլ երկեր: Բավական խաղաղասահեց հանչնաժողով՝ ֆրանսիացի մեծ թավջութակահար Փոլ Տորրելլեն, Ռոստրոպովիչը և ուրիշներ: Վերջապես, հզոր ախոյաններ:

Մ.Աբրահամյանին մի հետաքրքիր դրվագ էին պատմել: 1-ին փուլում նվագում էին փակ վարագույրի հետևից: Սակայն միևնույն է, Ռոստրոպովիչը ճանաչել էր Մ.Աբրահամյանի սրտառուչ հնչյունը և հուզմունքը քողարկելու համար, դողողացող ձեռքով ջուր էր խմել: Այսպես, աշակերտ և ուսուցիչ իրենց «մարմնեցին»՝ Մեղեան իր վառ, անկրկնելի նվագով, իսկ Ռոստրոպովիչը՝ շշի և բաժակի բաբախյունով...

Հիրավի, ոչ մի միջնորմ, վարագույր՝ լինի այն թավջութ, թե «երկաթի», ի գորու չեն խոչընդոտելու, աղավաղելու Մ.Աբրահամյանի թավջութակի ամենաբախանց հնչյունը, որը կարող է փափկացնել նույնիսկ «բար» սրտերը...

Մրցույթից հետո Մեղեան ևս վեց անգամ հրավիրվեց Չեխիա՝ հյուրախաղերի: Նա շարունակեց բարեկամությունը նույն մրցույթի հաղթողների՝ Յոզեֆ Հուրոյի, Ալեքսանդր Վեյբոմովի և այլոց հետ:

1956թ-ին ավարտելով Մոսկվայի կոնսերվատորիան, նա վերադարձավ Երևան և անմիջապես ծավալեց համերգային բուռն գործունեություն՝ որ-



Գանուշ Վիհանի անվ. միջազգային մրցույթի մասնակիցները, Պրահա, 1955թ. Ն.Պ.Չեպլիգին (ժյուրիի կազմում), Գեորգի Բվանով, Մստիսլավ Ռոստրոպովիչ (ժյուրի կազմում), Ֆրիդա Բաուեր (կոնցերտմաստեր), Միխայիլ Խոմիցեր, Տատյանա Պրիյմենկո, Մեղեա Աբրահամյան

երաժշտական ՂԱԳԱՍՏԱՆ 2(37)2010

Կատարողական արվեստ

պես Հայֆիլհարմոնիայի մենակապար: 1962թ-ից Մ.Աբրահամյանը դասավանդում է Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում: Հյուրախաղերով հանդես է գալիս Կարբեր երկրներում՝ Ֆրանսիայում, Իսպանիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Լիբանանում, Սիրիայում և այլուր:

Այնուամենայնիվ, այդ հյուրախաղերի թիվը չէին կարող ընդգրկել Մ.Աբրահամյանի մեծ նվագացանկը և մրախոջացումները: Եվ նա հանդես է գալիս ոչ միայն որպես մենակապար: Թավջութակահարուհին համագործակցել է սևիվանի երաժիշկների հետ՝ դաշնակահար Յուրի Հայրապետյանի, ջութակահար Ժան Տեր-Մերկերյանի և դիրիժոր Ռուդոլֆ Բարշայի հետ կապարելով Բեթհովենի եռակի Կոնցերտը: Հիշարժան է նաև նույն գործի կապարումը Ռ.Ահարոնյանի մասնակցությամբ: Դաշնակահար Կ.Օրբելյանի և Ռ.Ահարոնյանի հետ կապարել են Պ.Չայկովսկու, Ս.Ռախմանինովի, Ա.Բարաջանյանի փրիոները՝ ներկայացրել Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, Բեռլինում:

Մ.Աբրահամյանը հավաքարիմ մնաց նաև Կվարտետի ժանրին: Դեռևս Պ.Չայկովսկու անվ. դպրոցի 10-րդ դասարանցի էր, երբ ջութակահարուհի Անահիտ Յիգիկյանի հետ նվագել է լարային քառյակում, որին հավանություն է փվել Մոսկվայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Սարգիս Ալամանյանը: Հետագայում, փառանքավոր ալտահարուհի Լյուբով Կուրենկովայի հետ հիմնել է կանանց մուսկոլյան առաջին լարային քառյակը, որին հետագայում շնորհեցին Ս.Պրոկոֆևի անունը: Եվ վերջապես, Արտաշես Մկրտչյանի հետ հիմնադրեցին Արամ Խաչատրյանի անվան քառյակը:

Մ.Աբրահամյանի արվեստը ոգեշնչել է բազում կոմպոզիտորների, նշենք Է.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, Գ.Սարյանի, Ա.Խուդոյանի, Մ.Իսրայելյանի, Ս.Լուսիկյանի երկերը նվիրված անվանի թավջութակահարուհուն:

Է.Միրզոյանը, - գրել է. «Մեղեայի բացառիկ օժտվածությունը մեծապես կանխորոշել է իմ Սոնատի սրեղծումը»: Սոնատ, որի կապարումը, Լեհաստանում, կյանքի կոչեց Է.Մլոճեսկու «Բալադայուհի»՝ նույնպես չունված Մ.Աբրահամյանին: Ծուրջ 25 սրեղծագործություն նվիրված է դրանց առաջին կապարողին՝ Մ.Աբրահամյանին:

Իր լայնածավալ նվագացանկը առաջմ կազմում է 8 լագերային շայնասկավառակ, ընդ որում զգալի մասը շայնագրել է ընթացակա դաշնակահարուհի Ռոզա Թանդիլյանի նվագակցությամբ: Թավջութակահարուհու հարուստ փորձը ժառանգած սաները այժմ գործում են Հայաստանում և արտասահմանում, բարձր պահելով հայկական կապարողական դպրոցի պարիվը:

Մ.Աբրահամյանի հաջողությունները, նվաճումները արդարացվել են բազմաթիվ թերթերում, ժամանակակիցների գնահատականներում:

Անդրադառնալով նրա համերգին, Փարիզի «Մոնո» թերթը («Աշխարհ», 13.02.1964թ.) գրել է. «Չեռք բերած է ուժեղ և մաքուր թեքնիք մը, առանց անօր զօհելու սակայն գեղագիտական այլ աղղակ-



Մեղեա Աբրահամյան

ներ, որոնք կը յարկանշեն սրեղծագործութեան մը պաթոսը, անոր ներքին կեանքը»:

Իրականացան Ռոստրոպովիչի կանխարեսումները. ժամանակին նա ասել էր. «Հազվադեպ շնորհով է օժտված Մեղեա Աբրահամյանը: Վարահ եմ, որ նրան փայլուն ապագա է սպասում»:

Սակայն նա կարող էր ավելին անել. պարահայան չէ, որ Ժան-Տեր Մերկերյանը ասել է «Մեղեա, դու ավելին ես, քան քեզ ընկալում եմ»:

Այս առումով «Կլարին» թերթը գրել է. «Անշուշտ, եթե Մ.Աբրահամյանը չպարկաներ սովետական ազգերից մեկին, որի առաջընթացը սահմանափակվում էր, նա ավելի հաճախ հանդես կգար իբրև պարվաժոր և գերադասելի հյուր» (3): Կոմունիստ-չինովիկների կասկածամտությունը և նահանջը (սալերիզմը) ոչ պակաս խանգարել են հենց Ժանին, չէ՞ որ նա հայրենադարձվել էր Ֆրանսիայից, անկախ էր, չէր մասնակցում «Նյութի փաճարում շուրջպար բռնածների» խրախուսմբին:

Մ.Աբրահամյանի հետ մեր հարցազրույցներից մեկում, այն հարցին, թե մի՞թե նա որոշ մարդկանց նման չէր կարող «լեզու գրկել» ղեկավարների հետ, պարասխանել էր. «Իմ լեզուն երաժշտությունն է, ես երբեք կուսակցական չեմ եղել, բացի այդ՝ բնավորությամբ անկախ եմ, չեմ սիրել խնդրել, համոզել, թե արվեստը, գեղեցիկը, թավջութակը լավ բաներ են...» (4. էջ 83-84):

Ակամա հիշում ես Դոստոևսկու «Դեեր» վեպի հերոսին, որ ջանում էր ապացուցել վերնախավին, թե Ռաֆայելի կրավներն ավելի արժեքավոր են, քան նավթը: Եվ նրանք ծիծաղում էին Վերիսովենսկու վրա...

Այսօր, արվեստագետներն ավելի ծիծաղելի վիճակում են. չէ՞ որ նավթն ավելի է բանկացել՝ և

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

ավելի, քան նույնիսկ մարդկային արյունը...

Սակայն, եթե նավթով լիցքավորում են նաև մահասփյուռ տանկերը, ապա արվեստը խաղաղություն է սփռում, պոեզիա խոսքով ասած. «Մեր հրացաններից սոխակներ են թռչում»: Մ.Աբրահամյանի «սոխակները» դաշլայել են արցախյան պատերազմի օրերին, հենց Սյունիանակերպում, երբ գնդակոծություններից ու պայթյուններից «Ղարաբաղի գմբուխը հավքերը» լռել էին: Դաշնակահարուհի Ժամանակ Դանիելյանի նվագակցությամբ, Մ.Աբրահամյանը կատարեց Յո.Բրամսի, Կ.Դեբյուսիի և հայ կոմպոզիտորների գործերը, որոնք Արցախում հնչում էին առաջին անգամ: Եվ ոսոխի թնդանոթները չկարողացան լռեցնել մուսաներին...

1956թ-ին, Պրահայում տեղի ունեցավ Յոզեֆ Սլավիկի և Ֆրանտիշեկ Օնդրժիչեկի անվան ջութակահարների մրցույթը:

«Չեխական Պագանիկի». այսպես էին ժամանակակիցները անվանում Յո.Սլավիկին (1806-1833): Բարձր է գնահատել չեխ ջութակահարին հենց ինքը՝ Պագանիկին: Վիեննայում, Սլավիկը, Պագանիկի կատարմամբ լսել էր «Կամպանելլան», հիշողությամբ գրի առել և հաջորդ օրը կատարել հեղինակի՝ Ն.Պագանիկի ներկայությամբ: Իսկ Ֆ.Շոպենը և Յո.Սլավիկը միասին հորինել էին «Վարիացիներ՝ Բեթհովենի թեմայով» և միասին էլ նվագել այն: Ֆ.Շոպենը և Յո.Սլավիկը էլ իր հերթին Յո.Սլավիկին էր նվիրել իր հայրնի Ֆանրագիան (օր.159): Արժեքավոր այլ գործեր էլ էին ակնկալում Յ.Սլավիկից, սակայն նա ապրեց ընդամենը 27 տարի, քայց և հասցրեց գրել ավելի քան 20 սրեղ-ձագործություն՝ կոնցերտներ, կվարտետներ, պիեսներ ...

Ֆ.Օնդրժիչեկը (1857-1922) նույնպես վիրտուոզ ջութակահար էր և մանկավարժ, «Նոր մեթոդի հիմնադիր»: Դասավանդել է Պրահայի կոնսերվատորիայում, դեկավարել Վիեննայի կոնսերվատորիան: Հյուրախաղերով հանդես է եկել Եվրոպայի տարբեր երկրներում: Ա.Դվորժակի ջութակի կոնցերտի առաջին կատարողն էր «Չեխական ռապսոդիայի», «Ֆանրագիա Գլինկայի «Իվան Սուսլինի» օպերայի թեմաներով» և այլ գործերի հեղինակ:

ԺԱՆ ՏԵՐ-ՄԵՐԿԵՐՅԱՆ

Յո.Սլավիկի և Ֆ.Օնդրժիչեկի անվ. մրցույթում հաղթող ճանաչվեցին Բորիս Գուրնիկովը և Վալերի Կլիմովը: Երկրորդ մրցանակին արժանացավ Ի-ին անգամ միջազգային ասպարեզ ելած երիտասարդ Ժան Տեր-Մերկերյանը: Հիրավի, հզոր ախոյաններ էին: Բավական է նշել, որ Բ.Գուրնիկովը հաղթող է ճանաչվել չորս մրցույթներում, այդ թվում, (ինչպես նաև Վ.Կլիմովը)՝ Պ.Չայկովսկու անվան միջազգային մրցույթում: Հեղափոխական գուգադիպություն է, որ հեղափոխում՝ 1957-ին, Փարիզում, «Մարգերիտ Լոնգի և Ժակ Տիբոյի անվ. մրցույթ»-ում Բ.Գուրնիկովին շնորհվեց 1-ին մրցանակը, նույնը՝ 1961թ-ին նվաճեց Ժան Տեր-Մերկերյանը: Իսկ Պրահայի հիշյալ մրցույթում՝ 2-րդ մրցանակին արժանացան նաև չեխ ջութակահարներ Լադիսլավ Յասեկը և Շյուսթան Յապարին:

Ժ.Տեր-Մերկերյանը ծնվել է 1936թ-ին Մարսելում: Ջութակի առաջին ուսուցիչը հայրն էր՝ Երվանդ Տեր-Մերկերյանը: Ժանը հրաշամանուկ էր: 10 տարեկանում նվագախմբի հետ կատարել է Ֆ.Մենդելսոնի Կոնցերտը և այլ վիրտուոզ պիեսներ: Հայրենադարձվելուց հետո ուսումը շարունա-



Ժան Տեր-Մերկերյան

կել է Երևանի Պ. Չայկովսկու անվ. երաժշտական դպրոցում, այնուհետև Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում (երկու փուլով)՝ պրոֆեսոր Կարպ Դոմբասի դասարանում: Այս ուսումը շարունակել է Մոսկվայում, ավարտելով կոնսերվատորիան և ասպիրանտուրան՝ պրոֆեսոր Դավիդ Օյարաբախի ղեկավարությամբ: Պրահայի մրցույթից հետո ժամը, ինչպես նշվեց, Փարիզում շահեց «Գրան Պրի», իսկ 1963-ին, Բրյուսելում՝ Ելիզավետա թագուհու անվ. միջազգային մրցույթում նույնպես արժանացել է դափնեկրի կոչման: 1964թ-ից մինչև Ֆրանսիա փեղափոխվելը Ժ.Տեր-Սերկերյանը դասավանդել է Կոմիտասի անվ. ԵՊԿ-ում: Անվանի ջութակահարին շնորհվել է Հայաստանի ժողովրդական արտիստի կոչում և Պետական մրցանակ: Այդտեղ Մարտելում, նա այցելում է Երևան, և իր նվագով հագեցնում հայրենակիցների ծարավը: Եվ ոչ միայն իր հանձարեղ նվագով: Երկրաշարժից հետո փարիսեր շարունակ նա նյութապես օգնել է և՛ իր ուսուցիչներին, և՛ նախկին սաներին, այցելել հիվանդներին:

Այսօր, երբ աշխարհը լի է արագանվագ երաժիշտներով, ողորկված է մոկարածով «կարկարած» շայնագրություններով, առավել արժեքատրվում է անցյալի մեծ երաժիշտների կատարումը: Ծիշը է, հարգարժան վիրտուոզների նվագը ցնցում է, բայց չի հուզում, լսելով չես արտասվի, չես ժպտա: Ինչպես Ժ.Տեր-Սերկերյանն էր ասում. «Մեծերին լսելիս, ծնողներիդ լարվածությունը վերանում է, իսկ դադվում է»:

Կարծես նրա ջութակի, արվեստի մասին է գրված Սայաթ-Նովայի «Քամանչա» բանաստեղծությունը: Ժանի ջութակի լարերն էլ «օսկի» են, աղեղի մագերը՝ հրեղեն ձիու պոչից փնջված, որ ջութակը հնչեցնում է «քաղցրը հանգով», «շար փրփուր սիրտ խընդացնում, կտրում հիվրնդի դողը»:

Ժ.Տեր-Սերկերյանի ջութակն էլ, Սայաթի քամանչի պես, իր «քան» էր, այսինքն մրցավեճի գործիքը, որ երբեք փանուլ չսլվեց: «Քեզ ինչնից ով կանա խրլի՝ աշուղի քան իս քամանչա...»

Անուշահամ գինով լիքը դուն օսկե քանս իս, քամանչա...»

Ժ.Տեր-Սերկերյանը այն արվեստագետներից է, որի կատարումը նախ կատարելագործում է իր անչք, ուստի ի գորտ է վեհացնելու նաև ունկնդիրներին: Իր «ես»-ով նա չէր ծանրացնում Բախի, Բեթհովենի, Մենդելսոնի, Բրամսի, Սիբելիուսի, Խաչատրյանի երաժշտության ճախրանքը և այն անկորուստ հորդում էր, ինչպես Բեթհովենն էր ասել՝ սրտից սիրտ:

Ըստ Ժ.Տեր-Սերկերյանի. «Կատարելությունը, իդեալը հորիզոնի պես է, որքան մոտենում էս, այնքան հեռանում է»:

Այդ բացառիկ խարապահանջությունից ավելի շար փուժեցին երկրպագուները, քանի որ այն շայնագրությունները, որ մասունքի պես փայփայում ենը, մեզ հասել են հակառակ իր կամքի, որովհետև նա չէր սիրում շայնագրվել, նախապատվությունը փախել կենդանի նվագին, սրտի թրթռին, ունկնդ-

րի հեղ անմիջական հաղորդակցությանը: Մակայն այդ մի քանի շայնագրությունները ևս վկայում են Ժ.Տեր-Սերկերյանի մեծ փառանդի մասին: Դրանք են Խաչատրյանի Կոնցերտը՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հեղ՝ Միքայել Մալունցյանի ղեկավարությամբ, Բրամսի Կոնցերտը՝ Բոստոնի սիմֆոնիկ նվագախմբի հեղ՝ Արթուր Ֆիդլերի ղեկավարությամբ, Խաչատրյանի «Պարը», «Աղջկա պարը»՝ «Գայանե» բալետից, Կոմիտասի հայրենաբաղձ «Կռունկը» և մի քանի այլ երկեր:

Խորհրդային փարիներին, երբ խրախուսվում էր հարմարվողականությունը, Ժ.Տեր-Սերկերյանը բարձր էր պահում արվեստագետի, մարդ-անհարի արժանապատվությունը և ասում էին, որ արժանապատվություն բառի արմատը «ժանն» է: Անկախ հոգու և իդեալների փեր անչնավորությունը, կոմունիստ-ղեկավարների քմահաճույքներին փուրք չէր փախա: Պարահական չէ, որ արտասահմանյան հաղթարշավներից հետո 14 փարի Երևանի կոնսերվատորիայում դասավանդելուց հետո միայն արժանացավ դոցենտի կոչման, մինչդեռ արժանի էր պրոֆեսորի պատվավոր կոչման, քանզի նրա յուրաքանչյուր համերգ փոխախմբություն էր և հաղթանակ ոգու՝ հանդեպ նյութի: Եվ ամենաբարձր գնահատականը այն սերն է և ակնածանքը Ժ.Տեր-Սերկերյանի արվեստի նկատմամբ, որ փոխանցվում է սերնդե-սերունդ:

Արդյո՞ք փեղյակ է վարպետը, որ իր երկրպագուներն իրենց ջութակի պայտաններում ինամքով պահում են նրա՝ լուսանկարը (ոմանը՝ Յաշա Հայֆեցի լուսանկարի կողքին), պարճենահանում և որպես նվեր փոխանցում ուրիշներին: Ես էլ դասերիս ընթացքում սաներիս ոգևորելու նպատակով մերթ ընդ մերթ ցույց եմ փախա ջութակով Ժ.Տեր-Սերկերյանի լուսանկարը: Կարելի է ասել, նրա դասերը շարունակվում են...

Պրահայի համալսարանի գրադարանում պահվում է 13-14-րդ դարերի մի չեռագիր, որտեղ ամփոփված է նաև երկչայն մի ռոնդել: Այն վերնագրված է “Flas florum inter Lilia”, այսինքն, «Ծաղկանց ծաղիկ շուշանների մեջ» (5. էջ 234):

Այս նույն խոսքերը կարելի է վերագրել Ժան Տեր-Սերկերյանի անթառամ արվեստին: Հիրավի, ծաղիկ, որ բացվել է գեղեցիկ Պրահայի այն նվիրական գարնանը՝ հավերժացած գարնանը...

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. “Музыкальные конкурсы в прошлом и настоящем”.
2. Маилян Г.Е., Фагот в Армении., (сост. и ред. А.Бу-дагян)., Ер.: Арт-рук 000, 2009., 101 - С.
3. «Կլարին», 05.07.1975թ., Բուենոս-Այրես:
4. «Գարուն», մայիս, 1995:
5. Музыкальная энциклопедия, Москва, 1982, т. 6.

Երաժշտական ՀԱՅՍՏԱՆ 2(37)2010

ՀՈՒՇԵՐ

ՀՈՎՋԱՆՆԵՍ ԱՍԱՏՈՒՐԻ
ՂԱՐԲԻՆՅԱՆ

Խմբավար, բառահար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ պրոֆեսոր

ՀՈՒՇԵՐ
ՀՈՎՋԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ
ՄԱՍԻՆ

1978թ-ի հուլիսյան մի օր, Երևանի Արույան և Սպանդարյան (այժմ՝ Արամի) փողոցների խաչմերուկում գրնվող գրախանութից գնեցի Հովհաննես Շիրազի նոր լույս տեսած «Առակս զի՞նչ ցուցանե...» բանաստեղծությունների գրքույկը: Ընթերցելով այն՝ մտրեցա «Մոսկվա» կինոթատրոնի հրապարակին, որտեղ մարդկանց մի խումբ բանաստեղծին խնդրում էր ինքնագիր բողոքել գրքույկի վրա:

Շիրազը սիրով մակագրում էր: Որոշեցի, որ իմ օրինակն էլ մակագրի: Երբ վարպետն ազարվեց «չոջախակումից», մտրենալով նրան՝ ասացի.

- Խնդրում եմ, այս օրինակն էլ ստորագրեք...
- Չէ՛, - եղավ պարասխանը կոպիտ:
- Դե լավ, էս էլ ստորագրեք..., - խնդրեցի:
- Չէ՛, - կրկնեց նա:
- Ի՞նչ կա դրա մեջ, ստորագրի է՛լի, - վրդովված շարունակեցի:

Հ.Շիրազը, նկատելով իմ պնդումը, ի միջի այլոց հարցրեց.

- Անունդ ի՞նչ է:
- Ընկի՛ց, - պարասխանեցի կտրուկ...
- Ճիշտ կրսե՞ս, - կրկնեց նա մեղմացած...
- Հա՛..., - պարասխանեցի իր նման...
- Դե, որ էդպես է, րո՛ւր..., - եղավ սիրալիր պարասխանը:
- Չե՛մ ուզում, ուրիշը կստորագրի, պարասխանեցի:
- Ի՞նչընդ, էդոնք իմ գրածներն են... - փազնապեց...
- Գրքույկի տիպոդոսաթերթի վրա հեղինակի անունից վերև, գրեց.
- «Հովհաննեսին Հովհաննեսից», ասելով՝ «Կեցի, լրացնեմ հեղինակի փապազիր՝ Հովհաննես Շիրազ -ից ընդգծումով»:

ՀՈՎՋԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ
ՊԱՏԳԱՄԸ

Մի օր Երևանի Արույան փողոցի վերջնամասում գրնվող (Հանրապետության հրապարակին հարող) ջրերի խանութում, վաճառողից մի շիշ Ջերմուկ խնդրեցի: Հանկարծ շախ կողմում հայտնվեց Հովհաննես Շիրազը: Քիչ անց նրա կողքին էլ մի փղամարդ՝ իր 5-6 տարեկան փղայի հետ և փոքրիկին դիմելով ասաց.

- Արման ջան, լիմոնադ կիմես քե՞՞ «Ջերմուկ»:
- Հ.Շիրազը, կարծես վաղեմի ծանոթին դիմելով՝ ասաց ինձ.
- Գիրե՞ս, Արմանը մեր Արմենն է, գնացել է Եվրոպա Արման է դարձել... Ըդոր հերն էլ կկարծե, քե եվրոպացու անուն է դրե իր էրեխին:
- Բանաստեղծի խոսքերից քաջալերված՝ հարցրեցի.

- Վարպետ, դու մեր ժողովրդական երաժշտությունն ու գործիքները սիրո՞ւմ ես...
- Ուրիշ բան չեմ սիրե, - պարասխանեց:
- Եթե իմ կատարումների շայնապնակը նվիրեմ, կրնո՞ւնե՞ս, - հարցրեցի:
- Երկու գիրք կմակագրեմ, կուրամ քեզի, վաղը քե, րունս գիրես, չէ՞...

Հաջորդ օրը, (1980թ. հունիսի 19-ին) նոր բողարկված առաջին շայնապնակիս շապիկի վրա, «գլխիս գալիքը» ձևախառնակելով մակագրեցի:

Շայնապնակը լրագրի մեջ փաթաթեցի և պայմանավորվածության համաձայն գնացի բանաստեղծի ապրած շենքի շքամուտքի մոտ: Շիրազը դուրս եկավ շենքի ճակատը բակին միացնող կամարաշև լայն անցումից: Մտածեցի՝ ի՞նչ ճշտապահ է: Մտրեցա նրան.

- Բարե, վարպետ, շայնապնակը քերել եմ:
- Դուն վո՞ւմ ես, - հարցրեց:
- Երեկ, պայմանավորվել էիք, որ շայնապնակը քեզ հանձնեմ:
- Դուն վո՞ւմ ես, - կրկնեց:



Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

Նկարեցի, որ բանաստեղծը գիտնուցած է, փաթեթը ինքնաբերաբար մեկնեցի նրան: Չայնայական կի ծրարի վրա իմ լուսանկարը տեսնելով՝ բարի ժպիտով հարցրեց.

- Դո՞ւն էս...
- Այո, - պատասխանեցի:
- Բա, ո՞ւր է... հարցրեց:
- Ի՞նչը, - հարցրեցի:
- Ո՞ւր է, - կրկնեց:
- Ի՞նչը, - հարցրեցի նորից:
- Հայերենն ո՞ւր է, - զայրացած:

Նրա հարցադրումից շփոթված ինքնաբերաբար քայնան մղումով ակամա պատասխանեցի.

- Ես ի՞նչ անեմ, Մոսկվայում եմ թողարկել՝ «Մելոդիա» միավորումում, իրենք են ձևավորել:

Շիրազը զայրացած ասաց.

- Դո՞ւն ես ասել, որ հայերեն չգրեմ, դո՞ւն ես մեղավորը... Դո՞ւն, դո՞ւն...

- Գրի՛չք փռու...

Նրա գոռոռոցից անցորդները խմբվեցին ու սկսվեց բանաստեղծի հերթական հանապարաս-

տից, իր համար ցանկալի հանդիպումը իր ընթերցողների հետ:

Բանաստեղծի խանութի մուտքին գրկվող փոշուր, հողուր, բանաստեղծի կորորանքներով սեղանի վրա սկսեց չայնայական ծրարի եզրին մտածկուր հայացքը ընդմիջումներով դեպի երկինք ուղղելով, ինչ-որ բան գրել: Մտածում էի՝ հավանաբար իմ անունն է հայերեն գրում: Չայնայականը՝ Ավետարանը երկու շեշտով պահելու ընդունված դիրքով ինչ վերադարձնելով, բարձրաձայն բացականչեց.

- Վերցրո՛ւ... ընդունելությունն ավարտված է...

Ես, շփոթված ու խիստ զայրացած, ցանկանում էի չայնայական շապիկն իր ներկայությամբ պատռուրել: Մի կերպ ճողպրեցի:

Շիրազը ծուռունուռ գրել էր.

«Շնորհակալ եմ, որ հայոց թառահար ես, այն էլ շնորհալի, բայց ո՞ւր է շնորհը, երբ չկա աշխարհաշնորհը՝ հայոց լեզուն, ո՞ւր է քո ազգը, քո Աստվածը: 1980թ. Հ.Շիրազ»:

Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ «ԱԼՄԱՍ» ՕՊԵՐԱՅԻ ԱՇՈՒԴԻ ԱՐԻԱՆ

Կոմպոզիտորներն իրենց սրեղծագործության ազգային նկարագիրը համոզիչ և հավաստի դարձնելու նպատակով օգտագործում են ժողովրդական երգ, պարեղանակ, աշուղական կամ գործիքային սրեղծագործություն: Այս մտքեցման ցայտուն օրինակն է Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան, որտեղ հնչում են հայկական ժողովրդական երգեր, Կոմիտասի հավաքածուից նմուշներ, Սպիրիդոն Մելիքյանի և Անուշավան Տեր-Ղևոնդյանի «Շիրակի երգեր» ժողովածուից փասնչորս երգ:

Մեզ հետաքրքրողը հանրահայտ «Աշուղի արիա»-ի սրեղծման և օգտագործված երաժշտական աղբյուրն է:

Հայրենի է, որ Ա.Սպենդիարյանը հիշատակում է, որ այդ արիայում օգտագործված է Մակար Ելմայանի բազմաձայնած «Պարարագ»-ից մի հատված: Պարզեցիկ, որ այն «Պարարագ»-ի «Գոհանամբ գրեն Տէր» (չորս փակուր է օգտագործել) հատվածի փարբերակն է, որը ծավալուն և ծորուն մեղեդային հյուսվածքի պարճառով չեն երգում: Իսկ մնացյալը, չէ՞ որ արիայում օգտագործված են նաև մուղամի մեղեդային դարձվածքներ: Այս հարցում մեզ օգնեց կարարողական մշակույթին փրկապետները. «Աշուղի արիա»-ում կոմպոզիտորն սրեղծել է «Մահուր Հինդի» և «Մահուր» մուղամների բաղկացուցիչ մասերի կառուցվածքային օրինաչափության պատրաստ: Արիան սկսվում է ծավալուն պարմողական վերամբարձ նախանվագով (Բարդաշիր հատվածով): Այն «Մահուր Հինդի»-ի նախա-

ԲԱՐԳԱՇՏ

Ազատ, հանդիսավոր, վերամբարձ (Rubato)



բանն է, որին հաջորդում է աշուղի երգեցողությունը (Մայա հատվածով՝ հիմնական թեմայով): Այն ընդ-

ՄԱՅԱ

Չանդիսավոր, պատմողական



միջվում է «Մահուր»-ի մեղեդային «հենքային» հիմնական դարձվածքի հոլովույթով, որին միա-



Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

Նվիրվում է Հայոց ցեղասպանության 95-ամյակին

հյուսվում է «Պարարագ»-ից քաղված հարվածը: Արիայի մեղեդային հնչողական գազաթնակերը



(Ուզգալ հարվածով) ամբողջացնում և հասարարում է երաժշտության դրամատուրգիական և երաժշտական կերպարածրի նպատակը:

ՈՒՉՉԱԼ *



Երգչին նվազակցում է ջութակի մենանվագը, կարծես նմանակելով քամանչայի հնչողությունը: Մեր կարծիքով քամանչայի յուրահատուկ հնչերանգի, հնչյունարարաբերման և նվազելու եղանակը կրկնգծեր արիայի երաժշտության արևելյան բնույթը:

Տեսնենք, թե ո՞ր երաժշտի կատարումից է ոգեշնչվել հեղինակը: Հայրնի է, որ Ա.Սպենդիարյանը 1916թ-ին այցելել է Թիֆլիս, ծանոթանալով Հովհաննես Թումանյանի և հայ մրավորականների հետ, որոշում է մեծ բանաստեղծի «Թմկաբերդի առումը» պոեմը վերածել իր ապագա օպերայի լիբրետոյի: Չի բացառվում, որ այդ միջոցին կոմպոզիտորն ունկնդրել է հայ հանրահայտ երաժիշտների, ինչպես օրինակ Բալա Մելիքյանի կատարումները «Մահուր Հինդի» մուղամը (ի դեպ Բառահարի կատարողական արվեստի ծաղկուն շրջանն էր): Ասվածի հասարարումն է Բալա Մելիքյանի կատարմամբ մեզ հասած «Մահուր Հինդի» մուղամի ձայնագրությունը, որտեղ նշմարվում են «Աշուղի արիա»-ին մոտ ինտոնացիաների մեղեդայնությունը:



Բալա Մելիքյան (1888-1935)



Սողոմոն Մեյրանյան (1907-1974)

Երաժշտական ՀԱՅԱՍՏԱՆ 2(37)2010

* Նոտագրությունը կատարել է տողերիս հեղինակը Սողոմոն Մեյրանյանի 1950-ականներին տնային պայմաններում կատարած ձայնագրությունից:

ՎԱԼԵՆՏԻՆ ԽԱՉԻԿԻ
ՌՈՎՄԱՍՅԱՆ

Կոմիտասի անվ. ԵՊԿ դոցենտ

«Ես տարիներու աշխատանքով շիներ եմ իմ ուղեգիծը, ուրկե ընթացեր եմ մինչեւ ցարդ եւ պիտի ընթանամ ասկե ետքն ալ, որքան ատեն որ ուժ զգամ երակներուս մեջ. ոչ մեկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեանս մեջ, որու նվիրականութեանը համոզված եմ բոլոր սրտովս»:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ



Մեսրոպ Մեսրոպյան 1943թ.

Խմբավար ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆ (1920-1983)

Մեղալների, շքանշանների, կրծքանշանների, դիպլոմների, պատվոգրերի ու շնորհակալագրերի որքան ուզեք, բայց բոլորն էլ իրենց դերը, արժեքն ու նշանակությունն են ունեցել և ունեն խմբավար, ժողովրդական երգերի ՎԱՐՊԵՏ փոխադրող ու մշակող, «Ծաղկեփունջ» կանանց վոկալ անսամբլի հիմնադիր ու անփոփոխ ղեկավար, Աշխատանքային ռեզերվների պետական կոմիտեի ժողովրդական երգի պարի անսամբլի գեղարվեստական ղեկավար, ուսուցչի փրակ, բժշկի փրակ, Հոկտեմբերյանի կուլտուրայի փրակ, Երևանի երաժշտական գիշերօթիկ դպրոցի երգչախմբերի գեղարվեստական ղեկավար ու անփոփոխ խմբավար, Խ.Աբովյանի անվ. հայկական մանկավարժական համալսարանի (ինստիտուտի) խմբավարության ամբիոնի վարիչ, դոցենտ Մեսրոպ Տիգրանի Մեսրոպյանի կյանքում:

Լուսանկարների ընտանեկան ալբոմից ահա մի լուսանկար, կենսախիռն ու ժպտուն պատանեկան աչքերում փայլ ու կայծկլիւրոց, Մ. Մեսրոպյանը, հավայան կիթառը ծնկներին նվագելիս, որի փակ արաբափառ գրության մեջ կարդում ենք- «Նրբին կիթառից եթեր են սփռվում զարնան դյութիչ մեղեդիներ: Դրանք ունկնդրեք Մեսրոպ Մեսրոպյանի կիթառի հնչողությամբ»:

Դամասկոսի ռադիոյի հայկական ռադիոժամի մենակատար, հավայան կիթառահար Մեսրոպ Մեսրոպյանի լուսանկարն է, ով դեռևս Ազգային կրթասիրաց վարժարանի սան, մասնավոր դասեր էր առել ու այն աստիճան վարպետացել կատարողական իր արվեստում, որ դարձել էր Դամասկոսի հայ զաղթօջախի երեկոների, ցերեկոյթների ու բոլոր միջոցառումների սիրտն ու հոգին, դրանց իր հետ

մասնակից դարձնելով նաև ասումնաբող ու երգող՝ Սիրվարդ քույրիկին և հիսունալի փեկոթ Գարեգին եղբորն ու իր սրեղծած էստրադային նվագախմբին:

Աշխարհակործան պատերազմ էր, իսկ կիլիկիացիներ, մաթեմատիկոս, Ազգային կրթասիրաց վարժարանի փեկոթն՝ Տիգրան Մեսրոպյանի և օրսար լեզուների ու դաշնամուրի (երգեհոնի) դասափուր Հռիփսիմե Բալարանյանի որդի, կիթառահար Մ.Մեսրոպյանը ոչ միայն Հայեայի կրթասիրաց վարժարանը գերազանց ավարտած շրջանավարտներից էր, այլև սիրիահայերի սիրտն ու հոգին՝ իր հավայան կիթառի անզուգական հնչյուններով հանդերձ, որոնք արտաբերում էին նրա զգայուն մատները:

Հայեայի հայկական ռադիոժամի մշտական համերգային ծրագրերի խոսնակը հայտարարում էր. «Նրբին կիթառից եթեր են սփռվում զարնան դյութիչ մեղեդիներ: Ունկնդրեք դրանք Մեսրոպ Մեսրոպյանի կիթառով»:

Կարծես աշխարհը մոռացած, երևակայական իր աշխարհում սավառնում էր հայկական ռադիոժամի գործարեղին փանող մանուպարիով, շուր հասնելու և վայրկյան առաջ նրա՝ իր հայրենակից ունկնդիրներին գնալելու կիթառի համար իր փոխադրած հայրենի մեղեդիներով ու պարեղանակներով: Դրա հետ միասին Հայեայի, ապա և Դամասկոսի ոսկերիչներից սովորել ու փորձապետել էր ոսկու վրա փորագրելու նրբին արվեստին այն աստիճան, որ այսօր էլ նրա գործերը դիտելիս թվում է թե դրանք անշեռակերպ են:

Բեյրութում այն ժամանակ փայագրվող «ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՉԱՅՆ» օրաթերթի 1946 թվականի ապրիլի 11-ի 1095 համարի, 3-րդ էջում գեղեղված

ՊԻՍՍԱԿԱՐ

ԵՐԱՇՄՈՒԿԱԿԱՆ ԳԼԹԱՍՏԱՆ 2(37)2010

«Սասունցի Դավիթ» դամասկոսահայ բեմի վրա» վերաբերությամբ գրախոսական-հոդվածում կարդում ենք-

«...Ներկայացումը որոշ չափով սրացած էր օպերայի մը երևույթը, որովհետև գրեթե բոլոր արարներու մեջ, գեղարվեստական ճաշակով պատրաստված երգն ու պարը անպակաս էին:

Բեմի վրա յաջողապես համադրված էին հայրենասիրական բարձր ոգին և արվեստի գեղարվեստական ճաշակը:

[...] Երգի և նվագի բաժինը կազմակերպված էր ընկեր Մեսրոպ Մեսրոպյանի կողմն: Մեսրոպ, հեղափոխիչ, ալ ավելի կզնահարվի դամասկոսահայ գեղարվեստներ հասարակութենեն»:

Մ.Մեսրոպյանի երգ-երաժշտության, նվագելու, ռադիոյութիսիկայի, նկարչության բնագավառներում բնատուր օժտվածությունն ի հայտ եկան դեռևս նախակրթարանում: Բացառիկ լսողություն, պայծառ հիշողություն, ճկուն, զարգացած մկանային համակարգով մարմններ, գողորիկ շեռագրով և նկարելու բարձր ճաշակով էր աչքի ընկնում երիտասարդը: Մեծ ձիրք ուներ նմանակելու իր դաստիարակներին, նմանվել նրանց ամեն լավ գործում, ջանադիր էր միշտ լավն անելու առանձնահատկությամբ, հարկանիչներ, որոնք էլ իրականացին նրա մեջ այդ ճյուղերի զարգացումը:

Մ.Մեսրոպյանը մեկն էր այն հազարավորներից, որ եթե մնային Սիյունքում, ապա նրանց չէր հաջողվելու բացահայտելու և արժևորել նախահամարտոր իրենց տաղանդը, որով իրենք օժտված էին:

1946-ի լայնածավալ ներգաղթը և Մայր Հայրենիք երթը կտրականապես շրջեցին Մեսրոպի և բազում մեսրոպյաների ճակատագիրը:


Մեսրոպ Մեսրոպյանը Հայրենիք ներգաղթելուց հետո ընդունվել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի խմբավարական բաժին: Չորս տարվա դասընթացն ավար-

տել է 3 տարում և 1950թ-ին ընդունվել Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի խմբավարության բաժին՝ աշակերտելով սկզբում Լիդիա Չուգուրյանին, ապա խմբագրային և երգարվեստի անվանական գիտակ, մեծ վարպետ Թաթուլ Ալթունյանին: Ուսանելով նաև դաշնամուր, չայնամշակում, չայնավարություն, ներդաշնակում և բազմաձայնում դասընթացները: Անշուշտ, միաժամանակ, ուսումնառությանը զուգահեռ աշխատելով մայրաքաղաքի հանրակրթական դպրոցներում, որպես երգ-երաժշտության ուսուցիչ և երգչախմբերի ղեկավար: Հանգամանք, որն անչափ օգտակար էր ապագա խմբավարի գործունեության համար:

1955 թվականը Մ.Մեսրոպյանի կյանքում շրջադարձային էր: Պրոֆեսոր Թաթուլ Ալթունյանի առաջին շրջանավարտը գերազանց՝ Կարմիր դիպլոմով ավարտելով կոնսերվատորիայի լրիվ դասընթացը, աշխատանքի հրավիրվեց Երևանի Պիոներների և դպրոցականների պալատ, որպես մանկական երգչախմբի խմբավար և ընդամենը մեկ տարվա քրտնաջան աշխատանքի շնորհիվ, երիտասարդ, բայց արդեն բազմափորձ խմբավարի հմուտ ղեկավարության շնորհիվ մանկական երգչախումբը (120 մանուկ ու պատանի երգիչ)՝ 1956թ-ին Հանրապետական մրցույթում նվաճեց երկրորդ կարգի, իսկ մեկ տարի անց՝ 1957թ-ին Մոսկվայում կայացած աշխարհի ուսանողության և երիտասարդության միջազգային փառատրոնի ընդրական Հանրապետական մրցույթին այս անգամ արդեն Երևանի բժշկի րան նրա ղեկավարած երկսեռ (քառաձայն) երգչախումբն արժանացավ Արծաթե մեդալի և փառատրոնի դափնեկրի կոչման:

Այսպիսի աննախադեպ հաջողություններից հետո էր, որ վարպետի անուն վաստակած խմբավարը հրավիրվեց դասախոսելու Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտը և այսպես էր, որ իր ուսանողներից հավաքագրեց ու 1958թ-ին հիմնադրեց հայկական խմ-

երաժշտական ԴԱՅԱՍՏԱՆ 2(37)2010



Կատարողական արվեստ

բերգային երգեցողության ասպարեզում նախադեպը չունեցող բացառիկ մի խումբ՝ «Ծաղկեփունջ» անվանումով կանանց վոկալ անսամբլ, որի հաղթարշավն արվեստի անդամներում սկսվեց հիմնադրման օրից ի վեր:

Մ.Մեսրոպյանի կյանքում նախապատասխան էր Թիֆլիս այցը: Այսպես էր, որ հանդիպեց իր կյանքի ընկերուհուն՝ Ժենյա (Եվգենյա) Սահակյանին, կյանքով առնչուցուն մի աղջնակի, ով երգում էր ու արտասանում, շրջապարի սիրելին դառնում անմիջապես: Միրահարվեցին ու զգացին, որ այլևս միասին են ապրելու և աշխատելու: Ինչպես ասում են՝ «նմանն զնմանն գրանի», ու երկուսուք որոշեցին իրենց կյանքը համարելու, ապրել ու նաև ուրախանալ, ուրախացնել՝ շրջապարի: Այո, երջանկացրեցին շրջապարին, դրանով իսկ երջանկանալով նաև իրենք: Միրասուն երկու զավակ ունեցան, ծնողների նման շեն ու շնորհքով, օժտված՝ արվեստի ճյուղերով: Գուսարը՝ Հռիփսիմեն, որ հայրիկի գործի շարունակողն է՝ դաշնակահար, իմբավար, երգչուհի, ով այսօր իր արվեստը ներկայացնում է Հայաստանի պետական կամերային երգչախմբի կազմում և ինքն էլ հայրիկի հեղինակը երկուսուք ունենալ է կազմել ու դասական սրբազորությունների հետ միասին կյանքի է կոչում հայրիկի բազմաթիվ մշակումներն ու հեղինակային սրբազորությունները՝ կատարելով ու չայնագրելով դրանք: Որդին՝ Տիգրանը մասնագիտությամբ ինժեներ է, ինչպես և քույրիկը երաժշտական մասնագիտական կրթություն է ստացել, հնարուն փրկապետում է դաշնամուրի, կիթառի կատարողական արվեստին և Հռիփսիմենի նման որոշ դեպքերում ժամանակին նվագակցում էր հայրիկի իմբերին ու ինքն էլ սկսելով մասնակցում դրանց աշխատանքներին, սակայն այսօր, երաժշտական օժտվածությունը մեկ կողմ դրած հնուր գործարար ու կազմակերպիչ է և նաև բարերար:

* * *

Ճշմարտության դեմ չնեղանցելու համար պետք



Մ.Մեսրոպյանը կիթառով իր կազմած նվագախմբի հետ

է նշենք, որ այդ տարիներին կրթական համակարգում և առավել ևս բարձրագույն դպրոցի ասպարեզում հիմնավոր և մեծ նշանակություն էր տրվում ուսանողների մասնագիտական, գեղագիտական, գեղարվեստական դաստիարակությանը, առանց հաշվի առնելու բուհի ուղղվածությունը:

Որպեսզի մանկավարժական ինստիտուտի շրջանավարտը դպրոցում կարողանար նպաստել դպրոցահասակ մանուկների ու պատանիների գեղագիտական դաստիարակության գործին ու արդյունքի հասնել, ինքը պետք է օժտված լիներ կատարողական բարձր ունակություններով, փրկապետը արվեստի որևէ ճյուղի: Ուսանողների կատարողական ուղիները բազմազան էին, որոնցից մեկն էլ գեղարվեստական ինքնագործունեությունն էր: ինքնագործ արվեստի զարգացման համար ինստիտուտում սրբազորված էին բոլոր հնարավորությունները, բարձրացնելու ուսանողների կատարողական վարպետությունը:

Ինստիտուտի «Ծաղկեփունջ» կանանց վոկալ անսամբլի կատարողական վարպետությունը Մեսրոպ Մեսրոպյանի ղեկավարությամբ, այնպիսի բարձրության էր հասել, որ նրանց կատարմամբ շատ երգերի չայնագրություններ, այսօր էլ հեռարձակվում են ոչ միայն Հայաստանի, այլ նաև Մոսկվայի և նախկին Խորհրդային Միության քաղաքների ռադիոկայանների երաժշտական համերգային ծրագրերում:

Այո, Խ.Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի երաժշտախմբերից հարկապես աչքի էր ընկնում «Ծաղկեփունջ» կանանց վոկալ անսամբլը՝ Մ.Մեսրոպյանի ղեկավարությամբ: Իր բազմաթիվ համերգներում նա հանդես էր բերում երաժշտական սրբազորության ընկալման և երաժշտական ու տեքստի բովանդակության բացահայտման արտակարգ բարձր ունակություն:

Հերաքրքրականն այն էր, որ սրբազորման առաջին իսկ օրից (1958թ.) անսամբլը երգչական կատարողական վարպետությամբ էր օժտել շատ ուսանողների, որոնք բուհն ավարտելուց հետո մեկնում էին



«Ծաղկեփունջ» կանանց վոկալ անսամբլը Մ.Մեսրոպյանի ղեկավարությամբ ելույթի ժամանակ

Երաժշտական ԴԱԳՍՍՍՆ 2(37)2010



Մերոյա Մերոյայան
«Երեխաների գեղագիտական դաստիարակության տան մանկական երգչախումբը, 1949թ. Երևան»



Ա.Բ.Խաչատուրյանը Երևանի երիտասարդական առաջին երգչախմբի հետ, 1973թ.

հանրապետության դպրոցներում աշխարհելու՝ իրենց հետք տեսնելով անսամբլում Մ.Մեսրոպյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ստեղծված լավագույն ավանդույթներն ու երգելու և դասավանդելու բարձր արվեստը:

Ամեն տարի ինստիտուտն ավարտում էին վոկալ անսամբլի անդամների որոշակի մասը, անսամբլի կազմը համալրվում էր նոր ուսանողներով, իսկ նրա կազմում երգել ցանկացողների թիվը մեծ էր... մի հանգամանք, որ չէր անհանգստացնում խմբի ղեկավարին՝ Մ.Մեսրոպյանին, ով իր հմտությունը, փորձը, երաժշտական ունակություններն ու օժտվածությունը, կարողությունները անմնացորդ հաղորդում էր ուսանողներին, իր քրտնաջան աշխատանքի շնորհիվ տարեց-տարի ավելի ու ավելի բարձրացնելով ուսանողական վոկալ անսամբլի կարարողական, երգչական արվեստը և բազմազան, բազմաբնույթ ու բազմաժանր դարձնում նրա երգացանկը:

Վոկալ անսամբլի երգացանկում բացի ժողովրդական և հայ կոմպոզիտորների երգերից, ընդգրկված էին այլ ժողովուրդների և դասական կոմպոզիտորների երկեր, որոնք նույն մակարդակով ու վարպետությամբ էին կատարում ուսանող երգչուհիները,

մասնավորապես Մ.Մեսրոպյանի հմուտ խմբավարությամբ:

«Ծաղկեփունջ» ուսանողական վոկալ անսամբլը համերգներով հանդես էր գալիս հանրապետության բազմաթիվ հիմնարկ շենտարկությունների աշխատողների առջև, արժանանալով նրանց բարձր գնահատականին, դրվատանքին ու ծափողջույններին, ինչու չէ նաև ծաղկեփունջերին:

